Ձեռնարկը նախատեսված է ինչպես արդարադատության իրականացման գործընթացում ներգրավված անձանց (մասնավորապես ՀՀ քննչական կոմիտեի քննիչների, ինչպես նաև դատախազների և դատավորների), այնպես էլ այդ թեմայով դասավանդողների համար՝ ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու նպատակով: Այն մշակվել է՝ հաշվի առնելով խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելքի, ազատության և անձեռնմխելիության իրավունքի, արդար դատաքննության իրավունքի և անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ներպետական դատական պրակտիկայում դրա կիրառման հիմնահարցերը:

ARM

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, որոնցից 28-ը միաժամանակ նաև Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիան՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագիր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է անդամ պետությունների կողմից Կոնվենցիայի դրույթների կատարումը:

www.coe.int

Եվրոպական միությունը 28 եվրոպական ժողովրդավարական երկրների տնտեսական և քաղաքական յուրահատուկ գործընկերություն է՝ իր 500 միլիոն քաղաքացիների համար առավել արդար և ապահով աշխարհում խաղաղություն, բարգավաճում և ազատություն ապահովելու նպատակով: Այս ամենն իրագործելու համար ԵՄ երկրները հիմնել են մարմիններ՝ ԵՄ աշխատանքներն իրականացնելու և նրա օրենսդրությունն ընդունելու համար: Նրա հիմնական մարմիններն են Եվրոպական խորհրդարանը (որը ներկայացնում է Եվրոպայի ժողովրդին), Եվրոպական միության խորհուրդը (որը ներկայացնում է ազգային կառավարությունները) և Եվրոպական հանձնաժողովը (որը ներկայացնում է ԵՄ ընդհանուր շահերը):

http://europa.eu

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

Արայիկ Ղազարյան
Ուլյա Յորդաշ

Քրեական գործով քննության ընդհանուր մեթոդաբանությունը

http://eap-pcf-eu.coe.int

Programmatic Cooperation Framework for Armenia, Azerbaijan, Georgia, Republic of Moldova, Ukraine and Belarus

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

Արայիկ Ղազարյան
Ուեյն Յորդաշ

Քրեական գործով քննության ընդհանուր մեթոդաբանությունը

ԵՐԵՎԱՆ 2017

Սույն ձեռնարկը պատրաստվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ «Աջակցություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ» ծրագրի միջոցներով: Սույն ձեռնարկում ներկայացված տեսակետները որևէ ձևով չեն արտահայտում Եվրոպական միության կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները:

© Եվրոպայի խորհուրդ
© Արդարադատության ակադեմիա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ուսումնառության նպատակները 5
ԴԱՍ 1. Ներածություն.....7
1. Եվրոպայի խորհուրդը և ՄԻԵԿ–ը. ներածություն 7
2. Քննության գործընթացում մարդու իրավունքների դերը Հայաստանում. ներածություն 11
ԴԱՍ 2. Քննության ընթացքում կիրառելի նյութական իրավունքները 16
1. Խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելքը 16
2. Ազատության իրավունքը.....23
3. Արդար դատաքննության իրավունքը.....27
4. Անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքը.....32
ԴԱՍ 3. Ապացույցների հավաքումը և հարցաքննությունը.....42
1. Ներածություն 42
2. Ապացույցների հավաքման հնարքները 47
3. Անձի փորձաքննությունը 63
4. Անձնական կյանքը հարգելու պարտավորություններն ապացույցների և տվյալների պահպանման մասերով 69
5. Հարցաքննության անօրինական մեթոդները.....74
ԴԱՍ 4. Մինչդատական կալանքը 83
1. Ներածություն 83
2. Մինչդատական կալանքը թույլատրելը 88
3. Դատավարական երաշխիքները ձերբակալումից կամ կալանավորումից հետո.....104

4. **Կալանավորման պայմանները և վատ վերաբերմունքը կալանքի տակ գտնվելու ընթացքում**.....114
ԴԱՍ 5. Քննության ընթացքում կասկածյալի և մեղադրյալի համար արդար դատաքննության երաշխավորումը.....127
1. Ներածություն 127
2. Քրեական գործով նախնական քննության ողջ գործընթացում կիրառելի ընդհանուր բնույթի երաշխիքները 134
3. Կասկածյալի և մեղադրյալի իրավունքները հարցաքննության ընթացքում 145
4. Ապացույցների հավաքման մեթոդներ, որոնք կարող են խաթարել արդար դատաքննությանը.....157

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Վերապատրաստման սույն մոդուլի նպատակն է Հայաստանում աշխատող քննիչներին լիարժեք պատկերացում և գիտելիքներ հաղորդել քրեական գործով մինչդատական վարույթի ողջ ընթացքում պահպանվելիք՝ մարդու իրավունքների միջազգային և ազգային չափանիշների վերաբերյալ: Վերապատրաստման մոդուլի միջոցով փորձ կարվի ներկայացնելու քրեական գործով քննության համապարփակ այնպիսի մեթոդաբանություն, որը կապահովի մարդու իրավունքների չափանիշների լիարժեք պահպանումը:

Մասնավորապես վերապատրաստման սույն մոդուլը կենտրոնանում է քննության շրջանակում իրավունքների պահպանությունն ապահովող մեթոդաբանության մշակման նպատակով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) դատական նախադեպի կիրառության հարցի շուրջ: Վերապատրաստման սույն մոդուլն ըստ էության նպատակ ունի ապահովելու Հայաստանում աշխատող քննիչների կողմից կիրառվող քննության չափանիշների և մեթոդաբանության համահունչ լինելուն կասկածյալի, մեղադրյալի, վկայի և տուժողի իրավունքներին: Վերապատրաստման մոդուլի առանցքային հարցադրումները վերաբերելու են խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելքին (3–րդ հոդված), ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքին (5–րդ հոդված), արդար դատաքննության իրավունքին (6–րդ հոդված) և անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքին (8–րդ հոդված):

Վերապատրաստման մոդուլի ողջ ընթացքում մասնակիցներին պետք է քաջալերել, որպեսզի նրանք քննարկեն արծարծված հարցերը և առաջ քաշեն իրենց հարցերը դասընթացավարի համար: Մասնավորապես Վերապատրաստման մոդուլի ողջ ընթացքում կան **մասնակցային աշխատանքներ**, որոնք կքաջալերեն մասնակիցների գիտելիքների և կյանքում ունեցած փորձառությունների քննարկումը, ինչպես նաև **դատական նախադեպի օրինակներ**, որոնց միջոցով անհրաժեշտ է մասնակիցների համար ընկալելի դարձնել ՄԻԵԿ–ի կիրառությունը քննության գործնական իրավիճակների նկատմամբ:

Դասընթացի ավարտին սովորողները կիմանան, թե ինչպես պետք է արձանագրել մարդու իրավունքների խախտումները քրեական գործով քննության շրջանակում, և թե ինչ միջոցառումներ պետք է իրականացնել, որպեսզի քննության մեթոդաբանությունը և պրակտիկան բացասաբար չանդրադառնան տուժողների, վկաների, կասկածյալների կամ մեղադրյալների վրա: Մասնավորապես մասնակիցները՝

- ընդհանուր պատկերացում կկազմեն ՄԻԵԿ–ի և ՄԻԵԴ–ի մասին, հատկապես Հայաստանում կատարվող քրեական գործով քննության առնչությամբ,
- կհասկանան քրեական գործով քննության շրջանակում ապացույցների հավաքման հնարավոր ազդեցությունն անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի և խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելքի վրա,
- կհասկանան, թե ինչ երաշխիքներ են անհրաժեշտ, որպեսզի մինչդատական կալանքը համահունչ լինի կասկածյալի և մեղադրյալի ազատության իրավունքին և խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելքին,
- կհասկանան, թե ինչպես կարելի է քննության ընթացքում պաշտպանել կասկածյալի և մեղադրյալի արդար դատաքննության իրավունքները:

ԴԱՍ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում աշխատող քննիչները, որոնց խնդիրը քրեական գործերի մինչդատական փուլի ընթացքում քննության իրականացումն է, կարևորագույն դերակատարում ունեն քրեական արդարադատության համակարգում քրեական գործով համապարփակ և արդյունավետ քննություն կատարելու առումով: Այդ դերակատարումը, սակայն, իր հետ բերում է ողջ գործընթացում մարդու իրավունքների միջազգային և ազգային չափանիշները հարգելու պարտականությունը: Այսպես՝ քրեական գործի քննության ընթացքում ընձեռված միջամտողական լիազորությունները պետք է սահմանափակել և հավասարակշռել տուժողների, վկաների, կասկածյալների և մեղադրյալների իրավունքներին: Մասնավորապես Հայաստանում գործող քննիչները պետք է իրենց աշխատանքը կատարեն Եվրոպայի խորհրդի չափանիշներին, մասնավորապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային (ՄԻԵԿ) համահունչ:

Դասի ավարտին ուսուցանվողները պետք է՝

- լայն պատկերացում կազմեն Եվրոպայի խորհրդի՝ որպես մարդու իրավունքների միջազգային կազմակերպության բնույթի և նպատակի մասին,
- հասկանան ՄԻԵԿ–ի կարևորությունը Հայաստանում աշխատող քննիչների համար,
- ընկալեն քրեական գործի քննության մեթոդաբանության և մարդու իրավունքների հարաբերությունների ազդեցությունը տուժողների, վկաների և կասկածյալների վրա:

1. ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՎ ՄԻԵԿ–Ը. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում քննիչների աշխատանքը կատարվում է Եվրոպայի խորհրդի համատեքստում, և որպես այդպիսին՝ քննիչները պարտավոր են հետևել այս կազմակերպության կողմից կիրառվող չափանիշներին: Մասնավորապես քննիչները՝ որպես պետության ներկայացուցիչ-

ներ, ունեն քրեական արդարադատության գործընթացին մասնակցող անձանց ՄԻԵԿ–ով ընձեռված իրավունքները պաշտպանելու պարտավորություններ և պարտականություններ: Այսպիսով՝ քննիչների կողմից քննության մեջ կիրառվող մեթոդները՝ ներառյալ ապացույցների հավաքումը, խուզարկության և օպերատիվ հետախուզության հնարքները և հարցաքննությունը, պետք է մշտապես համապատասխանեն ՄԻԵԿ–ով նախատեսված տարաբնույթ իրավունքներին:

Եվրոպայի խորհրդին՝ մայրցամաքում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող առաջատար կազմակերպությանը, Հայաստանը միացել է 2001 թ. հունվարի 25–ին: Ներկայումս Եվրոպայի խորհրդի անդամները 47–ն են: Եվրոպայի խորհուրդը ձգտում է համակարգեր ձևավորելու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության և վերահսկման, մարդու իրավունքների նոր սպառնալիքների բացահայտման, այդ իրավունքների կարևորության մասին հանրության իրազեկության բարձրացման և հիմնարար ազատություններին և մարդու արժանապատվությանն առնչվող ոլորտներում կրթությանը և վերապատրաստմանն աջակցելու համար[1]:

Եվրոպայի խորհրդի հիմնական կառույցներն են.

- **Նախարարների կոմիտե.** Խորհրդի որոշումներ կայացնող մարմինն է, որը կազմված է յուրաքանչյուր անդամ պետության արտաքին գործերի նախարարներից կամ Ստրասբուրգում նրանց մշտական դիվանագիտական ներկայացուցիչներից: Նախարարների կոմիտեն որոշումներ է կայացնում Եվրոպայի խորհրդի քաղաքականության վերաբերյալ և հաստատում է վերջինիս բյուջեն ու աշխատանքների ծրագիրը:
- **Խորհրդարանական վեհաժողով (ԵԽԽՎ).** կազմված է 47 անդամ պետությունների 318 պատգամավորներից: Վեհաժողովն է ընտրում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին, Մարդու իրավունքների հանձնակատարին և ՄԻԵԴ–ում դատավորներին:

[1] Renucci J., Introduction to the European Convention on Human Rights: The rights guaranteed and the protection mechanisms (2005 Council of Europe Publishing), p. 5. Available at: http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRFILES/DG2-EN-HRFILES-01(2005).pdf [accessed 7 april, 2016].

ԵԽԽՎ–ն նաև ժողովրդավարական հարթակ է ծառայում բանավեճի և ընտրությունների դիտարկման համար:

- **Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես.** պատասխանատու է տեղական և տարածքային ժողովրդավարության ամրապնդման համար: Կազմված է տեղական և տարածքային ավելի քան 200 000 իշխանությունների 636 ընտրված ներկայացուցիչներից:
- **Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ).** մշտական դատական մարմին, որը բոլոր եվրոպացիների համար երաշխավորում է ՄԻԵԿ–ով երաշխավորված իրավունքները (քննարկվում է ստորև):
- **Մարդու իրավունքների հանձնակատար.** անկախ կարգով անդրադառնում է մարդու իրավունքների խախտումներին և ուշադրություն հրավիրում դրանց վրա: Հանձնակատարն այցելություններ է կատարում՝ օգնելով մարդու իրավունքների պաշտպանության չափանիշների բարձրացմանը Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններում: Նա նաև խորհուրդներ է տալիս և բարձրացնում իրազեկությունը մարդու իրավունքների խնդիրների վերաբերյալ՝ հրապարակելով թեմատիկ փաստաթղթեր և կազմակերպելով միջոցառումներ և աշխատանքային հանդիպումներ:

Կարևոր է նշել, որ յուրաքանչյուր անդամ պետություն՝ ներառյալ Հայաստանը, ստորագրել է Եվրոպայի խորհրդի՝ մարդու իրավունքներին վերաբերող հիմնական պայմանագիրը, մասնավորապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան: ՄԻԵԿ–ը մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող հիմնական օրենսդրական ակտն է Եվրոպայում, որն իր լրացուցիչ արձանագրությունների հետ մեկտեղ ներառում է Անդամ պետությունների կողմից երաշխավորվելիք մարդու իրավունքների համապարփակ ցանկը:

ՄԻԵԿ–ը ստորագրման համար բացվել է 1950 թվականի նոյեմբերի 4–ին և ուժի մեջ է մտել 1953 թ. սեպտեմբերի 3–ին: Այն ամրագրում է այն իրավունքները և ազատությունները, որոնք անդամ պետությունները պարտավորվում են երաշխավորել իրենց իրավազո-

ության ներքո յուրաքանչյուր անձին: ՄԻԵԿ–ի խախտումների համար պատասխանատվությունը վերագրվում է պետություններին՝ ներառյալ տվյալ պետության համապատասխան պետական մարմիններին: ՄԻԵԿ–ի 1–ին հոդվածով նախատեսվում է. «Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի I բաժնում»:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան

ՄԻԵԿ–ի իրագործումը վերահսկվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) կողմից, որը ստեղծվել է 1959 թվականին: ՄԻԵԴ–ը վճիռներ է կայացնում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված քաղաքացիական և քաղաքական իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքներ պարունակող՝ անհատների կամ պետությունների գանգատների հիման վրա: Դատարանը ստեղծումից ի վեր ավելի քան 10 000 վճիռ է կայացրել: Վերջիններս պարտադիր են անդամ պետությունների՝ ներառյալ Հայաստանի համար: Դրանց արդյունքում կառավարությունները փոխել են օրենսդրությունը և պրակտիկան մի շարք ոլորտներում՝ ներառյալ քրեական արդարադատության համակարգում:

Եվրոպայի խորհուրդը ստեղծել է մի շարք այլ գործիքներ, որոնցով Եվրոպայում պաշտպանվում են մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները՝ ներառյալ.

- Եվրոպական (վերանայված) սոցիալական խարտիան (1990 թ.),
- Խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին կոնվենցիան (1992 թ.),
- Ահաբեկչության կանխարգելման մասին կոնվենցիան (2007 թ.),
- Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և պայքարի մասին կոնվենցիան (2011 թ.):

2. ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանք մասնակիցների համար

Մասնակիցները պետք է քննարկեն քրեական գործով քննության ընթացքում քննիչներին վերապահված լիազորությունները:

Մասնավորապես քննիչներն իրավասու են որոշելու, թե արդյոք կատարվել է հանցագործություն, կամ հերքելու մեղադրանքը, տուժող և վկա ճանաչելու, հավաքելու և պահպանելու ցանկացած վերաբերելի ապացույցներ, պարզաբանելու հանցագործության պատճառը, եղանակը և վայրը, ապացուցելու կասկածյալի կամ մեղադրյալի ինքնությունը, համապատասխան դեպքերում ձևակերպելու մեղադրանք ներկայացնելու հիմքերը, արձանագրելու քննությունը և ապացույցները, նախապատրաստելու ապացույցները դատարանում ներկայացման համար և կանխելու տուժողի և այլ անձանց հետագա վիկտիմիզացիան[2]:

Հանցագործության քննությունը հաճախ արդարադատության իրականացման առաջին կարևորագույն քայլն է[3], ուստի այն հիմնարար նշանակություն ունի ժողովրդավարական հասարակության պատշաճ կենսագործունեության համար: Հասարակության բարօրությունը կախված է նաև արդյունավետ քննությունից, քանի որ հանցավորությունը լուրջ անհանգստություն է պատճառում անհատներին և հանրությանը՝ սասանելով սոցիալ–տնտեսական զարգացումը[4]: Որպես հետևանք՝ արդյունավետ, էթիկական և օրինական եղանակով կատարվող քննու-

[2] UNDOC, Handbook on Effective police responses to violence against women, Criminal justice Handbook Series (2010, United Nations: New York), p. 47. Available at: https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/Handbook_on_Effective_police_responses_to_violence_against_women_English.pdf [accessed 7 ապրիլ, 2016].

[3] United Nations (“UN”) Office of the High Commissioner of Human Rights (“OHCHR”), Human Rights and Law Enforcement, A Manual on Human Rights and Training for Police, (1997) Professional Training Series No. 5, p. 60. Available at: http://www.ohchr.org/Documents/Publications/training5en.pdf [accessed 7 ապրիլ, 2016].

[4] UN OHCHRC, Human Rights and Law Enforcement, A Manual on Human Rights and Training for Police, (1997) Professional Training Series No. 5, p. 60.

թյունը հույժ կարևոր բաղադրիչ է քրեական արդարադատության համակարգում[5]:

Թեպետ քննիչները կարևոր դեր ունեն քրեական հետապնդումն ապահովելու հարցում, նրանք պարտավոր են այդ գործառույթը կատարելիս լիովին պահպանել մարդու այն իրավունքները, որոնք վերապահված են կամ վերագրվում են կասկածյալին, մեղադրյալին, տուժողին և վկային: Քննիչներն օժտված են քրեական հանցագործությունների կատարումը քննելու էական լիազորություններով: Հայաստանում քննիչներն իրավունք ունեն զննելու դեպքի վայրը, հարցաքննելու կասկածյալին, մեղադրյալին, տուժողին և վկային, ինչպես նաև նշանակելու փորձաքննություն, անցկացնելու զննում, քննում, կատարելու խուզարկություն և առգրավում, ուսումնասիրելու համապատասխան փաստաթղթերը և հանձնարարություններ տալու քննության այլ մարմինների (օրինակ՝ հետաքննության մարմնին)՝ ներառյալ կասկածյալներին դատարան բերելու և հանցագործության մեջ կասկածվող անձանց ձերբակալելու և կալանավորելու առնչությամբ[6]:

Հանցագործությունը քննելու նպատակն է ապացույցներ հավաքել, պարզել հանցանքը կատարելու մեջ կասկածվող անձի ինքնությունը և դատարանին ապացույցներ ներկայացնել՝ մեղքը կամ անմեղությունը հաստատելու համար[7]: Որպեսզի հանցագործության քննությունը համապատասխանի էթիկական սկզբունքներին և մարդու իրավունքների չափանիշներին, անհրաժեշտ է, որ քննիչները հարգեն մարդու արժանապատվությունն ու մարդու իրավունքները և կատարեն օրենքների պահանջները[8]: Արդյունավետ և բազմակողմանի քննություն իրականացնելու պարտականությունը որպես այդպիսին անհրաժեշտ է հավասարակշռել տուժողների, վկաների, կասկածյալների և մեղադրյալների իրավունքներին:

---

[5] UN OHCHRC, Human Rights and Law Enforcement, A Manual on Human Rights and Training for Police, (1997) Professional Training Series No. 5, p. 60.

[6] Criminal Procedure Code of the Republic of Armenia, Article 55(4).

[7] UN OHCHRC, Human Rights and Law Enforcement, A Manual on Human Rights and Training for Police, (1997) Professional Training Series No. 5, p. 60.

[8] UN OHCHRC, Human Rights and Law Enforcement, A Manual on Human Rights and Training for Police, (1997) Professional Training Series No. 5, p. 60.

Աշխատանք մասնակիցների համար

Մասնակիցները պետք է քննարկեն, թե քննության որ տարրերն են իրենք համարում հաջողված պրակտիկա: Դասընթացավարը կարող է հղում անել հետևյալին.

Որպես կանոն՝ արդյունավետ է այն քննությունը, որի շրջանակում քննիչը.

- գործել է արհեստավարժ, անկողմնակալ և օբյեկտիվ,
- ջանասիրաբար հավաքել է ապացույցները և ցուցմունքները,
- բոլոր մասնակիցներին մշտապես վերաբերվել է հարգանքով և արժանապատվությամբ,
- եթե տեղի է ունեցել իրավախախտում, հայտնաբերել է մեղավորին/մեղավորներին և բավարար ապացույցներ է հավաքել մեղադրանքի՝ դատարանում ապացուցման համար,
- քայլեր է ձեռնարկել բոլոր մասնակիցների անվտանգության կարիքները հոգալու ուղղությամբ:

Հայաստանում քննիչներին վերապահված պարտականությունները և լիազորություններն անհրաժեշտ են հանցավոր վարքագիծը հայտնաբերելու, կանխելու և պատժելու համար, սակայն դրանք միևնույն ժամանակ նաև խիստ միջամտողական են: Քննիչներին վերապահված մեծածավալ և միջամտողական լիազորություններն իրականացնելիս պետք է հաշվի առնել համահունչ պարտավորությունները: Որպեսզի հանցագործության քննությունը համապատասխանի միջազգայնորեն ճանաչված սկզբունքներին, պետք է օպտիմալ կերպով հարգված լինեն մարդու արժանապատվությունը և մարդու իրավունքները[9]: Ավելին՝ ժողովրդավարական հասարակությունում հանցագործության քննությունը ենթադրում է քննիչների պատասխանատու և համայնքի նկատմամբ արձագանքողական գործելակերպ[10]:

ՄԻԵԿ–ի բուն էությունն այն է, որ հանցագործությունները կանխելու

[9] UN OHCHRC, Human Rights and Law Enforcement, A Manual on Human Rights and Training for Police, (1997) Professional Training Series No. 5, p. 60.

[10] UN OHCHRC, Human Rights and Law Enforcement, A Manual on Human Rights and Training for Police, (1997) Professional Training Series No. 5, p. 60.

և քննելու պետական իրավասությունը հավասարակշռվի մարդու իրավունքների հետ, որպեսզի քննիչները կամայականորեն չիրականացնեն իրենց լիազորությունները[11]:

Քննիչները պետք է իրենց գործունեության մեջ լիովին հաշվի առնեն կասկածյալների, մեղադրյալների, տուժողների և վկաների իրավունքներին վերաբերող և վերագրվող իրավունքները՝ ներառյալ խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելքը, անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքը, ազատության իրավունքը և արդար դատաքննության իրավունքը:



Ինչպես նշվեց, այդ իրավունքները տեղ են գտել ՄԻԵԿ–ում, ուստի կիրառելի են Հայաստանում քննիչների կողմից կատարվող աշխատանքներում: Այնուհանդերձ, թեպետ Վերապատրաստման սույն մոդուլը հիմնականում վերաբերում է ՄԻԵԿ–ում ներառված իրավունքներին, քննիչները գործում են նաև մարդու իրավունքների միջազգային չափանիշների լայն համակարգում, որը պարունակում է ՄԻԵԿ–ում ամրագրվածներին նման իրավունքներ: Մասնավորապես քննիչները

[11] J Murdoch, & R Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers, (2013 Council of Europe Publishing), p. 42. Available at: http://www.coe.int/t/dghl/cooperation/capacitybuilding/source/documentation/europeanconventionhandbookforpolice.pdf, [accessed 17 December 2015].

պետք է հաշվի առնեն Մարդու իրավունքների միջազգային բիլում պարունակվող իրավունքներն ամբողջությամբ, որը, ի թիվս այլ փաստաթղթերի, ներառում է.

- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948 թ.),
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966 թ.),
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966 թ.):

Դասին առնչվող գրականություն

Ձեռնարկներ և գիտագործնական մեկնաբանություններ

- Ղազինյան Գ., Դիլբանդյան Ս., Ղուկասյան Հ., Հարությունյան Ա., Մելքոնյան Դ., Թաթոյան Ա., Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական չափանիշների կիրառումը ՀՀ քրեական դատավարությունում, Մենագրություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2010:
- Էլիսթեր Մոուբրեյ, «Գործեր և նյութեր, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա», 2010 թ., էջ 1–10:

Իրավական ակտեր

- ՀՀ Սահմանադրություն
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
- ՄԻԵԿ և կից արձանագրություններ
- Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիա

Դատական ակտեր

- Սահմանադրական դատարանի ՍԴՈ–350 որոշում

ԴԱՍ 2. ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԻՐԱՌԵԼԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Այս դասի նպատակն է մասնակիցներին ներկայացնել Հայաստանում իրականացվող քրեական գործի քննության նկատմամբ կիրառելի հիմնարար միջազգային չափանիշները: Այս դասի շրջանակում ամփոփ կներկայացվեն նյութական իրավունքները՝ կենտրոնանալով ՄԻԵԿ–ի և ՄԻԵԴ–ի դատական նախադեպի ուղղությամբ: Այս դասը պարարտ հող կստեղծի հաջորդ դասի շրջանակում քննության մեթոդաբանության մանրակրկիտ ուսումնասիրության համար:

Դասի ավարտին մասնակիցները պետք է՝

- գիտելիքներ ձեռք բերեն այն նյութական իրավունքների վերաբերյալ, որոնք ազդում են քրեական գործի քննության մեթոդաբանության վրա,
- հասկանան, թե ինչպես են նյութական իրավունքները կիրառվել և մեկնաբանվել ՄԻԵԴ–ի կողմից,
- հասկանան, թե ինչպես կարող է քննությունն ազդել վկաների, կասկածյալների, մեղադրյալների և տուժողների իրավունքների վրա:

1. ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԿԱՄ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ՆՎԱՍՏԱՑՈՒՑԻՉ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՄ ՊԱՏԺԻ ԱՐԳԵԼՔԸ

Հոդված 3

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի:

Խոշտանգման արգելքից բացառություններ կատարել չի թույլատրվում, այսինքն՝ խոշտանգումը կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքը թույլատրելի չէ որևէ հանգամանքում կամ որևէ ենթադրյալ հանրային շահի համար՝ ներառյալ ահաբեկչության դեմ պայքարը կամ որևէ անձի կյանքը փրկելը: Կոնվենցիայի 3–րդ հոդվածով

ամրագրված իրավունքից շեղումներ չեն թույլատրվում ՄԻԵԿ–ի 15–րդ հոդվածի համաձայն, այսինքն՝ այն չի կարող կասեցվել կամ սահմանափակվել հանրային արտակարգ իրավիճակների ժամանակ (*Aksoy–ն ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 18 դեկտեմբեր, 1996), պարբ. 62): Ավելին՝ արգելքը գործում է՝ «անկախ տուժողի վարքագծից» (*Ireland–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 18 հունվար, 1978), պարբ. 163 և 167): ՀՀ Սահմանադրությամբ խոշտանգումների արգելքը սահմանված է 26–րդ հոդվածի 1–ին մասում, համաձայն որի՝ «ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի»:

Աշխատանք մասնակիցների համար

Դասընթացավարը պետք է մասնակիցներին հարցնի, թե արդյոք վերջիններս կարող են նշել խոշտանգման արգելքին առնչվող երեք պարտավորություններ, այսինքն՝ խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելքի՝ պետության կողմից խախտման երեք հնարավոր դրսևորումները: Դրանք են.

I. Խոշտանգման գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալու պարտավորությունը՝ նեգատիվ պարտավորությունը.

II. Այնպիսի միջոցառումներ իրականացնելու պոզիտիվ պարտավորությունը, որով իրենց իրավազորության ներքո գտնվող անձանց համար կապահովեն խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի բացառումը.

III. Խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի վերաբերյալ բողոքները քննելու պարտավորությունը:



Նախ և առաջ, պետությունները նեգատիվ պարտավորություն ունեն՝ ձեռնպահ մնալու խոշտանգման և 3–րդ հոդվածով նախատեսված վատ վերաբերմունքի այլ գործողություններից: Նրանք պատասխանատու են բոլոր հանրային պաշտոնյաների՝ ներառյալ ոստիկանների և անվտանգության ուժերում ծառայողների, ինչպես նաև քննիչների գործողությունների համար (*Ireland–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 18 հունվար, 1978), պարբ. 159):

Երկրորդ՝ ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածի համաձայն՝ պետությունը նաև 1–ին հոդվածով նախատեսված իր պարտավորությունից (…իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի I բաժնում…) բխող պոզիտիվ պարտավորություն ունի: Դատարանը պարզաբանել է, որ պետությունները պարտավոր են ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնց միջոցով կապահովեն, որ իրենց իրավազորության ներքո գտնվող անձինք չենթարկվեն խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի՝ ներառյալ մասնավոր անձանց կողմից կատարվող վատ վերաբերմունքը (*Z–ը և այլք ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 10 մայիս, 2001), պարբ. 73):

Եվ վերջապես՝ խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի՝ 3–րդ հոդվածով նախատեսված արգելքից բխում է, որ պետությունները պարտավոր են արդյունավետ քննություն կատարել այն դեպքերում, երբ ան-

ձինք պնդում են, թե վատ վերաբերմունքի են ենթարկվել հանրային պաշտոնյաների կողմից: Դատարանը մի շարք գործերով, այդ թվում՝ *Assenov–ն ընդդ. Բուլղարիայի* գործով, նշել է, որ այն դեպքում, երբ անձը փաստարկելի պնդում է ներկայացնում այն մասին, որ անօրինական կերպով և 3–րդ հոդվածի խախտմամբ վատ վերաբերմունքի ծանր դրսևորումների է ենթարկվել ոստիկանության կամ պետության այլ ներկայացուցիչների կողմից, ապա այդ դրույթը՝ «...Կոնվենցիայով նախատեսված իրավունքները և ազատությունները ... իր իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար ... երաշխավորելու»՝ 1–ին հոդվածով նախատեսված պետության ընդհանուր պարտավորության հետ միասին ընթերցելու դեպքում ենթադրում է, որ պետք է տեղի ունենա արդյունավետ պաշտոնական քննություն» (*Assenov–ն ընդդ. Բուլղարիայի* (վճիռ՝ 28 հոկտեմբեր, 1998), պարբ. 102):

Հստակորեն սահմանազատված են «խոշտանգում» և «անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք» եզրույթները, որը վկայում է այն մասին, որ խոշտանգմանը հատուկ խարան է վերագրվում՝ որպես դիտավորյալ վարվեցողության, որը պատճառում է շատ ծանր և դաժան տառապանք: Յուրաքանչյուրի բաղադրիչները կքննարկվեն ստորև:

Ա. Խոշտանգում

Աշխատանք մասնակիցների համար

Դասընթացավարը պետք է լսարանին հարցնի, թե որ գործողություններն են համարում խոշտանգում, և քաջալերի քննարկելու իրական կյանքից իրավիճակներ, որոնցում հնարավոր է խոշտանգումը:

ՄԻԵԴ–ը հստակորեն չի տվել խոշտանգման սահմանումը: Այնուամենայնիվ, դատարանը մասամբ հաստատել է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ պայքարի մասին ՄԱԿ–ի 1987 թվականի կոնվենցիայով նախատեսված սահմանումը (*Salman–ն ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 27 հունիս, 2000), պարբ. 114):

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ պայքարի մասին ՄԱԿ–ի 1987 թվականի կոնվենցիան

Հոդված 1

1. […] «խոշտանգում» եզրույթը նշանակում է ցանկացած գործողություն, որով անձին *դիտավորյալ* պատճառվում է ֆիզիկական կամ հոգեկան *ծանր ցավ* կամ *տառապանք*՝ նպատակ հետապնդելով, մասնավորապես, նրանից կամ երրորդ անձից ստանալ տեղեկություններ կամ խոստովանություն, պատժել նրան որևէ գործողության համար, որը կատարել կամ որի կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ ահաբեկել կամ հարկադրել նրան կամ երրորդ անձի, որևէ տեսակի խտրականության վրա հիմնված որևէ պատճառով…

ՀՀ քրեական օրենսգրքում խոշտանգումը սահմանված է նույնանման ձևակերպումով.

Հոդված 3091

«1. Պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով…»:

Այսպիսով՝ խոշտանգում արձանագրելու համար պետք է գոյություն ունենան հետևյալ երեք տարրերը.



Խոշտանգում արձանագրելու համար կիրառվող՝ ծանր ցավ կամ տառապանք պատճառելու չափանիշը ներառում է թե՛ սուբյեկտիվ, թե՛ օբյեկտիվ տարրեր: Դատարանը նշել է, որ խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի միջև տարբերակումը պետք է կատարել՝ ելնելով «պատճառված տառապանքի ծանրության աստիճանի տարբերությունից» (*Ireland–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 18 հունվար, 1978), պարբ. 67), որը կարելի է չափել՝ հաշվի առնելով տևողությունը, ֆիզիկական և հոգեկան հետևանքները, իսկ որոշ դեպքերում՝ տուժողի սեռը, տարիքը և առողջական վիճակը (*Bati–ն և այլք ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 3 հունիս, 2004), պարբ. 120):

Խոշտանգումը նաև բնութագրվում է որպես վատ վերաբերմունքի դիտավորյալ ձև: *Aksoy–ն ընդդ. Թուրքիայի* գործով ՄԻԵԴ–ը հաշվի առավ *Ireland–ն ընդդ. ՄԹ–ի* վճիռը, որում նշվել էր, որ խոշտանգման առանձնահատուկ խարանը վերաբերում է դիտավորյալ անմարդկային վերաբերմունքին, որը շատ ծանր և դաժան տառապանք է պատճառում: ՄԻԵԴ–ը նաև արձանագրել է, որ գանգատաբերին պատճառված անմարդկային վերաբերմունքը «կարող էր միայն դիտավորությամբ պատճառված լինել», քանի որ «այն ի կատար ածելու համար կպահանջվեին որոշակի նախապատրաստական աշխատանքներ և ջանքեր» (*Aksoy–ն ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 18 դեկտեմբեր, 1996), պարբ. 63 և 64):

Դատարանն առանձնացրել է նաև խոշտանգման նպատակային տարրը: *Salman–ն ընդդ. Թուրքիայի* գործով ՄԻԵԴ–ը համարեց, որ

ցավը դիտավորյալ պատճառելու պահանջից զատ՝ գոյություն ունի նաև «նպատակի տարր, որը նախատեսված է Խոշտանգման դեմ պայքարի ՄԱԿ–ի կոնվենցիայով..., որի համաձայն՝ խոշտանգման սահմանումը ներառում է դիտավորյալ ծանր ցավ կամ տառապանք պատճառելը, որի նպատակն է, ի թիվս այլոց, տեղեկություններ ստանալը, պատիժ ի կատար ածելը կամ ահաբեկելը»: Ուստի ՄԻԵԴ–ը համարեց, որ «հաշվի առնելով վատ վերաբերմունքի բնույթը և աստիճանը (*ֆալաքա* և հարված կրծքավանդակին), ինչպես նաև ապացույցներից բխող այն բավականին համոզիչ մտահանգումներն առ այն, որ դա տեղի է ունեցել հարցաքննության ընթացքում», դատարանը գտավ, որ այն ներառել է շատ ծանր դաժան տառապանք, որը կարող է բնորոշվել որպես խոշտանգում (*Salman–ն ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 27 հունիս, 2000), պարբ. 114–115):

Բ. Անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքը կամ պատիժը

Վատ վերաբերմունքի այն դրսևորումները, որոնք խոշտանգման աստիճանին չեն հասնում, քանի որ չունեն բավարար ծանրություն, դիտավորություն կամ նպատակ, արգելված են որպես անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք: ՄԻԵԴ–ը վճռել է, որ վերաբերմունքն «անմարդկային» է, քանի որ այն, ի թիվս այլ հանգամանքների, եղել է կանխամտածված, կիրառվել է միանգամից մի քանի ժամ տևողությամբ և պատճառել է կա՛մ փաստացի մարմնական վնասվածքներ, կա՛մ լուրջ ֆիզիկական և հոգեկան տառապանք: Անմարդկային վերաբերմունքի բազմաթիվ դեպքեր են տեղի ունենում ազատազրկման համատեքստում, երբ տուժողները ենթարկվել են վատ վերաբերմունքի, որը ծանր է եղել, սակայն չի ունեցել ծանրության այն աստիճանը, որպեսզի համարվի խոշտանգում[12]:

«Նվաստացուցիչ» վերաբերմունքն այն վերաբերմունքն է, որը պատճառում է վախի, տառապանքի և ստորակարգության զգացումներ,

[12] A. Reidy, The Prohibition of Torture: A Guide to the Implementation of Article 3 of the European Convention on Human Rights, Human Rights Handbook, No. 6, (2003 Council of Europe), p. 16. Available at: http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-06(2003).pdf [accessed 7 ապրիլ, 2016].

որոնք ի զորու են նվաստացնելու և ստորացնելու տուժողին[13]: Որպես նվաստացուցիչ է նկարագրվել նաև այն վերաբերմունքը, որը հանգեցնում է տուժողի ֆիզիկական կամ բարոյական դիմադրությունը կոտրելուն (*Ireland–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 18 հունվար, 1998) պարբ. 167) կամ տուժողին հասցնում է նրան, որպեսզի տուժողը գործի սեփական կամքին կամ խղճին հակառակ (Հանձնաժողովի եզրակացությունները *Greek* գործի վերաբերյալ, Chapter IV, p. 186):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ՀՀ–ի դեմ կայացրել է մի շարք վճիռներ, որոնցում սահմանել է Կոնվենցիայի 3–րդ հոդվածի խախտում, և որոնք վերաբերել են տարբեր փաստական հանգամանքների, ինչպիսին են բերման ենթարկված, ձերբակալված կամ կալանավորված անձի խոշտանգում ոստիկանների կողմից կամ կալանավայրում (*Միշա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 36549/03: *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի,* թիվ 9935/06 և 23339/06), կալանավայրի անմարդկային ու նվաստացուցիչ պայմաններ (*Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 31237/03), անհրաժեշտ ու մասնագիտական բժշկական խնամքի ու բուժման չտրամադրում կալանավայրում (*Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 34334/04), դատաքննության ընթացքում անձին ճաղավանդակի մեջ պահելը և այդպիսով նրան նվաստացուցիչ վերաբերմունքի ենթարկելը (*Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի,* թիվ 33376/07):

2. ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հոդված 5. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

[13] A. Reidy, The Prohibition of Torture: A Guide to the Implementation of Article 3 of the European Convention on Human Rights, Human Rights Handbook, No. 6, (2003 Council of Europe), p. 16.

1. Անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար:

2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

3. Սույն հոդվածի 1–ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան՝ ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման:

ՀՀ Սահմանադրությամբ այս իրավունքն ամրագրված է 27–րդ հոդվածում, որի տեքստը նման է վերը նշված տեքստի բովանդակությանը:

Ազատության և անձեռնմխելիության իրավունքի նպատակն է պաշտպանել անձի ֆիզիկական ազատությունը կամայական կամ անօրինական ձերբակալությունից կամ կալանավորումից (*Engel–ը և այլք ընդդ. Նիդերլանդների* (վճիռ՝ 8 հունիս, 1976), պարբ. 57). ամփոփ՝ ոչ ոքի չի կարելի կամայականորեն զրկել իր ազատությունից (*տես, օրինակ՝ Guzzardi–ն ընդդ. Իտալիայի* (վճիռ՝ 6 նոյեմբեր, 1980), պարբ. 92):



Եթե ազատությունից զրկելը թույլատրելի է, օրինակ՝ կատարվում է այն անձի օրինական ձերբակալությունը կամ կալանավորումը, ում նկատմամբ առկա է հանցանք կատարած լինելու ողջամիտ կասկած (5–րդ հոդվածի (1) (գ) մաս), ազատությունից զրկելը պետք է տեղի ունենա օրենքով սահմանված կարգով և լինի օրինական, որից բխում է, որ միջոցառումները պետք է համահունչ լինեն ներպետական օրենսդրությանը (*տե՛ս, օրինակ՝ Winterwerp–ն ընդդ. Նիդերլանդների* (վճիռ՝ 24 հոկտեմբեր, 1979), պարբ. 6, *Engel–ը և այլք ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 8 հունիս, 1976), պարբ. 68), որն իր հերթին պետք է համապատասխանի ՄԻԵԿ–ին (*Winterwerp–ն ընդդ. Նիդերլանդների* (վճիռ՝ 24 հոկտեմբեր, 1979), պարբ. 45): Ավելին՝ ազատությունից զրկելը պետք է ուղղված լինի հրատապ սոցիալական կարիքին՝ միևնույն ժամանակ համաչափ մնալով հետապնդվող իրավաչափ նպատակին:

Աշխատանք մասնակիցների համար

Դասընթացավարը մասնակիցներին խնդրում է հակիրճ քննարկել այն հանգամանքները, որոնցում իրենց՝ որպես քննիչների աշխատանքը կարող է ազդեցություն ունենալ ազատության իրավունքի վրա:

Մինչդատական կալանքը 5–րդ հոդվածի (1) (գ) մասի համաձայն թույլատրված է, եթե դրա նպատակն է տվյալ անձին ներկայացնել իրավասու մարմնի առջև: Այս դրույթի համաձայն՝ նախատեսվում են երեք՝ միմյանցից առանձին պայմաններ (*Ireland–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 18 հունվար, 1978), պարբ. 196), մասնավորապես.

1. Պետք է գոյություն ունենա ողջամիտ կասկած առ այն, որ տվյալ անձը կատարել է հանցագործություն (Fox–ը, Campbell–ը և Hartley–ն ընդդ. Միացյալ Թագավորության (վճիռ՝ 20 օգոստոս, 1990), պարբ. 1 և 34).

2. Դա պետք է ողջամտորեն անհրաժեշտ համարվի նրա կողմից հանցանքի կատարումը կանխելու համար, կամ.

3. Դա անհրաժեշտ է հանցանք կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար:

ՀՀ Սահմանադրությամբ այս իրավունքն ամրագրված է 27–րդ հոդվածի 1–ին մասի 4–րդ կետում. «1… Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում…. 4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով»:

Միջոցը պետք է ձեռնարկեն քրեական գործերի առնչությամբ, և էական չէ, թե ինչպիսին է վարույթի արդյունքը. վերջիվերջո կարող է պարզվել, որ ձեռք բերված ապացույցները բավարար չեն, թեպետ ձերբակալությունը կամ կալանավորումը կարող էին իրավաչափորեն անհրաժեշտ եղած լինել տվյալ գործի հանգամանքներում (*Brogan–ը և այլք ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 29 նոյեմբեր, 1988), պարբ. 53)[14]:

5–րդ հոդվածի (2)–րդից (5)–րդ մասերով նույնպես նախատեսվում են երաշխիքներ ազատությունից զրկված անձանց համար՝ ներառյալ տեղեկացված լինելու իրավունքը, անհապաղ դատավորի կամ այլ պաշտո-

[14] Renucci J., Introduction to the European Convention on Human Rights: The rights guaranteed and the protection mechanisms (2005 Council of Europe Publishing), p. 60.

նատար անձի մոտ տարվելու իրավունքը, ողջամիտ ժամկետում դատվելու կամ ազատ արձակվելու իրավունքը, իր կալանավորման օրինականության՝ դատարանի կողմից արագ կարգով որոշման նպատակով վարույթ ձեռնարկելու իրավունքը և փոխհատուցման իրավունքը: Նույնանման երաշխիքներ սահմանված են նաև ՀՀ Սահմանադրության 27–րդ հոդվածի 2–6–րդ մասերում:

3. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հոդված 6. Արդար դատաքննության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացվում է քրեական մեղադրանք, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդար և հրապարակային դատաքննության իրավունք: Վճիռ հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի անձնական կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով:

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ. պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

ե. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

ՀՀ Սահմանադրությամբ արդար դատաքննության իրավունքը սահմանված է 63–րդ հոդվածում, համաձայն որի՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդար, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք… Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է»:*

Արդար դատաքննության իրավունքը երաշխավորում է կասկածյալի իրավունքները քրեական արդարադատության դատավարության ողջ ընթացքում: Համարվում է, որ այն կիրառելի է նաև քրեական գործով կասկածյալի բուն դատական քննությունից առաջ[15]. արդար դատաքննության իրավունքը, ուստի դիտարկվում է քրեական գործով մինչդատական վարույթի ողջ ընթացքում ևս:

Աշխատանք մասնակիցների համար

Դասընթացավարը մասնակիցներին հարցնում է նրանց կարծիքն այն մասին, թե իրենց՝ որպես քննիչների աշխատանքն ինչպես կարող է ազդել կասկածյալների արդար դատաքննության իրավունքի վրա:

[15] Renucci J., Introduction to the European Convention on Human Rights: The rights guaranteed and the protection mechanisms (2005 Council of Europe Publishing), p. 71.

Ինչ վերաբերում է 6–րդ հոդվածի շրջանակին, ապա «քրեական մեղադրանքը» սահմանվել է որպես «իրավասու մարմնի կողմից անհատին տրվող պաշտոնական ծանուցումն այն մասին, որ նա մեղադրվում է քրեական հանցանք կատարելու մեջ», և այս սահմանումը համապատասխանում է նաև այն չափանիշին, որ «կասկածյալի կարգավիճակը կրել է զգալի ազդեցություն» (*տես, օրինակ՝ Deweer–ն ընդդ. Բելգիայի* (վճիռ՝ 27 փետրվար, 1980), պարբ. 42 և 46, և *Eckle–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 15 հուլիս, 1982), պարբ. 73): Նույնանման մեկնաբանություն է տվել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը անձին բերման ենթարկելու ինստիտուտի առնչությամբ, համաձայն որի՝ *«անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա»* (ՀՀ վճռաբեկ դատարանի 18.12.2008 թ. որոշումը Գագիկ Միքայելյանի գործով): Սույն որոշման մեջ Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ անձին հարկադրաբար ոստիկանություն տանելը և նրան այնտեղ պահելը ինքնին *ipso facto* համարվում է մեղադրանքի առաջադրում՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք նրան *de jure* տրվել է ձերբակալվածի կամ կալանավորվածի դատավարական կարգավիճակ: Կոնվենցիայի 6–րդ հոդվածի քրեական բաղադրիչի կիրառելիության գնահատման ելակետը հիմնված է *Engel–ը և այլք ընդդ. Նիդերլանդների* գործով սահմանված հետևյալ չափանիշների վրա. 1. ներպետական օրենսդրությամբ նախատեսված դասակարգումը, 2. հանցագործության բնույթը, 3. տվյալ անձի նկատմամբ նշանակվելիք հնարավոր պատժի ծանրությունը (*Engel–ը և այլք ընդդ. Նիդերլանդների* (վճիռ՝ 8 հունիս, 1976), պարբ. 82–83):

Արդար դատաքննության իրավունքի շրջանակում ընձեռվող երաշխիքները



6–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսվում են դատավարական մի քանի երաշխիքներ: Այդ ընդհանուր երաշխիքները ներառում են դատարանի հասանելիության իրավունքը և դատավարական պահանջներ՝ ներառյալ կողմերի հավասարությունը, ինչպես նաև դատական որոշումների պատճառաբանության պահանջը: Քրեական վարույթի քննության փուլի համար առանձնակի նշանակություն ունի լռություն պահպանելու և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը (*Funke–ն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 25 փետրվար, 1993), պարբ. 44): Այս իրավունքից բխում է, որ քրեական գործի շրջանակում մեղադրողը պետք է ձգտի ապացուցելու մեղադրանքը՝ չկիրառելով այնպիսի ապացույցներ, որոնք ստացվել են հարկադրանքի մեթոդներով կամ մեղադրյալի կամքին հակառակ գործադրված ճնշումներով (*Saunders–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 17 դեկտեմբեր, 1996), պարբ. 68, *տես նաև Bykov–ն ընդդ. Ռուսաստանի* (Մեծ պալատի վճիռ՝ 10 մարտ, 2009), պարբ. 92):

Վաղ շրջանում փաստաբան ունենալը նույնպես դատավարական կարևոր երաշխիք է. փաստաբան ունենալու հնարավորությունը, որպես կանոն, պետք է ապահովել ոստիկանության կողմից կասկածյալի առաջին հարցաքննությունից, բացառությամբ, երբ յուրաքանչյուր գործի կոնկրետ հանգամանքների լույսի ներքո հիմնավորվում է, որ ծանրակշիռ պատճառներ կան այդ իրավունքը սահմանափակելու համար

(*Salduz–ն ընդդ. Թուրքիայի* (Մեծ պալատի վճիռ՝ 27 նոյեմբեր, 2008), պարբ. 54–55): 6–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսվում է նաև, որ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում դատական քննության իրավունք, ընդ որում՝ այդ ժամկետի հաշվարկը սկսվում է անձին մեղադրանք ներկայացնելու օրվանից:

6–րդ հոդվածի 2–րդ մասով նախատեսվում է այն երաշխիքը, որի համաձայն՝ քրեական հանցագործության մեջ մեղադրվող բոլոր անձինք պետք է համարվեն անմեղ, քանի դեռ ապացուցված չէ նրանց մեղքը: 6–րդ հոդվածի 3–րդ մասով նախատեսվում են մի շարք կոնկրետ երաշխիքներ, որոնք պետք է ընձեռել քրեական հանցագործության մեջ մեղադրվող բոլոր անձանց՝ արդար դատաքննությունն ապահովելու նպատակով: Այդ երաշխիքները համառոտ բացատրված են ստորև.

- **6–րդ հոդվածի (3) (ա) մաս.** քրեական գործերով մեղադրյալին ներկայացվող մեղադրանքի մասին լիարժեք և մանրակրկիտ տեղեկությունների տրամադրումը, ուստի նաև տվյալ գործով դատարանի կողմից ընդունվող իրավական որակումն արդար վարույթի ապահովման կարևորագույն նախադրյալներ են:
- **6–րդ հոդվածի (3) (բ) մաս.** վերաբերում է պատշաճ պաշտպանության երկու տարրերին, մասնավորապես ժամանակի և հնարավորությունների հարցերին: Այս դրույթից բխում է, որ մեղադրյալի անունից իրականացվող բուն պաշտպանական գործունեությունը կարող է ներառել այն ամենը, ինչ «անհրաժեշտ» է դատական քննության նախապատրաստվելու համար: Մեղադրյալը պետք է հնարավորություն ունենա կազմակերպելու իր պաշտպանությունը պատշաճ կերպով և առանց սահմանափակման կարողանա գործը քննող դատարանին ներկայացնել պաշտպանական բոլոր վերաբերելի փաստարկները և այդ կերպ ազդել վարույթի ելքի վրա (Can–ն ընդդ. Ավստրիայի (վճիռ՝ 20 սեպտեմբեր, 1985), պարբ. 53, Gregačević–ն ընդդ. Խորվաթիայի (վճիռ՝ 10 հուլիս, 2010), պարբ. 51):
- **6–րդ հոդվածի (3) (գ) մաս.** երաշխավորում է, որ մեղադրյալի նկատմամբ վարույթը տեղի չի ունենա առանց պաշտպանության

կողմի փաստարկների համարժեք ներկայացվածության (Pakelli–ն ընդդ. Գերմանիայի (վճիռ՝ 24 ապրիլ, 1983), պարբ. 84): Այն բաղկացած է երեք առանձին իրավունքներից՝ անձամբ իրեն պաշտպանելու իրավունքից, իր ընտրած դատապաշտպանների միջոցով իրեն պաշտպանելու իրավունքից և որոշակի պայմաններում անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից (Pakelli–ն ընդդ. Գերմանիայի (վճիռ՝ 24 ապրիլ, 1983), պարբ. 31): Տե՛ս նաև Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 9935/06 և 23339/06):

- **6–րդ հոդվածի (3) (դ) մաս.** նախքան մեղադրյալի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելը պետք է, որպես կանոն, նրա ներկայությամբ, հրապարակային դատական նիստում մրցակցային վիճաբանության ապահովման նպատակով ներկայացվեն նրա դեմ գոյություն ունեցող բոլոր ապացույցները (Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 8088/05, 10.04.2012):
- **6–րդ հոդվածի (3) (ե) մաս.** երաշխավորում է վարույթում բոլոր փաստաթղթերի կամ ցուցմունքների գրավոր կամ բանավոր թարգմանության համար թարգմանչի անվճար օգնությունը ստանալու իրավունքը, որն անհրաժեշտ է մեղադրյալին հասկանալու կամ դատարանի լեզվով հասկանալի դառնալու և այդ կերպ արդար դատաքննության օգուտները քաղելու համար (տե՛ս, օրինակ՝ Lagerblom–ն ընդդ. Շվեդիայի (վճիռ՝ 14 հունվար, 2003), պարբ. 61):

4. ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՐԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հոդված 8. Անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա

նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքը դիտարկելիս անհրաժեշտ է անդրադառնալ երկու հարցերի.

- Արդյո՞ք տեղի է ունեցել միջամտություն անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքին:
- Արդյո՞ք այդ միջամտությունը եղել է հիմնավորված:



1. Արդյո՞ք տեղի է ունեցել միջամտություն անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքին

Մասնավոր կյանքն աղոտ հասկացություն է, և ՄԻԵԴ–ը դրան տալիս է լայն մեկնաբանություն. այն սովորաբար համարվում է անձնային հա-

ռաբերությունների մասնավոր տիրույթը, մասնավորապես անձի ֆիզիկական և բարոյական ամբողջականությունը (տե՛ս, օրինակ՝ X–ը և Y–ն ընդդ. Նիդերլանդների (վճիռ՝ 26 մարտ, 1985), Bensaid–ն ընդդ. Միացյալ Թագավորության (վճիռ՝ 6 փետրվար, 2001):

Տան պաշտպանության իրավունքը վերաբերում է անձնական անձեռնմխելիությանը և բարօրությանը (*Gillow–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 24 նոյեմբեր, 1986), պարբ. 55, *Chappell–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 30 մարտ, 1989): Խիստ կարևոր է, որպեսզի պաշտպանված լինի այն տարածքի գաղտնիությունը, որտեղ ծավալվում է անձնական կյանքը[16]: ՄԻԵԴ–ն այս իմաստով թույլատրում է լայն մեկնաբանություն տալ 8–րդ հոդվածին՝ պաշտպանության շրջանակի մեջ ներառելով նաև աշխատանքային, գործնական նպատակներով օգտագործվող տարածքները (*Niemietz–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 16 դեկտեմբեր, 1992), *Stes Colas Est Co.–ն և այլք ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 16 ապրիլ, 2002, *Roemen–ը և Schmit–ն ընդդ. Լյուքսեմբուրգի* (վճիռ՝ 25 փետրվար, 2003):

Անձի նամակագրության հարգման իրավունքը այլ անձանց հետ առանց ընդհատման և առանց գրաքննության հաղորդակցվելու իրավունքն է[17]: Ավանդական թղթային նամակներից զատ՝ 8–րդ հոդվածի իմաստով նամակագրություն է համարվում նաև հետևյալը. էլեկտրոնային հաղորդակցության ավելի հին ձևերը, օրինակ՝ տելեքսը, հեռախոսային խոսակցությունները, փեյջերային հաղորդագրությունները, էլեկտրոնային հաղորդագրությունները, մասնավոր ռադիոկապը, էլեկտրոնային տվյալները և մաքսային պաշտոնյաների առգրաված ծանրոցները[18]:

---

[16] Renucci J., Introduction to the European Convention on Human Rights: The rights guaranteed and the protection mechanisms (2005 Council of Europe Publishing), p. 46.

[17] I. Roagna, Protecting the Right to Respect for Private and Family Life under the European Convention on Human Rights, Council of Europe Human Rights Handbooks (2012 Council of Europe Publishing), p. 32. Available at: http://www.coe.int/t/dgi/hr-natimplement/Source/documentation/hb11_privatelife_en.pdf [accessed 7 ապրիլ, 2016].

[18] I. Roagna, Protecting the Right to Respect for Private and Family Life under the European Convention on Human Rights, Council of Europe Human Rights Handbooks (2012 Council of Europe Publishing), p. 32.

2. ԱՐԴՅՈ՞Ք ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ Է

Որպեսզի միջամտությունն 8–րդ հոդվածի իմաստով հիմնավորված լինի, պետք է բավարարված լինեն հետևյալ պայմանները.

1. միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ,
2. այն պետք է համապատասխանի օրենքին,
3. այն պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում:

Այս հանգամանքներն առավել մանրամասնորեն կքննարկվեն քննիչների կողմից ապացույցներ հավաքելու շրջանակում խուզարկության, առգրավման և օպերատիվ–հետախուզական որոշակի լիազորությունների իրականացման կապակցությամբ (*տես IV բաժինը՝ Ապացույցների հավաքումը և հարցաքննությունը*):

3. ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻ ՕՐԵՆՔԻՆ

Չթույլատրված միջամտությունը, որը տեղի է ունենում առանց իրավական հիմքի, առաջացնում է 8–րդ հոդվածի խախտում (*ՄՄ–ն ընդդ. Նիդերլանդների* (վճիռ՝ 8 ապրիլ, 2003), պարբ. 44–46): Ուստի քննության ընթացքում ապացույցներ հավաքելու՝ ներառյալ խուզարկելու, առգրավելու և օպերատիվ–հետախուզական միջոցառումներ իրականացնելու լիազորությունները պետք է բավականաչափ հստակ հիմք ունենան ներպետական օրենսդրության մեջ[19]: Ակնկալվում է, որ ներպետական օրենսդրությունը բավարար իրավական կարգավորում կնախատեսի կամայական միջամտությունից անձանց պաշտպանելու համար, մասնավորապես օրենքը պետք է բավարարի նաև հասանելիության և կանխատեսելիության չափանիշները[20]: Հետևաբար, հանցագործության քննության համար անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու ընդհանուր իրավասությունը բավարար հիմք չէ այնպիսի որոշակի միջոցառում

[19] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013) Council of Europe Publishing, p. 70.

[20] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013) Council of Europe Publishing, p. 70.

իրականացնելու համար, ինչպիսին է հեռահաղորդակցության նկատմամբ միջամտությունը (*Kruslin–ն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 24 ապրիլ, 1990), պարբ. 17): Քննիչները պետք է ապահովեն, որպեսզի իրենց կողմից նման միջոցառումների կիրառությունը համապատասխանի թե՛ ազգային օրենսդրությանը, թե՛ ՄԻԵԿ–ին: Օրինակ, եթե ազգային օրենքը թույլ է տալիս լիազորություններ իրականացնել շատ տարաբնույթ սցենարներում, ապա դրանց իրականացման համար պատասխանատու քննիչները պետք է ապահովեն, որպեսզի իրենք այդ լիազորություններն իրականացնեն միայն այն դեպքում, երբ հիմնավորված է դրանք իրականացնելու անհրաժեշտությունը, և դրանք իրականացվում են պատշաճ նպատակների համար[21]: Տես նաև *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* (թիվ 22491/08, 02.10.2012):

Նախքան խուզարկություն կամ օպերատիվ–հետախուզական միջոցառում իրականացնելը քննիչը պետք է համոզվի, որ ինքն օժտված է այն իրականացնելու օրինական իրավասությամբ, և որ այդ միջոցառման իրականացումը չի գերազանցի ներպետական օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակը:

Դատական նախադեպի օրինակներ

***Malone–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 2 օգոստոս, 1984)**

ՄԻԵԴ–ը վճռեց, որ հաղորդակցությանը միջամտելու լիազորությունների իրականացման շրջանակը և կարգը բավականաչափ հստակորեն սահմանված չէին, և կրկնեց, որ «օրենքին համապատասխան» արտահայտությունը վերաբերում է ոչ միայն ներպետական օրենսդրության գոյությանը, այլ նաև դրա որակին, որը պետք է համահունչ լինի իրավունքի գերակայության հասկացությանը: Ներպետական օրենսդրությամբ, ուստի պետք է բավականաչափ հստակությամբ սահմանված լինեն վերապահված հայեցողական լիազորության շրջանակը և դրա իրականացման կարգը (պարբ. 79):

***Perry–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 17 հուլիս, 2003)**

Ոստիկանության բաժին հասնելուց հետո գանգատաբերի գաղտնի

[21] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013) Council of Europe Publishing, p. 72.

տեսանկարահանումը «օրենքին համապատասխան» չի եղել, քանի որ ոստիկանությունը չի կատարել վարքագծի կանոնագրքով նախատեսված ընթացակարգերի պահանջները: ՄԻԵԴ–ը նկատեց, որ թեպետ անվտանգության տեսախցիկների ընթացիկ օգտագործումը ոստիկանության բաժինների նման տարածքներում, որտեղ դրանք իրավաչափ և կանխատեսելի նպատակների են ծառայում, ինքնին 8–րդ հոդվածի առնչությամբ խնդիր չի առաջացնում, իրավիճակը տարբեր է, երբ դրանց օգտագործումը գերազանցում է անվտանգության տեսախցիկների սովորական կամ ակնկալվող օգտագործման շրջանակը, օրինակ՝ երբ ոստիկանները փորձում են անձի տեսանելի պատկերներ ստանալ վկաներին ցուցադրելու համար, և երբ գոյություն չունի ակնկալիք, որ կասկածյալը տեսանկարահանվում է նույնականացման նպատակով (պարբ. 44–49):

***Gillan–ը և Quinton–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 12 հունվար, 2010)**

Երկու անձ, որ փորձում էին հրազենի տոնավաճառի դեմ անցկացվող բողոքի ցույցի մասնակցել, խուզարկվել էին ոստիկանության կողմից: Օրենքը թույլատրում էր բարձրաստիճան ոստիկաններին, որ նրանք շարքային ոստիկաններին լիազորեն, այն դեպքում, երբ վերջիններս դա «նպատակահարմար են համարում ահաբեկչական գործողությունները կանխելու համար», կանգնեցնել և խուզարկել անձանց և տրանսպորտային միջոցները անգամ խախտում կատարելու ողջամիտ կասկածի բացակայության դեպքում: Դատարանը միանշանակ վճռեց, որ անձին մանրազնին խուզարկության ենթարկվելու պահանջ ներկայացնելու հարկադրական լիազորությունների իրականացումն ակնհայտ միջամտություն է անձնական կյանքի հարգման իրավունքի նկատմամբ: Իր որոշումը կայացնելիս դատարանը հաշվի առավ, որ խուզարկության հրապարակային բնույթով պայմանավորված նվաստացման և ամոթանքի տարրը որոշ դեպքերում կարող էր է՛լ ավելի ծանր դարձնել միջամտությունը: Թեպետ կանգնեցնելու և խուզարկելու լիազորությունների իրականացման հիմքը բխում էր իրավական ակտի և Վարքագծի կանոնագրքի համադրությունից, համարվեց, որ այդ դրույթներն իրենց

որակով համարժեք պաշտպանություն չեն ապահովում կամայական միջամտությունից և թերի են (պարբ. 76–87):

Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի (թիվ 22491/08, 02.10.2012 թ.)

«Ներպետական օրենսդրությունը պետք է սահմանի պետական մարմինների կողմից 8–րդ հոդվածի 1–ին կետով երաշխավորված իրավունքներին կամայական միջամտության դեմ իրավական պաշտպանության միջոց: Մասնավորապես այն դեպքում, երբ գործադիր իշխանությունն իրականացնում է գաղտնի գործունեություն, կամայականության վտանգներն ակնհայտ են:

Քանի որ հաղորդումների վերահսկման միջոցառումների իրականացումը գործնականում բաց չէ շահագրգիռ անհատների կամ հանրության լայն զանգվածների կողմից ուսումնասիրության համար, ապա իրավունքի գերակայությանը կհակասի, եթե գործադիր իշխանությանը կամ դատավորին շնորհվի անսահմանափակ լիազորությամբ արտահայտվող իրավական հայեցողություն: Հետևաբար, օրենքը պետք է բավարար հստակությամբ նախատեսի իրավասու մարմիններին տրամադրվող ցանկացած նման հայեցողության շրջանակը և դրա իրականացման եղանակը՝ հաշվի առնելով տվյալ միջոցառման օրինական նպատակը՝ անհատին կամայական միջամտության դեմ համապատասխան պաշտպանություն տրամադրելու համար»:

4. ԿԻՐԱՌՎԱԾ ՄԵԹՈԴԸ ՊԵՏՔ Է ՀԵՏԱՊՆԴԻ ԻՐԱՎԱՉԱՓ ՆՊԱՏԱԿ

8–րդ հոդվածի 2–րդ մասով նախատեսվում է այն իրավաչափ նպատակների սպառիչ ցանկը, որոնք պետությունը կարող է հետապնդել անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին միջամտելիս: 8–րդ հոդվածի 2–րդ մասում որպես շահեր թվարկվում են ազգային անվտանգությունը, հասարակական կարգը կամ երկրի տնտեսական բարեկեցությունը, անկարգությունների կամ հանցագործությունների կանխումը, առողջության կամ բարոյականության պաշտպանությունը կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների

պաշտպանությունը: Այսպիսով՝ անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին միջամտելիս քննիչները պետք է համոզվեն, որ միջամտությունը հետապնդում է վերոհիշյալ նպատակներից որևէ մեկը:

Դատական նախադեպի օրինակներ

***Buck–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 29 ապրիլ, 2005)**

Գանգատաբերը պնդում էր, թե խուզարկությունը և առգրավումը չեն հետապնդել իրավաչափ նպատակ և իրականացվել են հապճեպ կերպով՝ վարույթում առաջին դատական նիստից ընդամենը մեկ օր անց, և որ առգրավված փաստաթղթերը նշանակություն չեն ունեցել դատավճռում ապացույցների գնահատման համար (պարբ. 39): ՄԻԵԴ–ը, սակայն, համարեց, որ այն ժամանակվա ընկերության աշխատողների ինքնությունը բացահայտող փաստաթղթերի հայտնաբերման և առգրավման նպատակով տրված կարգադրությունը հետապնդել է Կոնվենցիային համահունչ նպատակներ, այն է՝ անկարգությունների կամ հանցագործությունների կանխումը և այլ անձանց իրավունքների և ազատությունների, մասնավորապես ճանապարհների այլ օգտագործողների կյանքի և առողջության իրավունքների պաշտպանությունը (պարբ. 41):

5. ԿԻՐԱՌՎԱԾ ՁԵՎԸ ՊԵՏՔ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԼԻՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Քննիչները պետք է նաև դիտարկեն, թե արդյոք ապացույցների հավաքման համար կիրառված մեթոդը՝ օպերատիվ–հետախուզական միջոցառումը, տվյալների հավաքումը կամ հաղորդակցության նկատմամբ միջամտությունը, «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»: Ուստի պետք է գնահատել, թե արդյոք «իրավաչափ նպատակին» հասնելու համար օգտագործված միջոցներն անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում:

ՄԻԵԴ–ի ձևավորած դատական նախադեպի համաձայն՝ «անհրաժեշտ» հասկացությունից բխում է, որ միջամտությունը պետք է ուղղված

լինի հրատապ հասարակական կարիքի բավարարմանը, մասնավորապես *համաչափ* լինի հետապնդվող իրավաչափ նպատակին (տե՛ս, օրինակ՝ *Buck–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 28 ապրիլ, 2005), պարբ. 44):

Որևիցե միջամտության կամ հսկողության հիմքերի վերաբերելիությունը և բավարարությունը գնահատելիս ՄԻԵԴ–ը, որպես կանոն, ուսումնասիրում է ներպետական երաշխիքների որակը, մասնավորապես, թե արդյոք ներպետական որոշումներ կայացնողները հաշվի առել են այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են «հնարավոր միջոցառումների բնույթը, շրջանակը և տևողությունը, դրանց կիրառության համար պահանջվող հիմքերը, դրանք թույլատրելու, իրականացնելու և վերահսկելու իրավասությամբ օժտված մարմինները և ազգային օրենսդրությամբ նախատեսված իրավական պաշտպանության տեսակը» (*Klass–ը և այլք ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 6 սեպտեմբեր, 1978), պարբ. 50):

Այդ որոշման համար էական է նաև միջամտության խորությունը. խիստ չափանիշներ են կիրառելի հսկողության որոշ ձևերի, օրինակ՝ հեռահաղորդակցության միջոցով հսկողության նկատմամբ, սակայն չափանիշները պակաս խիստ են այն դեպքում, երբ միջամտությունը նույնչափ խոր չէ, օրինակ՝ հանրային վայրերում տեղաշարժի նկատմամբ հսկողության պարագայում (*Uzun–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 2 սեպտեմբեր, 2010)):

Դատական նախադեպի օրինակ

***Keegan–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 18 հուլիս, 2006)**

Դատարանը որոշեց, որ տեղի է ունեցել 8–րդ հոդվածի խախտում, քանի որ ոստիկանությունը համարժեքորեն չի ստուգել տան ներկայիս բնակիչների ինքնությունը: Ոստիկանները հարկադրաբար մուտք են գործել գանգատաբերների տուն և իրականացրել տարածքի խուզարկություն՝ սխալմամբ կարծելով, թե այդ տանն է ապրել զինված ավազակային հարձակում կատարած անձը: Թեպետ դատարանը պատրաստ եղավ ընդունելու, որ խուզարկությունն ունեցել է համապատասխան

հիմքեր, դատարանը չկարողացավ ընդունել, որ այս դեպքում հիմքերը բավարար են եղել՝ հաշվի առնելով խուզարկությունն իրականացնելուց առաջ նախազգուշական պատշաճ միջոցառումների չիրականացումը: Ավելին՝ նշանակություն չտրվեց այն հանգամանքին, որ ոստիկանությունը չէր գործել չարամտորեն՝ հաշվի առնելով անհատներին իշխանության չարաշահումից պաշտպանելու կարևորությունը (պարբ. 29–26):

Դասին առնչվող գրականություն

Ձեռնարկներ և գիտագործնական մեկնաբանություններ

- Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, Հատոր 1, ՀՀ դատավորների միություն, Երևան, 2011, էջ 125–147:

Իրավական ակտեր

- ՀՀ Սահմանադրություն
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
- ՄԻԵԿ և կից արձանագրությունները
- Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիայի

Դատական ակտեր

- ՀՀ վճռաբեկ դատարանի 18.12.2008 թ. որոշումը Գագիկ Միքայելյանի գործով:

- Եվրոպական դատարանի որոշումներ
  - *Միշա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 36549/03
  - *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի,* թիվ 9935/06 և 23339/06
  - *Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 31237/03
  - *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 22491/08, 02.10.2012
  - *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի,* թիվ 8088/05, 10.04.2012

ԴԱՍ 3. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ ԵՎ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս դասի ընթացքում մասնակիցները ձեռք կբերեն գիտելիքներ այն մասին, թե ինչպես պետք է ապացույցները հավաքելիս երաշխավորել քրեական գործի քննության բոլոր մասնակիցների՝ ներառյալ կասկածյալների, մեղադրյալների, տուժողների և վկաների մարդու իրավունքները:

Դասի ավարտին մասնակիցները.

- ձեռք բերած կլինեն գիտելիքներ ապացույցների հավաքման նկատմամբ կիրառելի նյութական իրավունքների մասին,
- կհասկանան, թե այդ նյութական իրավունքներն ինչպես են կիրառվել ՄԻԵԴ–ի կողմից՝ նպատակ ունենալով ընկալել ապացույցները ՄԻԵԿ–ով երաշխավորված իրավունքներին համահունչ հավաքելու պարամետրերը,
- կիմանան, թե ինչպես կարող է քննության մեթոդաբանությունն ազդել անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի վրա,
- կգնահատեն կյանքի իրավունքի և խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելքի կարևորությունն ապացույցների հավաքման գործընթացում:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս բաժնում դիտարկվում են քննության ընթացքում ապացույցների հավաքման համար կիրառվող հնարքների տարաբնույթ ազդեցությունները կասկածյալների, մեղադրյալների, վկաների և քրեական գործով քննության այլ մասնակիցների մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա:

Աշխատանք մասնակիցների համար

Մասնակիցները պետք է խմբովի քննարկեն քննիչների դերն ապացույցների հավաքման գործում՝ ներառյալ նրանց կողմից կատարվող աշխատանքը:

Դասընթացավարը կարող է մատնացույց անել քրեական գործով քննության ընթացքում քննիչների կողմից կատարվող պարտադիր գործողությունների հետևյալ օրինակները.

- փնտրել և գտնել ապացույց հանդիսացող նյութերը,
- հասկանալ հայտնաբերված ապացույցների ներուժը,
- արձանագրել իրեղեն ապացույցների վիճակը, հայտնաբերման վայրը և հայտնաբերողի անունը,
- ապահովել իրեղեն ապացույցների տիրապետման շարունակականությունը,
- ապահովել իրեղեն ապացույցները կորստից, ոչնչացումից կամ վատթարացումից պաշտպանելու և պահպանելու համար անհրաժեշտ խնամքը և ուշադրությունը,
- վերլուծել ապացույցների նշանակությունը, իմաստը և վերաբերելիությունը:

Քննիչների՝ ապացույցներ հավաքելու իրավասությունները պետք է սահմանափակված լինեն, որպեսզի բավարարվեն ՄԻԵԴ–ի դատական նախադեպից բխող պահանջները: Մասնավորապես անձի կամ շինության խուզարկություն իրականացնելու կամ նամակագրության կամ էլեկտրոնային փոստի միջամտություն իրականացնելու կամ տանը կամ մեքենայում գաղտնալսման էլեկտրոնային սարք տեղադրելու մասին որոշումը ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի իմաստով առաջացնում է միջամտություն անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի նկատմամբ[22]: Ապացույցներ հավաքելիս քննիչները պետք է կիրառեն քննչական այնպիսի մեթոդներ, որոնք համահունչ կլինեն անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքին՝ ներառյալ տան և նամակագրության հարգման իրավունքին: «Անձնական կյանքը» լայն հասկացություն է, որը ներառում է, մասնավորապես, հեռախոսի գաղտնալսումը և էլեկտրոնային հսկողությունը, ոստիկանության կողմից լու-

[22] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013) Council of Europe Publishing, p. 67.

սանկարների տրամադրումը լրատվամիջոցներին, տվյալների պահպանությունը և հարկադիր բժշկական փորձաքննությունը[23]:

Ինչպես նշվեց, անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի վրա հնարավոր ազդեցություն ունեցող՝ քննության մեթոդներից յուրաքանչյուրի պարագայում, որպեսզի միջամտությունն 8–րդ հոդվածի իմաստով հիմնավորված լինի, պետք է բավարարված լինեն հետևյալ պայմանները.



Խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելքը կարգավորում է այն մեթոդները և հնարքները, որոնք կարելի է օգտագործել կասկածյալների և վկաների հարցաքննության և նրանց հարցեր տալու ընթացքում[24]:

Հետագա բաժիններում մանրամասնվում են ապացույցների հավաքման որոշակի քննչական մեթոդները, որոնք կարող են ազդել անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի կամ խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելքի վրա:

[23] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 68.

[24] J. McBride, Human Rights and Criminal Procedure: The case law of the European Court of Human Rights (2009 Council of Europe Publishing), p. 14. Available at: http://www.coe.int/t/dgi/hr-natimplement/Source/documentation/Echr_and_crim_procedure.pdf [accessed 7 ապրիլ, 2016].

Կարևոր եզրակացություններ մասնակիցների համար

Քննիչները կարևոր դեր են կատարում ապացույցների հավաքման գործընթացում: Այնուհանդերձ, ապացույցների հավաքման համար կիրառվող մեթոդները և հնարքները պետք է համահունչ լինեն անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքին և չպետք է խախտեն խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելքը:

Ապացույցների հավաքման հնարքները

Ապացույցների հավաքման որոշակի հնարքներ, օրինակ՝ անձի տան կամ գրասենյակի խուզարկությունը, ապացույցների առգրավումը, անձի խուզարկությունը (երբ դա իր հետ բերում է որոշակի հարկադրանք), և օպերատիվ–հետախուզական գործունեությունը, օրինակ՝ հաղորդակցության գաղտնալսումը, միջամտություն են առաջացնում անձնական կյանքի, տան կամ նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքի նկատմամբ:

Երբ տեղի է ունենում նման միջամտություն, քննիչները պետք է ապահովեն, որպեսզի կիրառված մեթոդները՝

- համապատասխանեն օրենքին, մասնավորապես յուրաքանչյուր խուզարկության կամ առգրավման համար ստացված լինի անհատական թույլտվություն, որում սահմանազատված կլինի դրա առարկան և շրջանակը,
- հետապնդեն իրավաչափ նպատակ, մասնավորապես քննիչները պետք է վերաբերելի և բավարար հիմքեր մատնանշեն տվյալ մեթոդն օգտագործելու համար,
- անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում, մասնավորապես օգտագործված մեթոդը պետք է համաչափ լինի հետապնդված իրավաչափ նպատակին:

Քննիչները պետք է սահմանափակեն ուժի կամ հարկադրանքի կիրառությունը խուզարկության ընթացքում: Հավանական է, որ չափազանց շատ ուժ գործադրելու դեպքում մեթոդն անհամաչափ կդառնա հետապնդվող իրավաչափ նպատակին՝ առաջացնելով 8–րդ հոդվածի խախտում: Ավելորդ ուժի գործադրումը կարող է առաջացնել նաև 3–րդ

հոդվածի՝ խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքի խախտում:

Անձի փորձաքննությունը

Անձին նրա կամքին հակառակ կամ հարկադրաբար բժշկական կամ դատաբժշկական փորձաքննության ենթարկելը՝ անկախ փորձաքննության ոչ ծավալուն լինելու հանգամանքից, առնչվում է 8–րդ հոդվածով նախատեսված անձնական կյանքի իրավունքի պաշտպանության շրջանակի հետ: Ուստի նման միջոցառումները պետք է լինեն օրենքին համապատասխան, հետապնդեն իրավաչափ նպատակ և անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում:

Նման միջոցառումները կարող են 8–րդ հոդվածի ներքո հիմնավորված լինել, և ՄԻԵԴ–ը համարել է, որ թեպետ հարկադիր բժշկական փորձաքննությունը կարող է առաջացնել անձնական կյանքի խախտում, այն կարող է միաժամանակ նաև անհրաժեշտ լինել այլոց իրավունքների պաշտպանության համար՝ 8–րդ հոդվածի 2–րդ մասի իմաստով:

Կախված հարկադրանքի լրջությունից և բժշկական փորձաքննությանը մասնակցելուց անձի հրաժարվելու դեպքում կիրառվող ուժից՝ կիրառելի կարող է դառնալ նաև 3–րդ հոդվածը՝ խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքը:

Անձնական կյանքի գաղտնիքի պահպանման պարտավորություններն ապացույցների առնչությամբ և տվյալների պահպանման կապակցությամբ

Անհատին վերաբերող տեղեկությունների և տվյալների՝ պետության կողմից հավաքումը և պահպանումն առանց նրա համաձայնության, ինչպես նաև այդ տվյալների հասանելիության տրամադրումը ցանկացած դեպքում առնչվում են անձի անձնական կյանքին և ուստի տեղավորվում են 8–րդ հոդվածի շրջանակի մեջ:

Ուստի տվյալների պահպանումը և անձնական տվյալներ պարունակող ապացույցների բացահայտումը պետք է համապատասխանեն 8–րդ հոդվածի պահանջներին (լինեն օրենքին համապատասխան, հետապնդեն իրավաչափ նպատակ և անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում):

Հարցաքննության անօրինական միջոցները

Կասկածյալներին և վկաներին հարցաքննելու քննիչների լիազորությունն իր հետ բերում է հարցաքննվող անձի իրավունքները պաշտպանելու և նրա նկատմամբ վատ վերաբերմունքը բացառելու պարտավորություններ:

Հարցաքննության ենթարկվող անձի արժանապատվությունը պաշտպանելու և վատ վերաբերմունքը բացառելու համար քննիչները պետք է համապատասխան միջոցներ ապահովեն կասկածյալների հարցաքննության և իրենց վարքագծի կանոնակարգման ուղղությամբ:

Հարցաքննության ընթացքում ավելորդ ուժի գործադրումը հավանաբար կարող է հասնել խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի աստիճանին: Խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքը վերաբերում է նաև սպառնալիքներին:

Պետությունը պարտավոր է բացատրել, թե ինչու է անհատը մարմնական վնասվածք ստացել ոստիկանությունում պահվելու կամ հարցաքննվելու ընթացքում:

2. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԸ

Այս բաժնում կներկայացվեն այն հնարքները, որոնց օգտագործմամբ քննիչները կարող են ապացույցներ հավաքել: Կդիտարկվի դրանց համապատասխանությունը մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային չափանիշներին, ինչպես նաև թե ինչպես պետք է քննիչները սահմանափակեն այդ մեթոդների կիրառությունը, որպեսզի ապահովեն ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի վերոհիշյալ պահանջների կատարումը:

Աշխատանք մասնակիցների համար

Մասնակիցները պետք է խմբովի ձևակերպեն քննության ընթացքում ապացույցներ հավաքելու համար օգտագործվող հնարքների ցանկը՝ ներառյալ, ի թիվս այլոց, խուզարկությունը և առգրավումը, դատափորձագիտական ապացույցները, հաղորդակցության վերահսկողությունը և կասկածյալների, տուժողների և վկաների հարցաքննությունը:

Քննչական մեթոդներից յուրաքանչյուրի համար քննիչները պետք է անդրադառնան հետևյալ երկու հարցերին.

- Տեղի ունեցել է միջամտություն անձնական և ընտանեկան կյանքի, տան կամ նամակագրության իրավունքին:
- Միջամտությունը հիմնավորված է եղել, այսինքն՝ համապատասխանել է օրենքին, հետապնդել է իրավաչափ նպատակ և անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում:

Ա. Խուզարկությունը և առգրավումը

1. Անձի տան խուզարկությունը

Քննության ընթացքում տարբեր պահերի քննիչները կարող են իրեղեն ապացույցներ ձեռք բերելու համար անհրաժեշտ համարել այնպիսի միջոցառումների կիրառությունը, ինչպիսիք են խուզարկությունը և առգրավումը: Անձի տուն ֆիզիկապես մուտք գործելը քրեական գործով քննության ընթացքում խուզարկություն իրականացնելու նպատակով համարվում է միջամտություն 8–րդ հոդվածի ներքո անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի իրականացման նկատմամբ:

Ինչպես նշվեց, ՄԻԵԴ–ն անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի իմաստով «տուն» հասկացությանը տալիս է լայն մեկնաբանություն, ուստի 8–րդ հոդվածով պաշտպանություն է նախատեսվում նաև այլ վայրերի, օրինակ՝ բիզնեսի տարածքների խուզարկության դեպքում, եթե դրանցում գոյություն ունի «մասնավոր կյանքի հարգման ողջամիտ ակնկալիքը» (*Peev–ն ընդդ. Բուլղարիայի* (վճիռ՝ 26 հուլիս, 2007), պարբ. 39): Այսպիսով՝ քննիչների կողմից անձի տուն կամ բնակության այլ վայր ֆիզիկապես մուտք գործելը միջամտություն է անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի նկատմամբ:

Դատական նախադեպի օրինակներ

Niemietz–ն ընդդ. Գերմանիայի **(վճիռ՝ 16 դեկտեմբեր, 1992)**

Այս գործը վերաբերում էր դատարանի թույլտվությամբ փաստաբանի գրասենյակը խուզարկելուն: Վճռելով, որ որոշակի հանգամանքներում «տան» շրջանակը կարող է ներառել աշխատանքային տարածքները,

ՄԻԵԴ–ը նշեց, որ դժվար կլիներ ճշգրտորեն սահմանազատել գրասենյակը և տունը, «քանի որ որոշակի մասնագիտությանը կամ բիզնեսին առնչվող գործունեությունը, շատ հավանական է, կիրականացվի անձի մասնավոր տնից, իսկ չառնչվող գործունեությունն իր հերթին՝ գրասենյակում կամ առևտրային տարածքում» (պարբ. 30–31):

***Peev–ն ընդդ. Բուլղարիայի* (վճիռ՝ 26 հուլիս, 2007)**

Սույն գործով խնդիրը վերաբերում էր նրան, թե արդյոք գանգատաբերի՝ պետական մարմնի տարածքում գտնվող գրասենյակի խուզարկությունն առաջացրել է միջամտություն նրա անձնական կյանքի և տան հարգման իրավունքի նկատմամբ (պարբ. 37): Դատարանը խնդիրը դիտարկեց «մասնավոր կյանքի հարգման ողջամիտ ակնկալիքի» չափանիշով: Դատարանը համարեց, որ գանգատաբերը նման ակնկալիք ուներ եթե ոչ ամբողջ գրասենյակի, ապա առնվազն իր գրասեղանի և պահարանի դարակների նկատմամբ: Ուստի գանգատաբերի գրասեղանի և պահարանի դարակների խուզարկությունը պետք է համարել միջամտություն նրա անձնական կյանքին (պարբ. 39):

Ինչ վերաբերում է քննության ընթացքում փաստաթղթի կամ ապացույցի առգրավմանը, ապա դա նույնպես համարվում է միջամտություն անձնական կյանքի իրավունքի նկատմամբ, ուստի պետք է իրականացվի համարժեք երաշխիքներով, այն է՝ պետք է լինի «օրենքին համապատասխան», հետապնդի իրավաչափ նպատակ և անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում:

Դատական նախադեպի օրինակներ

***Raimondo–ն ընդդ. Իտալիայի* (վճիռ՝ 22 փետրվար, 1994)**

Պարոն Ռայմոնդոն բողոքում էր, որ 1985 թ. մայիսի 13–ին իրենից առգրավել են 16 կտոր անշարժ գույք և 6 տրանսպորտային միջոց (պարբ. 24): Դատարանը գտնում է, որ առգրավումը նախատեսված էր 1965 թվականի օրենքի 2–րդ բաժնով... և նպատակ ուներ ոչ թե գանգատաբերին զրկել իր գույքից, այլ ընդամենը կանխել նրա կողմից դրանց

օգտագործումը... 1965 թվականի օրենքի 2–րդ բաժնով նախատեսված առգրավումն ակնհայտորեն ժամանակավոր միջոց է, որի խնդիրն է ապահովել, որպեսզի այն գույքը, որն առերևույթ ստացվել է համայնքին ի վնաս իրականացված անօրինական գործունեության արդյունքում, հետագայում անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի առգրավել: Ուստի միջոցը որպես այդպիսին հիմնավորված էր ընդհանուր շահերով և, հաշվի առնելով Մաֆիայի նման «կազմակերպության» խիստ վտանգավոր տնտեսական ուժը, չի կարելի ասել, թե վարույթի այս փուլում այն վերցնելը համաչափ չէր հետապնդվող նպատակին (պարբ. 27):

***Panteleyenko–ն ընդդ. Ուկրաինայի* (վճիռ՝ 29 հունիս, 2006)**

Քննության համար անհրաժեշտ ապացույցներն ընտրելու փոխարեն նրանք գրասենյակից առգրավել էին բոլոր փաստաթղթերը և գանգատաբերին պատկանող որոշ անձնական իրեր, որոնք ակնհայտորեն կապված չէին հանցագործության հետ (պարբ. 51): Այս հանգամանքներում դատարանը եզրակացնում է, որ չի ապացուցվել տվյալ միջամտության «օրենքին համապատասխան» լինելը, և ուստի այս հիմքով տեղի է ունեցել 8–րդ հոդվածի խախտում (պարբ. 53):

Հետևապես, 8–րդ հոդվածի խախտումից խուսափելու համար քննիչները պետք է ապահովեն, որպեսզի խուզարկությունը և առգրավումը կատարվեն չարաշահումից պաշտպանող համարժեք և արդյունավետ երաշխիքների ապահովմամբ (*Funke–ն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 25 փետրվար, 1993), պարբ. 56): Մասնավորապես, ինչպես նշվեց, խուզարկությունը կատարելու համար բավարար չէ, որ այն համապատասխանի Հայաստանի օրենսդրության պահանջին: Խուզարկությունը պետք է նաև անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և համաչափ լինի հետապնդվող իրավաչափ նպատակին:

Նախ և առաջ քննիչները պետք է կատարեն միայն օրենքին համապատասխանող խուզարկություններ կամ առգրավումներ: Դա նշանակում է, որ խուզարկության յուրաքանչյուր դեպքի համար պետք է ստանալ դրա առարկան և շրջանակը սահմանագծող անհատական թույլտվություն (*Imakayeva–ն ընդդ. Ռուսաստանի* (վճիռ՝ 9 նոյեմբեր,

2006), պարբ. 188): Ուստի քննիչները պարտավոր են խուզարկության թույլտվություն ստանալ նախքան խուզարկությունը կամ առգրավումը կատարելը, իսկ իրավասու մարմինները պարտավոր են «վերաբերելի և բավարար» հիմքեր ներկայացնել նման թույլտվություն տալու համար (*Smirnov–ն ընդդ. Ռուսաստանի* (վճիռ՝ 7 հունիս, 2007), պարբ. 47):

Դատական նախադեպի օրինակներ

***Imakayeva–ն ընդդ. Ռուսաստանի* (վճիռ՝ 9 նոյեմբեր, 2006)**

ՄԻԵԴ–ը նշեց, որ «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» օրենքը չի կարող փոխարինել խուզարկության անհատական թույլտվությանը, որում սահմանված կլինեն խուզարկության առարկան և շրջանակը, և որը կազմված կլինի կիրառելի իրավական դրույթներին համապատասխան: Ուստի ՄԻԵԴ–ը վճռեց, որ խուզարկության և առգրավման միջոցառումներն իրականացվել են առանց թույլտվության և երաշխիքների, ուստի չեն եղել «օրենքին համապատասխան» (պարբ. 188):

***Smirnov–ն ընդդ. Ռուսաստանի* (վճիռ՝ 7 հունիս, 2007)**

Գանգատաբերն ինքը չէր մեղադրվել կամ կասկածվել որևէ հանցագործության կամ ապօրինի գործունեության մեջ, սակայն նա քրեական գործով անցնող չորս անձանց ներկայացուցիչն էր, ում նկատմամբ տրվել էր խուզարկության թույլտվությունը: ՄԻԵԴ–ը նշեց, որ որևէ քայլ չէր ձեռնարկվել մասնագիտական գաղտնիքով պաշտպանվող արտոնյալ նյութերի անվտանգությունը երաշխավորելու ուղղությամբ (պարբ. 46): ՄԻԵԴ–ը նշեց նաև, որ խուզարկության որոշումը «կազմվել էր» խիստ ընդհանրական ձևակերպումներով՝ առանց տարբերակման հիշատակելով «բոլոր առարկաները և փաստաթղթերը, որոնք հետաքրքրություն կունենան [թիվ 7806] քրեական գործի քննության համար՝ առանց որևէ սահմանափակման»: Ավելին՝ թույլտվությունը որևէ տեղեկություններ չէր պարունակում ընթացիկ քննության, խուզարկության նպատակի կամ այն մասին, թե ինչու էին կարծում, որ գանգատաբերի բնակարանի խուզարկությամբ կհայտնաբերվեն հանցագործության ապացույցներ: Ուստի ՄԻԵԴ–ը եզրակացրեց, որ ներպետական իշխանությունները չեն կատարել խուզարկության թույլտվություն

տալու համար «վերաբերելի և բավարար» հիմքեր ներկայացնելու իրենց պարտականությունը (պարբ. 47):

***Aleksanyan–ն ընդդ. Ռուսաստանի* (վճիռ՝ 22 դեկտեմբեր, 2008)**

Դատարանը նշեց, որ «խուզարկության թույլտվության մանրակրկիտ հիմնավորումը կարող է բարդ լինել հրատապ իրավիճակներում»: Այնուհանդերձ, դատարանը նշեց, որ խուզարկությունները կատարելու ժամանակ Յուքոսի ղեկավարության գործարար գործունեության պաշտոնական քննությունն ընթացքի մեջ էր արդեն մոտ երեք տարի: Ուստի խուզարկության սանկցիայի պատշաճ հիմնավորման բացակայությունը և աղոտ ձևակերպումները չեն կարող բացատրվել իրավիճակի հրատապությամբ (պարբ. 217): Ուստի Դատարանը եզրակացրեց, որ 2006 թվականի ապրիլի 4–ի և 5–ի խուզարկության որոշումների էական թերությունն ինքնին բավարար էր՝ եզրակացնելու համար, որ գանգատաբերի տարածքների խուզարկություններն իրականացվել են Կոնվենցիայի 8–րդ հոդվածի խախտմամբ (պարբ. 218):

Ինչ վերաբերում է նրան, թե արդյոք քննիչների կողմից կատարված խուզարկությունը կամ առգրավումը հետապնդել են իրավաչափ նպատակ և անհրաժեշտ են եղել ժողովրդավարական հասարակությունում, այդ մեթոդների օգտագործման մասին որոշումը պետք է համաչափ լինի գործի կոնկրետ հանգամանքներում հետապնդվող իրավաչափ նպատակին (*Buck–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 28 ապրիլ, 2005):

Ինչ վերաբերում է խուզարկության կատարման եղանակին, ապա տարածքի խուզարկությունը պետք է իրականացնել՝ խուսափելով հնարավոր չարաշահումներից և ապահովելով 8–րդ հոդվածով անձանց համար նախատեսված իրավունքների արդյունավետ պաշտպանությունը (*Kucera–ն ընդդ. Սլովակիայի* (վճիռ՝ 17 հուլիս, 2007), պարբ. 122): Այսպիսով՝ խուզարկությունը չի կարող անհամաչափորեն ոտնահարել անձի անձնական կյանքը, ուստի խուզարկության միջոցներն ինքնին պետք է համաչափ լինեն:

Դատական նախադեպի օրինակներ

***Buck–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 28 ապրիլ, 2005)**

Գանգատաբերը պնդում էր, թե իր գործարար գործունեության տարածքների և բնակելի տարածքի խուզարկությունը և մի քանի փաստաթղթերի առգրավումը միջամտել են նրա՝ 8–րդ հոդվածի 1–ին մասով երաշխավորված՝ տան հարգման իրավունքի նկատմամբ: Գանգատաբերը պնդում էր, թե իր գործարար գործունեության տարածքների և բնակելի տարածքի խուզարկությունն անհրաժեշտ չէր եղել հնարավոր վարորդների անունները պարզելու համար, ուստի իր տան խուզարկության սանկցիա տալը եղել էր անհամաչափ:

Խուզարկության և առգրավման համաչափությունը որոշելիս ՄԻԵԴ–ը նախ և առաջ նշեց, որ իրավախախտումը, որի առնչությամբ տրվել էր խուզարկության և առգրավման սանկցիան, վերաբերում էր ճանապարհային երթևեկության կանոնի հասարակ խախտմանը (պարբ. 47): ՄԻԵԴ–ը նշեց նաև, որ վարույթը, որի ընթացքում ի կատար էին ածվել խուզարկությունը և առգրավումը, ուղղված էին եղել ոչ թե անձամբ գանգատաբերի, այլև նրա որդու, այսինքն՝ երրորդ անձի նկատմամբ (պարբ. 48): Դատարանը նաև նկատեց, որ գանգատաբերի գործարար գործունեության տարածքների և բնակելի տարածքի խուզարկության՝ 10 000 բնակիչ ունեցող քաղաքում անխուսափելի հրապարակայնությունը հավանաբար բացասաբար կանդրադառնար նրա անձնական հեղինակության և նրան պատկանող և նրա կողմից կառավարվող ընկերության հեղինակության վրա (պարբ. 51): Ուստի ՄԻԵԴ–ը եզրակացրեց, որ միջամտությունը չէր կարող համարվել հետապնդվող իրավաչափ նպատակներին համաչափ (պարբ. 52):

***Kucera–ն ընդդ. Սլովակիայի* (վճիռ՝ 17 հուլիս, 2007)**

Դատարանը նշեց, որ իշխանության չարաշահման և մարդու արժանապատվության խախտման ռիսկն անխուսափելիորեն առկա է սույն գործին նման իրավիճակներում, որոնցում գանգատաբերը առավոտյան շատ վաղ ժամի իր տան մուտքի դռան մոտ հանդիպել էր դիմակավորված և հատուկ պատրաստում անցած մի շարք ոստիկանների: Դատարանը համարեց, որ՝

... Պետք է երաշխիքներ գոյություն ունենան նման հանգամանքներում հնարավոր չարաշահումից խուսափելու և անձի՝ Կոնվենցիայի 8–րդ հոդվածով նախատեսված իրավունքների արդյունավետ պաշտպանության համար: Այդ երաշխիքները կարող են ներառել կարգավորման միջոցառումների իրականացումը, որոնց հիման վրա հատուկ ուժերի ներգրավումը կսահմանափակվի այն իրավիճակներով, որոնցում սովորական ոստիկանության միջամտությունը չի կարող ապահով և բավարար համարվել, ինչպես նաև ամրագրել դատավարական երաշխիքներ, որոնք կապահովեն, օրինակ, անկողմնակալ անձի ներկայությունը գործողության ժամանակ կամ սեփականատիրոջ հստակ, գրավոր համաձայնության ստացումը՝ որպես նախապայման նրա տարածք մուտք գործելու համար (պարբ. 122):

***Smirnov–ն ընդդ. Ռուսաստանի* (վճիռ՝ 7 հունիս, 2007)**

Դատարանը, արձանագրելով 8–րդ հոդվածի խախտում, նկատեց.

... Խուզարկության սանկցիայի չափազանց լայն ձևակերպումները ոստիկանությանն անսահմանափակ հայեցողություն էին վերապահում՝ որոշելու, թե որ փաստաթղթերն են «հետաքրքրություններ կայացնում» քրեական գործով քննության համար: Դրա հետևանքով իրականացվել էին լայնածավալ խուզարկություն և առգրավում: Առգրավված նյութերը չէին սահմանափակվել երկու մասնավոր ընկերությունների բիզնեսին առնչվող նյութերով: Հաշվի առնելով զննված և առգրավված նյութերը՝ դատարանն արձանագրում է, որ խուզարկությունը ոտնահարել է մասնագիտական գաղտնիքն այն աստիճան, որ անհամաչափ է եղել հետապնդվող իրավաչափ նպատակին, ինչպիսին էլ որ վերջինս լինի (պարբ. 48):

2. Անձի խուզարկությունը

Անձնական կյանքի հասկացությունը ներառում է նաև անձի ֆիզիկական և հոգեբանական ամբողջականությունը (*Gillian–ը և Quinton–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 12 հունվար, 2010), պարբ. 61): Անձի ինքնուրույնության հասկացությունը որպես այդպիսին կարևոր հիմնարար սկզբունք է 8–րդ հոդվածով ընձեռված երաշխիքների մեկ-

նաբանման համար (*Pretty–ն ընդդ. Միացյալ Թագավորության (*վճիռ՝ 29 ապրիլ, 2002), պարբ. 61):

Անձի խուզարկությունը՝ ներառյալ ինտիմ խուզարկությունը, կարող է տեղավորվել 8–րդ հոդվածի շրջանակի մեջ, եթե այն ներառում է որոշակի աստիճանի հարկադրանք, քանի որ հոժարակամորեն խուզարկության ենթարկվելը միջամտություն չի հանդիսանա (*Gillian–ը և Quinton–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 12 հունվար, 2010), պարբ. 61–66):

Հաշվի առնելով 8–րդ հոդվածով նախատեսված բոլոր միջամտությունները՝ անձի խուզարկությունը որպես այդպիսին պետք է համապատասխանի օրենքին, հետապնդի իրավաչափ նպատակ և անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում:

Դատական նախադեպի օրինակներ

***Gillian–ը և Quinton–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 12 հունվար, 2010)**

Սույն գործով ներպետական համապատասխան օրենսդրությունը թույլատրում էր շարքային (համազգեստ կրող) ոստիկանին՝ թույլտվության մեջ մտնող տարածքում կանգնեցնել և խուզարկել ցանկացած անձի, ընդ որում՝ ֆիզիկապես խուզարկել նրա անձը և նրա մոտ գտնվող ցանկացած բան: Ոստիկանը կարող էր խնդրել անձին՝ հեռացնել գլխաշորը, կոշկեղենը, արտահագուստը և ձեռնոցները: Ավելին՝ ոստիկանը կարող էր ձեռքը մտցնել խուզարկվողի գրպանները, դրսից և ներսից շոշափել նրա օձիքը, գուլպաները և կոշիկները և խուզարկել անձի մազերը: Կանգնեցնել–խուզարկելը տեղի էր ունենում հանրային վայրում, և չենթարկվելը հավասարազոր էր իրավախախտման, որը պատժվում էր ազատազրկմամբ կամ տուգանքով (պարբ. 62):

Սույն գործով գանգատաբերներից յուրաքանչյուրին ոստիկանը կանգնեցրել էր և պարտադրել խուզարկության ենթարկվել ներպետական օրենսդրության համաձայն: ՄԻԵԴ–ը համարեց, որ այդ խուզարկություններն առաջացնում էին միջամտություն 8–րդ հոդվածով նախատեսված՝ անձնական կյանքի հարգման իրավունքների նկատմամբ

(պարբ. 65): Ինչ վերաբերում է միջամտությունների հիմնավորված լինելուն, ՄԻԵԴ–ը համարեց, որ լիազորությունները բավարար չափով սահմանափակված չէին, և որ դրանց կապակցությամբ չկային չարաշահումը բացառող համարժեք իրավական երաշխիքներ: Ուստի դրանք չէին «համապատասխանում օրենքին», և տեղի էր ունեցել 8–րդ հոդվածի խախտում (պարբ. 87):

3. Ուժի գործադրումը խուզարկության ընթացքում

Քննիչները պետք է սահմանափակեն անձի բնակարանի խուզարկության կամ անձի խուզարկության ընթացքում ուժի գործադրումը: Ավելորդ ուժի գործադրման դեպքում մեթոդը հավանաբար անհամաչափ կդառնա հետապնդվող իրավաչափ նպատակին՝ առաջացնելով 8–րդ հոդվածի խախտում:

Ավելին՝ քննիչները պետք է նաև տեղյակ լինեն, որ խուզարկության և առգրավման ընթացքում ուժի գործադրումը կարող է որոշ հանգամանքներում առաջացնել 3–րդ հոդվածի (խոշտանգման և անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելք) խախտում: Այս առումով քննիչները պետք է ապահովեն, որպեսզի խուզարկությունը և առգրավումն իրականացվեն մարդու արժանապատվությանը համահունչ եղանակով՝ չմիջամտելով անձի ֆիզիկական կամ բարոյական ամբողջականությանը:

Դատական նախադեպի օրինակներ

***Jalloh–ն ընդդ. Գերմանիայի* (Մեծ պալատի վճիռ՝ 11 հուլիս, 2006)**

Գանգատաբերը փողոցային թմրավաճառ էր, ով թմրադեղերը պահում էր իր բերանում: Թեպետ դատարանն ընդունեց, որ քննիչների համար հույժ կարևոր էր պարզել թմրադեղերի ստույգ քանակը և որակը, դատարանը չէր կարող համաձայնվել, որ փսխողական դեղեր ընդունելուն հարկադրելն ապացույցների ստացման համար պարտադիր նախապայման էր. իշխանությունները կարող էին սպասել, մինչև դեղերն օրգանիզմից դուրս կգային բնական ճանապարհով (պարբ. 77):

Դատարանը եզրակացրեց, որ վիճարկվող միջոցառումները հա-

սել էին ծանրության այն նվազագույն աստիճանին, որպեսզի խնդիրը հայտնվեր 3–րդ հոդվածի տիրույթում: Դատարանը նշեց.

Իշխանությունները գանգատաբերի կամքին հակառակ կոպտորեն միջամտել էին նրա ֆիզիկական և հոգեկան ամբողջականության նկատմամբ: Նրանք անձին ստիպել էին փսխել, սակայն ոչ թե թերապևտիկ նպատակներով, այլև այն ապացույցները ստանալու համար, որոնք իրենք նույն կերպ կարող էին ստանալ նվազ գործադրվող մեթոդների գործադրմամբ: Վիճարկվող միջոցառման իրականացման եղանակը չէր կարող գանգատաբերի մեջ չառաջացնել վախի, տառապանքի և ստորակարգության զգացումներ, որոնք ի զորու էին նվաստացնելու և ստորացնելու նրան: Ավելին՝ ընթացակարգը ռիսկեր էր ստեղծում գանգատաբերի առողջության համար՝ թեկուզ նրանով, որ հնարավոր չէր նախապես ստանալ պատշաճ անամնեզը: Թեպետ մտադրությունը դա չէր, միջոցառումն իրականացվել էր այնպես, որ գանգատաբերին պատճառել էր թե՛ ֆիզիկական ցավ, թե՛ հոգեկան տառապանք (պարբ. 82):

***Keegan–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 18 հուլիս, 2006)**

Դատարանը համարեց, որ.

• Տան և անձնական կյանքի նկատմամբ միջամտելու լիազորությունների իրականացումը պետք է չգերազանցի ողջամիտ սահմանները, որպեսզի նվազագույնի հասցվի նման միջոցառումների ազդեցությունն անհատների՝ 8–րդ հոդվածով երաշխավորված անձնական տիրույթի վրա, որը կարևոր է անվտանգության և բարօրության տեսանկյունից... Այն դեպքում, երբ հասցեի և քննվող հանցագործության միջև կապը հաստատելու հիմնական քայլերն արդյունավետորեն չեն կատարվել, արդյունքում կազմակերպված ոստիկանական գործողությունը, որը գանգատաբերներին զգալի վախ և տագնապ էր պատճառել, չի կարող համաչափ համարվել (պարբ. 34): Ուստի դատարանը եզրակացնում է, որ սույն գործով պատշաճ հավասարակշռություն չի ապահովվել, և որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8–րդ հոդվածի խախտում (պարբ. 36):

Բ. Հաղորդակցությանը միջամտելը և հաղորդակցությունը հսկելը

Այս բաժինն անդրադառնում է անձի նամակագրության հարգման իրավունքին և հաղորդակցությունը միջամտելու ու հաղորդակցությունը հսկելու ընթացքում, ինչպես նաև անձանց տեսողական հսկման ընթացքում անձնական կյանքի հարգման իրավունքին:

Աշխատանք մասնակիցների համար

Մասնակիցները պետք է քննարկեն հաղորդակցությանը միջամտելու կամ քննության ժամանակ հսկողություն իրականացնելու համար կիրառվող մեթոդները: Դա կարող է ներառել մասնավորապես հեռախոսային խոսակցություններին, էլեկտրոնային փոստին և նամակներին միջամտելը, ինչպես նաև ձայնային կամ տեսողական հսկումը:

1. Հաղորդակցությանը միջամտելը

8–րդ հոդվածի համաձայն՝ քննիչները պարտավոր են հարգել անձի նամակագրության իրավունքը: Անձի նամակագրության հարգման իրավունքի նպատակն է պաշտպանել մասնավոր հաղորդակցության գաղտնիությունը, և այն մեկնաբանվել է որպես այլ անձանց հետ չընդհատված և չգրաքննված հաղորդակցություն ունենալու իրավունք[25]:

«Նամակագրություն» եզրույթը բավական լայն է և ներառում է հաղորդակցության ձևերի մեծ մասը, ուստի նաև հանցագործության կանխարգելման կամ քննության համար օգտագործվող տարաբնույթ հնարքներ՝ ներառյալ հաղորդակցությանը միջամտելը (*Malone–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 2 օգոստոս, 1984), պարբ. 64), լսման էլեկտրոնային սարքերի օգտագործումը (*Khan–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 12 մայիս, 200), պարբ. 25, *PG–ն և JH–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 2 սեպտեմբեր, 2001), պարբ. 37 և 42), էլեկտրոնային փոստի մոնիթորինգը (*Copland–ն ընդդ. Միացյալ Թագավո-*

[25] I. Roagna, Protecting the Right to Respect for Private and Family Life under the European Convention on Human Rights, Council of Europe Human Rights Handbooks (2012 Council of Europe Publishing), p. 32.

ության (վճիռ՝ 3 ապրիլ, 2007), պարբ. 41–42) և հսկողության GPS–ային սարքերի օգտագործումը (*Uzun–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 2 սեպտեմբեր, 2010), պարբ. 49–53), որոնք առաջացնում են միջամտություն 8–րդ հոդվածով նախատեսված իրավունքների իրականացման նկատմամբ[26]:

Քաղաքացիների նկատմամբ գաղտնի հսկողության լիազորությունները Կոնվենցիայով թույլատրելի են միայն այնքանով, որքանով դրանք իրականացվում են բացառապես ժողովրդավարական ինստիտուտների երաշխավորման համար: ՄԻԵԴ–ն ընդունում է, որ փոստի, նամակագրության և հաղորդակցության հսկողությունը բացառիկ հանգամանքներում անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում ի շահ ազգային անվտանգության և/կամ անկարգությունների կամ հանցագործության կանխարգելման[27]:

Այսպես՝ ապացույցներ հավաքելիս անհրաժեշտ են որոշ երաշխիքներ, որպեսզի նամակագրության նկատմամբ միջամտությունն անհամաչափ միջամտություն չառաջացնի 8–րդ հոդվածի նկատմամբ: Այնուամենայնիվ, ինչպես 8–րդ հոդվածով նախատեսված իրավունքների նկատմամբ միջամտության այլ ձևերի, այնպես էլ այս ձևերի դեպքում քննիչները պարտավոր են ապահովել հաղորդակցության նկատմամբ իրականացված միջամտության համապատասխանությունը 8–րդ հոդվածի 2–րդ մասի պահանջներին:

8–րդ հոդվածի պահանջների բավարարման համար անհրաժեշտ երաշխիքները կարող են տարբեր լինել՝ կախված գործի հանգամանքներից, մասնավորապես տարբեր կարող են լինել հնարավոր միջոցառումների բնույթը, շրջանակը և տևողությունը, դրանց կիրառության համար պահանջվող հիմքերը, նման միջոցառումներ թույլատրելու, իրականացնելու և վերահսկելու իրավասությամբ օժտված մարմինները և ազգային օրենսդրությամբ նախատեսված իրավական պաշտպանության միջոցները[28]:

---

[26] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 68.

[27] I. Roagna, Protecting the Right to Respect for Private and Family Life under the European Convention on Human Rights, Council of Europe Human Rights Handbooks (2012 Council of Europe Publishing), p. 51-52.

[28] I. Roagna, Protecting the Right to Respect for Private and Family Life under the European

Դատական նախադեպի օրինակներ

***Lüdi–ն ընդդ. Շվեյցարիայի* (վճիռ՝ 15 հունիս, 1992)**

Գանգատաբերի նկատմամբ նախնական քննություն հարուցելիս քննող դատավորը կարգադրել էր վերահսկողություն սահմանել նրա հեռախոսային հաղորդակցության նկատմամբ (պարբ. 38): ՄԻԵԴ–ը համարեց, որ «կասկածից վեր է այն հանգամանքը, որ հեռախոսի գաղտնալսումը միջամտություն էր պարոն Լուդիի անձնական կյանքի և նամակագրության նկատմամբ»: Միջամտության՝ 8–րդ հոդվածի 2–րդ մասի պահանջներին համապատասխանությունը քննարկելիս դատարանը նշեց, որ «տվյալ միջոցառումը հիմնված էր Բեռնի քրեական դատավարության օրենսգրքի 171 b և 171 c հոդվածների վրա», որոնք կիրառելի էին անգամ քննության նախնական փուլի նկատմամբ, երբ բավարար հիմքեր կային՝ կարծելու, որ շուտով կատարվելու է հանցագործություն: Ավելին՝ դատարանը նշեց, որ «այն նպատակաուղղված է եղել հանցագործության կանխարգելմանը», և որ դատարանը համոզված էր, որ այն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում (պարբ. 39):

***Klass–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 6 սեպտեմբեր, 1978)**

ՄԻԵԴ–ը պետք է վճռեր, թե արդյոք Գերմանիայի օրենսդրությունը, որը թույլատրում էր բացել նամակները և գաղտնալսումներ կատարել ազգային անվտանգությունը երաշխավորելու և անկարգությունները և հանցագործությունները կանխելու համար, խախտում էր գանգատաբերի իրավունքները՝ չապահովելով հնարավոր չարաշահումները բացառող համարժեք երաշխիքներ: ՄԻԵԴ–ը եզրակացրեց, որ հաշվի առնելով լրտեսության և գաղտնալսման տեխնիկական առաջընթացը և ահաբեկչության ընդլայնումը Եվրոպայում՝ գաղտնի հսկողության նկատմամբ Գերմանիայի պետական վերահսկման համակարգը բավարարում էր Կոնվենցիայի 8–րդ հոդվածի պահանջները (պարբ. 60):

Դատարանը տարբեր գործերով կայացված վճիռներում հետևողականորեն նշել է, որ ոստիկանական քննության նպատակով հաղոր-

---

Convention on Human Rights, Council of Europe Human Rights Handbooks (2012 Council of Europe Publishing), p. 51-52.

դակցությանը միջամտելու պարագայում «օրենքի դրույթները պետք է բավականաչափ պարզ լինեն, որպեսզի քաղաքացիները համարժեք չափով ընկալեն այն հանգամանքները և պայմանները, որոնցում և որոնցով պետական մարմիններն իրավունք ունեն կիրառելու անձնական կյանքի և նամակագրության հարգման իրավունքի նկատմամբ միջամտության այս՝ գաղտնի և վտանգի հավանականություն առաջացնող տեսակը» (*Bykov–ն ընդդ. Ռուսաստանի* (Մեծ պալատի վճիռ՝ 10 մարտ, 2009), պարբ. 78):

Դատական նախադեպի օրինակներ

***Bykov–ն ընդդ. Ռուսաստանի* (Մեծ պալատի վճիռ՝ 10 մարտ, 2009)**

Այն սկզբունքը, որից բխում է, որ հաղորդակցությանը միջամտելու մասին օրենքը պետք է «բավականաչափ պարզ լինի, որպեսզի քաղաքացիները համարժեք չափով ընկալեն այն հանգամանքները և պայմանները, որոնցում և որոնցով պետական մարմիններն իրավունք ունեն կիրառելու» այդ միջոցառումները, հավասարապես կիրառելի է նաև «ռադիոհաղորդիչ սարքի նկատմամբ, որը ներխուժման աստիճանով և բնույթով գրեթե նույնն է, ինչ հեռախոսի գաղտնալսումը» (պարբ. 79):

Սույն գործը վերաբերում էր ռադիոհաղորդիչ սարքին: Գանգատաբերը չէր ունեցել կամ գրեթե չէր ունեցել որևէ երաշխիքներ այն վարույթի շրջանակում, որում կարգադրվել և իրականացվել էր V.–ի հետ նրա խոսակցության նկատմամբ միջամտությունը: Մասնավորապես միջամտություն կիրառելու՝ իշխանությունների իրավական հայեցողությունը որևէ պայմանով պայմանավորված չէր եղել, և սահմանված չէին եղել դրա իրականացման շրջանակը և ձևը: Չէին ընձեռվել որևէ այլ՝ կոնկրետ երաշխիքներ: Հաշվի առնելով երաշխիքներ ընձեռող որոշակի իրավական կարգավորումների բացակայությունը՝ ՄԻԵԴ–ը համոզիչ չհամարեց Կառավարության այն փաստարկը, թե գանգատաբերը կարող էր դատական վարույթ հարուցելու միջոցով հասնել նրան, որ «օպերատիվ փորձարարության» արդյունքներն անօրինական ճանաչվեին, կամ պահանջել, որպեսզի դրա արդյունքներն անթույլատրելի ճանաչվեն որպես անօրինական ճանապարհով ստացված ապացույցներ (պարբ. 80):

Հետևաբար, որոշակի և մանրակրկիտ իրավական կարգավորումների բացակայության դեպքում հսկողական այս հնարքի կիրառությունն «օպերատիվ փորձարարության» շրջանակում չէր ուղեկցվել հնարավոր տարբեր չարաշահումները բացառող համարժեք երաշխիքներով: Ըստ այդմ, դրա կիրառությունը կարող էր կամայական լինել և չբավարարել օրինականության պահանջը (պարբ. 81):

2. Տեսողական դիտարկումը

Հանրային վայրերում տեսողական դիտարկման միջոցով օպերատիվ–հետախուզական տվյալներ հավաքելու մասով 8–րդ հոդվածը կիրառելի է միայն այն դեպքում, երբ պետության գործողությունները չեն սահմանափակվում պարզ դիտարկմամբ և ներառում են նաև անհատների ակտիվ վերահսկողություն (*Peck–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 28 հունվար, 2003), պարբ. 57–63): Անձի ակտիվ վերահսկողությունը կարող է ներառել ձայնային և տեսագրողական դիտարկումը, որը նույնպես պետք է բավարարի 8–րդ հոդվածի 2–րդ մասի պահանջներին:

Դատական նախադեպի օրինակներ

***PG–ն և JH–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (25 սեպտեմբեր, 2001)**

Սույն գործով տվյալ ժամանակահատվածում գոյություն չէր ունեցել ներպետական օրենք, որը կկարգավորեր լսողական գաղտնի սարքերի կիրառությունը: Ուստի միջամտությունը չէր եղել «օրենքին համապատասխան»՝ ի հեճուկս Կոնվենցիայի 8–րդ հոդվածի 2–րդ մասի պահանջի, ուստի խախտել էր 8–րդ հոդվածը (պարբ. 38):

***Perry–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (17 հուլիս, 2003)**

Ներպետական դատավորը թերացումներ էր արձանագրել այն առումով, որ ոստիկանները չէին կատարել Վարքագծի կանոնագրքի պահանջները նույնացման համար տեսանյութերի ձեռքբերման մասով, մասնավորապես նրանք գանգատաբերից չէին ստացել վերջինիս համաձայնությունը տեսագրման համար, նրան չէին տեղեկացրել ճանաչման նպատակով այդ տեսագրությունը ստեղծելու և օգտագործելու կամ այդ կապակցությամբ նրա իրավունքների մասին (մասնավորապես նա

պետք է հնարավորություն ստացած լիներ դիտելու տեսանյութը, առարկություններ հայտնելու դրա բովանդակությանը և պետք է իրավունք ունենար՝ վկաների կողմից տեսանյութի դիտման ժամանակ պահանջելու իր փաստաբանի ներկայությունը): Հաշվի առնելով ներպետական դատարանի այս եզրակացությունները՝ ՄԻԵԴ–ը վճռեց, որ «չկա այլ տարբերակ, քան եզրակացնել, որ գանգատաբերի գործով տվյալ միջոցառման կիրառության եղանակը չէր համապատասխանել ներպետական օրենսդրության պահանջին» (պարբ. 47):

3. ԱՆՁԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Քրեական որոշ գործերի քննության ընթացքում քննիչներին անհրաժեշտ է լինում որոշում կայացնել կասկածյալին, մեղադրյալին, տուժողին կամ վկային փորձաքննության ենթարկելու վերաբերյալ:

Աշխատանք մասնակիցների համար

Մասնակիցները պետք է քննարկեն այն հանգամանքները, որոնցում իրենք անհրաժեշտ կհամարեին կասկածյալին, մեղադրյալին, տուժողին կամ վկային բժշկական կամ դատաբժշկական փորձաքննության ենթարկելու մասին որոշում կայացնելը:

Նման դեպքերի օրինակներ կարող են լինել, ի թիվս այլոց, այնպիսի քրեական գործերով ապացույցների ստացման համար իրականացվող դատաբժշկական փորձաքննությունները, ինչպիսիք են սեռական բռնությանն առնչվող գործերը, հոգեկան հիվանդության ծանրությունը պարզելու նպատակով կասկածյալի հոգեբանական փորձաքննությունը կամ տուժողի բժշկական փորձաքննությունը բռնությամբ զուգորդված հարձակումից հետո:

Այնուհանդերձ, 8–րդ հոդվածով նախատեսված անձնական կյանքի պաշտպանության շրջանակը կիրառելի է, երբ անձն առանց իր համաձայնության կամ հարկադրաբար ենթարկվում է բժշկական կամ դատաբժշկական փորձաքննության, նույնիսկ երբ դա խոր կամ ծավալուն

փորձաքննություն չէ[29]: Հետևաբար, նման միջոցառումների կիրառությունը պետք է հիմնավորված լինի (համապատասխանի օրենքին, հետապնդի իրավաչափ նպատակ և անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում):

1. Բժշկական փորձաքննությունը և դատաբժշկական ապացույցները

Կասկածյալի, մեղադրյալի, տուժողի և վկայի բժշկական փորձաքննությունը՝ ներառյալ դատաբժշկական ապացույցներ ձեռք բերելու նպատակով իրականացված փորձաքննությունը, նույնիսկ երբ դա խոր կամ ծավալուն փորձաքննություն չէ, միջամտում են անձնական կյանքի իրավունքի նկատմամբ, եթե փորձաքննությունը պարտադիր է: ՄԻԵԴ–ը համարել է, որ անձի ֆիզիկական ամբողջականության նկատմամբ անգամ ոչ էական միջամտությունը կարող է հայտնվել 8–րդ հոդվածի դաշտում, եթե դա իրականացվում է անձի կամքին հակառակ (*Storck–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 16 հունիս, 2005), պարբ. 143): Ֆիզիկական ամբողջականության իրավունքի, ուստի նաև անձնական կյանքի հարգման իրավունքի նկատմամբ միջամտություն կարող է արձանագրվել այն դեպքերում, երբ անձի կամքին հակառակ տրվել է դեղորայք, կամ՝ կարգադրվել է անձին հարկադրաբար ենթարկել բժշկական կամ դատաբժշկական փորձաքննության:

Ապացույցների «դատական փորձաքննություն» է համարվում գիտական գործընթացների և գիտելիքի կիրառությամբ և իրավական նպատակների համար որևէ բան ուսումնասիրության ենթարկելը: Այսինքն՝ «փորձաքննությամբ ստացված ապացույցը» սովորաբար հանցագործության իրեղեն ապացույցը, օրինակ՝ արյունը, սերմը կամ մանրաթելն է, որը ենթարկվում է գիտական ուսումնասիրության: Դատական փորձագիտության շրջանակում գիտության տարբեր ճյուղե-

[29] I. Roagna, Protecting the Right to Respect for Private and Family Life under the European Convention on Human Rights, Council of Europe Human Rights Handbooks (2012 Council of Europe Publishing), p. 24.

րից ստացված գիտելիքները կիրառվում են իրավական վարույթի կամ փաստարկների նկատմամբ:

Այնուամենայնիվ, այդ միջոցառումները կարող են 8–րդ հոդվածի իմաստով հիմնավորված ճանաչվել, և ՄԻԵԴ–ը համարել է, որ թեպետ հարկադիր բժշկական փորձաքննությունը կարող է անձնական կյանքի խախտում առաջացնել, այն կարող է նաև 8–րդ հոդվածի 2–րդ մասի իմաստով անհրաժեշտ լինել այլոց իրավունքների պաշտպանության համար: Մասնավորապես ՄԻԵԴ–ն ընդունել է, որ դատական բժշկի կողմից իրականացվող բժշկական փորձաքննությունը կարող է քրեական գործով քննության շրջանակում կեղծ մեղադրանքը բացառող լուրջ երաշխիք լինել (*Devrim Turan–ն ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 2 մարտ, 2006), պարբ. 20):

Կախված հարկադրանքի ծանրությունից և դատաբժշկական փորձաքննությանը մասնակցելուց անձի հրաժարվելու դեպքում ուժի կիրառության հանգամանքից՝ տվյալ իրավիճակում կիրառելի կարող է դառնալ նաև ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածը, որն արգելում է խոշտանգումը և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքը:

Դատական նախադեպի օրինակներ

***F–ն ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 22 հուլիս, 2003)**

Գանգատաբերի կինը ոստիկանությունում՝ անազատության մեջ, գինեկոլոգիական փորձաքննության էր ենթարկվել բժշկի կողմից (պարբ. 32): Գանգատաբերի կինը բողոքել էր իշխանություններին փորձաքննությունն իր կամքին հակառակ իրականացնելու մասին, սակայն Կառավարությունը պնդում էր, որ առանց նրա համաձայնության հնարավոր չէր լինի ի կատար ածել փորձաքննությունը (պարբ. 34): ՄԻԵԴ–ը եզրակացրեց, որ տվյալ հանգամանքներում չէր կարելի ակնկալել, որ գանգատաբերի կինը դիմադրություն կցուցաբերի փորձաքննությանը, քանի որ նա խոցելի էր՝ անազատության ողջ ընթացքում լինելով իր նկատմամբ լիակատար հսկողություն իրականացնող իշխանությունների ձեռքում (պարբ. 34): Ուստի տեղի էր ունեցել միջամտություն նրա

անձնական կյանքի հարգման իրավունքի նկատմամբ, ուստի դատարանը պետք է անդրադառնար միջամտության հիմնավորված լինելու հարցին (պարբ. 35): ՄԻԵԴ–ը վճռեց, որ փորձաքննությունը չէր համապատասխանել Թուրքիայի ներպետական օրենսդրությանը, ուստի խախտել էր ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածը (պարբ. 44):

***Devrim Turan–ն ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 2 մարտ, 2006)**

Գանգատաբերին ձերբակալության առաջին և վերջին օրերին տարել էին գինեկոլոգիական փորձաքննության: Դատարանը նշեց, որ նման փորձաքննության համար անձին հիվանդանոց տեղափոխելը կարող էր գանգատաբերին անհարմարություն պատճառել: Դատարանը, սակայն, նշեց, որ «դատական բժշկի կողմից ազատազրկվածներին բժշկական զննության ենթարկելը կարող է սեռական ոտնձգության կամ վատ վերաբերմունքի կեղծ մեղադրանքները բացառող լուրջ երաշխիք լինել»: Ավելին՝ ակնհայտ է, որ երբ գանգատաբերը հրաժարվել էր գինեկոլոգիական զննության ենթարկվել, նրա նկատմամբ ուժ չէր գործադրվել, և բժիշկները ձեռնպահ էին մնացել այդ փորձաքննության կատարումից (պարբ. 20):

Այսպիսով՝ դատարանը համարեց, որ գանգատաբերին ձերբակալության առաջին և վերջին օրերին գինեկոլոգիական փորձաքննության համար հիվանդանոց տեղափոխելու փաստն ինքնին չէր հասել ծանրության այն նվազագույն աստիճանին, որը Կոնվենցիայի 3–րդ հոդվածի իմաստով հավասարազոր կլիներ նվաստացուցիչ վերաբերմունքի (պարբ. 21):

2. Հոգեբուժական փորձաքննությունը

Որոշ դեպքերում քննիչներին անհրաժեշտ է լինում նաև քրեական գործով քննության ընթացքում կասկածյալի կամ մեղադրյալի դատահոգեբուժական փորձաքննություն նշանակել՝ քրեական վարույթի ընթացքում գնահատելու համար անձի հոգեկան առողջության վիճակը և պարզելու համար, օրինակ, թե արդյոք նա ի վիճակի է դատական քննության մասնակցելու: ՄԻԵԴ–ն իսկապես նշել է, որ «հանցագործության մեջ մեղադրված անձի հոգեկան վիճակը պարզելու համար հո-

գեբուժական փորձաքննություն նշանակելն անհրաժեշտ միջոցառում է մնում, որը պաշտպանում է այն անձանց, ովքեր ի վիճակի են հանցանք գործելու՝ չունենալով մտավոր ունակության լիարժեք վիճակ» (*Worwa–ն ընդդ. Լեհաստանի* (վճիռ՝ 27 նոյեմբեր, 2003), պարբ. 82):

Դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը *փաստացի* չի հակասում անհատի 8–րդ հոդվածով նախատեսված իրավունքներին: Այնուհանդերձ, անհրաժեշտ է, որոշ երաշխիքներ ներդնելով, ապահովել անձի համարժեք պաշտպանվածությունը և իշխանություններից պահանջել երաշխավորել, որպեսզի միջոցառումները չխախտեն պատշաճ հավասարակշռությունն անհատի իրավունքների, մասնավորապես անձնական կյանքի հարգման իրավունքի և արդարադատության պատշաճ իրականացումն ապահովելու նպատակի միջև (*Worwa–ն ընդդ. Լեհաստանի* (վճիռ՝ 27 նոյեմբեր, 2003), պարբ. 82): Մասնավորապես անհրաժեշտ է խուսափել հարկադրական միջոցառումներից:

Դատական նախադեպի օրինակներ

***Botka–ն և Paya–ն ընդդ. Ավստրիայի* (վճիռ՝ 29 մարտ, 1993)**

Փորձագետը՝ S.–ն, առաջին գանգատաբերի հոգեկան առողջության մասին եզրակացությունը պատրաստել էր պրն R.–ի նկատմամբ քրեական վարույթի ընթացքում, ով կասկածվում էր առաջին գանգատաբերի և վերջինիս եղբոր նկատմամբ խարդախություն կատարելու մեջ: Պրն R.–ի նկատմամբ մեղադրանքի մեջ, ի թիվս այլ խնդիրների, առաջ էր քաշվում առաջին գանգատաբերի հոգեկան առողջության հարցը: Հանձնաժողովը նշեց.

... Տվյալ եզրակացությունը պատրաստելու համար բժիշկ S.–ին անհրաժեշտ չէր որոշակի փորձաքննության ենթարկել առաջին գանգատաբերին: Մասնավորապես, երբ 1988 թվականի հոկտեմբերին բժիշկ S.–ին որպես փորձագետ նշանակելուց հետո առաջին գանգատաբերը հրաժարվեց փորձաքննության ենթարկվել, չիրականացվեցին լրացուցիչ քայլեր, օրինակ՝ հարկադրական միջոցառումներ: Այս հանգամանքներում հանձնաժողովը գտնում է, որ փորձագետ S.–ին

առաջին գանգատաբերի հոգեկան առողջության հարցերի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն պատրաստելու համար նշանակելը չի ոտնահարում առաջին գանգատաբերի՝ ՄԻԵԿ–ի 8–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված անձնական կյանքի հարգման իրավունքը (պարբ. 3):

***Worwa–ն ընդդ. Լեհաստանի* (վճիռ՝ 27 նոյեմբեր, 2003)**

Դատարանը վճռեց, որ տվյալ գործով չէր պահպանվել հավասարակշռությունն անձի իրավունքի, մասնավորապես ընտանեկան կյանքի հարգման իրավունքի և արդարադատության պատշաճ իրականացումն ապահովելու անհրաժեշտության միջև: Մասնավորապես ՄԻԵԴ–ը նշեց.

Մեկ դատարանի տարածքային իրավազորության ներքո գործող դատական իշխանությունները կարճատև պարբերականությամբ և կրկնողաբար հրավիրել էին գանգատաբերին՝ անցնելու դատահոգեբուժական փորձաքննություն, որից զատ նա, մի քանի անգամ հասնելով նշված վայրը, տուն էր ուղարկվել՝ տեղեկացվելով, որ հրավերի մեջ նշված ամսաթվով հանդիպում նշանակված չէ (պարբ. 83):

Հետևապես, ներպետական իշխանությունները չէին գործել պատշաճ ջանասիրությամբ, ուստի հիմնավորված չէր եղել միջամտությունը գանգատաբերի կողմից անձնական կյանքի հարգման իրավունքի իրականացման նկատմամբ (պարբ. 84):

4. ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՀԱՐԳԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԱՍԵՐՈՎ

Անձին վերաբերող տվյալների և տեղեկությունների՝ պետության կողմից հավաքումը և պահպանումն առանց նրա համաձայնության, ինչպես նաև դրանք հասանելի դարձնելն այլ անձանց ցանկացած իրավիճակում վերաբերում են անձի անձնական կյանքին, ուստի տեղավորվում են 8–րդ հոդվածի շրջանակի մեջ[30]:

1. Ապացույցների պահպանումը քննության/քրեական հետապնդման ավարտից հետո

Անձի անձնական կյանքին առնչվող տվյալների պահպանումն ինքնին միջամտություն է 8–րդ հոդվածի իմաստով, և այդ եզրակացության հանգելու տեսանկյունից նշանակություն չունի հետագայում դրանց օգտագործման հանգամանքը (*S–ն և Marper–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 4 դեկտեմբեր, 2008), պարբ. 67): Այնուհանդերձ, երբ որոշվում է, թե արդյոք իշխանությունների կողմից պահպանվող անձնական տեղեկությունն առնչվում է անձնական կյանքին, ՄԻԵԴ–ը հավուր պատշաճի հաշվի կառնի այն առանձնահատուկ համատեքստը, որում արձանագրվել և պահպանվել է տվյալ տեղեկությունը, արձանագրման բնույթը, արձանագրվածի օգտագործման և մշակման ձևը, և ստացված հնարավոր արդյունքները (*S–ն և Marper–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 4 դեկտեմբեր, 2008), պարբ. 67):

Առանց անձի համաձայնության մատնահետք և ԴՆԹ–ի նմուշ վերցնելը միջամտություն է անձնական կյանքի հարգման նկատմամբ, քանի որ մատնահետքը յուրահատուկ տեղեկություն է պարունակում անձի վերաբերյալ, և դրա պահպանումը չի կարող համարվել չեզոք կամ

[30] I. Roagna, Protecting the Right to Respect for Private and Family Life under the European Convention on Human Rights, Council of Europe Human Rights Handbooks (2012 Council of Europe Publishing), p. 33.

անէական: Ինչ վերաբերում է բջջային նմուշներին, ապա դրանք էական ծավալի անձնական տեղեկություններ են պարունակում, և ԴՆԹ–ի պրոֆիլը կարող է որպես գենետիկ հարաբերությունները հաստատելու միջոց ծառայել և հնարավոր դարձնել էթնիկ ծագմանը վերաբերող եզրահանգումները (*S–ն և Marper–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 4 դեկտեմբեր, 2008), պարբ. 68–86):

Հետևապես, ինչպես և 8–րդ հոդվածի նկատմամբ այլ միջամտությունների դեպքում, անձի անձնական կյանքին առնչվող ապացույցների կամ տվյալների պահպանությունը պետք է հիմնավորված լինի 8–րդ հոդվածի 2–րդ մասի դրույթներին համապատասխան, այն է՝ միջամտությունը պետք է համապատասխանի օրենքին, հետապնդի իրավաչափ նպատակ և անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում:

Դատական նախադեպի օրինակներ

***Van der Velden–ն ընդդ. Նիդերլանդների* (ընդունելիության մասին որոշումը՝ 7 դեկտեմբեր, 2006)**

Այս գործը վերաբերում էր բջջային նյութի և դրա հիման վրա կազմված ԴՆԹ պրոֆիլի պահպանմանը: Դատարանը համարեց, որ «հաշվի առնելով, թե ապագայում ինչ հնարավոր նպատակների կարող է ծառայեցել հատկապես բջջային նյութը, նյութի համակարգված պահպանումը գերազանցում է նույնականացման չեզոք հատկանիշների, օրինակ՝ մատնահետքի շրջանակը, ինչպես նաև այնքան ներխուժող է, որ միջամտություն է առաջացնում անձնական կյանքի հարգման՝ Կոնվենցիայի 8–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված իրավունքի նկատմամբ» (պարբ. 2): Դատարանը նաև արձանագրեց, որ.

... առանց որևէ դժվարության ընդունում է այն փաստը, որ ԴՆԹ–ի պրոֆիլի հավաքագրումը և պահպանումը ծառայել է հանցավորության կանխարգելման և այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավաչափ նպատակներին: Այդ հանգամանքը չի փոխվում, եթե նույնիսկ հաշվի առնենք, որ ԴՆԹ–ն որևէ դեր չի խաղացել գանգատաբերի կատարած հանցագործությունների քննության և դա-

տաքննության մեջ: Դատարանը ոչ խելամիտ չի համարում ԴՆԹ–ի փորձաքննություն անցնելու պարտավորություն սահմանելը բոլոր այն անձանց համար, ովքեր դատապարտվել են որոշակի ծանրության հանցագործությունների համար: Ավելին՝ ոչ խելամիտ չեն նաև ընդհանուր կանոնից որոշակի բացառությունները, թեպետ համարվում է, որ վերջիններիս անհրաժեշտ է հնարավորինս նեղ սահմանում տալ՝ անորոշությունից խուսափելու համար (պարբ. 2):

Վերջապես՝ դատարանը գտավ, որ միջոցառումները կարելի էր համարել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»: Այս համատեքստում ՄԻԵԴ–ը նշեց, որ ԴՆԹ–ի տվյալներն անկասկած կարող են էական դեր ունենալ իրավապահ գործունեության մեջ, և որ չնայած տվյալ միջամտության համեմատաբար թեթև լինելու հանգամանքին՝ գանգատաբերը նույնպես կարող էր որոշակի օգուտ քաղել իր ԴՆԹ–ի պրոֆիլը տվյալների համապետական շտեմարանում ներառելուց, քանի որ այդ կերպ նա արագորեն դուրս էր գալիս հանցագործության մեջ կասկածվող անձանց ցանկից այնպիսի գործերի քննության ժամանակ, որոնցով հայտնաբերված կլինեին ԴՆԹ պարունակող նյութեր (պարբ. 2):

***S.–ն և Marper–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 4 դեկտեմբեր, 2008)**

Այս գործով առաջին գանգատաբերի նկատմամբ ավազակային հարձակման փորձի կասկածանքով և երկրորդ գանգատաբերի զուգընկերոջ նկատմամբ ոտնձգության կասկածանքով հարուցված քրեական վարույթի շրջանակում վերցվել էին գանգատաբերների մատնահետքերը և բջիջներից նմուշներ, և ձևավորվել էին նրանց ԴՆԹ պրոֆիլները: Տվյալները պահպանվել էին անժամկետ պահպանումը թույլատրող օրենսդրության հիման վրա, չնայած որ նրանցից առաջինն արդարացվել էր, իսկ երկրորդի նկատմամբ քրեական վարույթը՝ կարճվել (պարբ. 113): Դատարանը նշեց.

… պետական իշխանության մարմինների կողմից անձնական տվյալների պահպանումը և պահպանությունը՝ անկախ այդ տվյալները ձեռք բերելու եղանակից, ինքնին պետք է համարել տվյալ անձի անձնական

կյանքի շահերի վրա որոշակի ազդեցություն ունեցող հանգամանք՝ անկախ հետագայում այդ տվյալներն օգտագործելու կամ չօգտագործելու հանգամանքից: Չդատապարտված անձանց տվյալների պահպանումը կարող է հատկապես վնասակար լինել անչափահասների դեպքում, ինչպիսին առաջին գանգատաբերն է, հաշվի առնելով նրանց առանձնահատուկ վիճակը և նրանց զարգացման և հասարակությանն ինտեգրվելու կարևորությունը ... դատարանը համարում է, որ պետք է առանձնահատուկ ուշադրությամբ վերաբերվել անչափահասներին այն վնասներից պաշտպանելուց, որոնք կարող են պատճառվել, եթե քրեական հանցագործության համար արդարացումից հետո նրանց անձնական տվյալները պահպանվեն իշխանության մարմինների կողմից (պարբ. 124):

Եզրափակելով դատարանը վճռեց, որ հանցագործության մեջ կասկածվող, սակայն չդատապարտված անձանց մատնահետքերի, բջջային նմուշների և ԴՆԹ պրոֆիլների պահպանության լիազորությունների համատարած և անխտիր բնույթը չէր ապահովում արդար հավասարակշռությունը մրցակցող հանրային և մասնավոր շահերի միջև, և որ պատասխանող պետությունը գերազանցել էր այս առումով իրեն թողնված հայեցողության ընդունելի սահմանները: Ըստ այդմ, տվյալ պահպանությունը համարվեց անհամաչափ միջամտություն գանգատաբերների անձնական կյանքի հարգման իրավունքի նկատմամբ, որը չի կարող անհրաժեշտ համարվել ժողովրդավարական հասարակությունում (պարբ. 125):

2. Անձնական կյանքին առնչվող պարտավորությունները

Հետևապես, անհատի անձնական կյանքին առնչվող տեղեկությունների՝ հանրային իշխանության մարմնի կողմից պահպանությունը և օգտագործումը միջամտություն են առաջացնում 8–րդ հոդվածի 1–ին մասով երաշխավորված անձնական կյանքի հարգման իրավունքի նկատմամբ (*Panteleyenko–ն ընդդ. Ուկրաինայի* (վճիռ՝ 29 հունիս, 2006), պարբ. 56): Տեղեկությունների օգտագործումը որպես այդպիսին՝ ներառյալ տեղեկությունների բացահայտումը հանրությանը կամ այլ սուբյեկտներին

վարույթի ընթացքում պետք է 8–րդ հոդվածի 2–րդ մասին համապատասխան հիմնավորված լինի:

Դատական նախադեպի օրինակներ

***Z–ն ընդդ. Ֆինլանդիայի* (վճիռ՝ 25 փետրվար, 1997)**

Գանգատաբերը բողոքում էր, որ խնդրո առարկա բժշկական տվյալները գաղտնիության 10–ամյա սահմանափակումից հետո՝ 2002 թվականից սկսած, հասանելի կդառնան հանրությանը: Դատարանը նշեց, որ 10–ամյա սահմանափակումը չէր համապատասխանում վարույթի մասնակիցների ցանկություններին կամ շահերին, քանի որ նրանք բոլորը գաղտնիության ավելի երկար ժամկետ էին խնդրել (պարբ. 111):

Դատարանը մասնավորապես նշեց.

... քանի որ խնդրո առարկա տեղեկությունները ձևավորվել էին առանց նրա համաձայնության, նրա անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի նկատմամբ արդեն իսկ տեղի էր ունեցել լուրջ միջամտություն: Հետագա միջամտությունը, որին նա կենթարկվի, եթե բժշկական տեղեկությունները 10 տարի հետո հասանելի դարձվեին հանրությանը, չունի այնպիսի պատճառներ, որոնք ավելի ծանրակշիռ կհամարվեն, քան նրա՝ տվյալներն ավելի երկար ժամկետով գաղտնի թողնելու շահերը: Նյութը 2002 թվականից արդեն հասանելի դարձնելու մասին որոշումն ի կատար ածելու դեպքում կառաջացներ անհամաչափ միջամտություն նրա անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի նկատմամբ՝ խախտելով 8–րդ հոդվածը (պարբ. 112):

***Panteleyenko–ն ընդդ. Ուկրաինայի* (վճիռ՝ 29 հունիս, 2006)**

Ներպետական դատարանը տվյալ գործով հոգեբուժական հիվանդանոցից պահանջել և ստացել էր գանգատաբերի հոգեկան վիճակին և համապատասխան բուժօգնությանն առնչվող գաղտնի տեղեկություններ: Վերջիններս հետագայում դատավորի կողմից բացահայտվել էին կողմերին և դռնբաց նիստի ժամանակ դատական նիստերի դահլիճում ներկա գտնվող այլ անձանց: ՄԻԵԴ–ը վճռեց, որ այդ մանրամասներն անհերքելիորեն համարվում էին գանգատաբերի «անձնական կյանքին» առնչվող տվյալներ, և որ վիճարկվող միջոցառման հետևանքով ընդ-

լայնվել էր այդ տվյալներին ծանոթացած անձանց շրջանակը: Ուստի, ներպետական դատարանի կիրառած միջոցառումը միջամտել էր գանգատաբերի՝ Կոնվենցիայի 8–րդ հոդվածով երաշխավորված իրավունքների նկատմամբ (պարբ. 57–58):

Ինչ վերաբերում է միջամտության հիմնավորված լինելու հարցին, ապա ՄԻԵԴ–ը համարեց, որ միջամտությունը չէր համապատասխանել Ուկրաինայում գործող օրենքին և, որպես այդպիսին, խախտել էր 8–րդ հոդվածը (պարբ. 62):

5. ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հայաստանում քննիչն իրավունք ունի նաև քննության ընթացքում հարցաքննելու կասկածյալին, մեղադրյալին և վկային: Թեպետ այս լիազորությունը չի հակասում ՄԻԵԿ–ի դրույթներին, այն իր հետ բերում է հարցաքննվող անձի իրավունքները պաշտպանելու և նրա նկատմամբ վատ վերաբերմունքը բացառելու պարտականությունները:

Հարցաքննություն կատարելիս քննիչը պետք է իմանա, որ իր մեթոդները չպետք է վատ վերաբերմունք, նվաստացում կամ վնաս պատճառեն անձին: Հարցաքննության որոշ մեթոդներ, հնարավոր է, խախտեն մեղադրյալի 3–րդ հոդվածով նախատեսված իրավունքները (այն է՝ խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի և պատժի արգելքը), ուստի դրանցից պետք է խուսափել: Քննիչները հատկապես չպետք է ֆիզիկական ուժ գործադրեն մեղադրյալի նկատմամբ կամ հուզական վնաս պատճառեն վերջինիս:

Հարցաքննվող անձանց արժանապատվությունը պաշտպանելու և վատ վերաբերմունքը բացառելու համար քննիչները պետք է համապատասխան պայմաններ ապահովեն մեղադրյալի հարցաքննության և վարքագծի կանոնակարգման համար:

1. Հարցաքննության հնարքները

Նախ և առաջ հարցաքննության համար համապատասխան պայմաններ ապահովելու մասով Խոշտանգման կանխարգելման եվրոպական հանձնաժողովը նշել է, որ հարցաքննության համար օգտագործ-

վող տարածքը չպետք է ահաբեկող տեսք ունենա կամ վնաս պատճառի անհատին: Մասնավորապես հարցաքննության համար օգտագործվող սենյակները պետք է համապատասխանեն որոշ նվազագույն չափանիշների: Տարածքը պետք է համարժեքորեն լուսավորված, ջեռուցված և օդափոխված լինի: Հարցաքննության գործընթացի բոլոր մասնակիցները պետք է նստած լինեն նույնանման ոճի և հարմարավետության աթոռների, մասնավորապես՝ հարցաքննող պաշտոնյան չպետք է մեղադրյալի նկատմամբ տեղավորված լինի հեռավոր, գերիշխող կամ բարձրացված դիրքում: Պետք է ընդունել գունային չեզոք պայմաններ. միանգամից դատապարտելի է ճանաչվում որոշ դեպքերում հայտնաբերված հարցաքննության այն սենյակների վիճակը, որոնք ներկված են սև գույնով և կահավորված են ուղիղ հարցաքննվողի աթոռին գամված լուսարձակներով[31]:

Ավելին՝ հարցաքննությունների համար օգտագործվող տարածքները չպետք է ներառեն այն, ինչը Խոշտանգման կանխարգելման եվրոպական հանձնաժողովն անվանում է «կասկածելի առարկաներ», ինչպիսիք են փայտե ձողերը, ավելի պոչերը, բեյսբոլի հարվածափայտերը, մետաղե ձողերը, էլեկտրական հաստ մալուխի կտորները, հրազենի կամ դանակի նմանակները, որոնց ներկայությունը որոշակի արժանահավատություն է ավելացնում այն պնդումներին, որ այդ տարածքներում գտնված ազատությունից զրկված անձանց կամ սպառնացել, կամ հարվածել են այդ առարկաներով (այդ «կասկածելի առարկաների» առկայությունը սովորաբար հիմնավորում են նրանով, որ դրանք իբրև առգրավվել են կասկածյալներից, սակայն եթե դրանք իսկապես իրեղեն ապացույցներ են, ապա դրանք պետք է պատշաճ կերպով պիտակավորված և փաթեթավորված լինեին և պահպանվեին իրեղեն ապացույցների համար նախատեսված հատուկ սենյակում)[32]:

---

[31] European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (“CPT”), 12th General Report on the CPT’s activities covering the period 1 January to 31 December 2001, 12th General Report, CPT/Inf (2002) 15, paragraph 37. Available at: http://www.cpt.coe.int/en/annual/rep-12.htm [accessed 7 ապրիլ, 2016].

[32] 12th General Report, CPT/Inf (2002) 15, paragraph 39.

Աշխատանք մասնակիցների համար

Մասնակիցները քննարկում են հարցաքննությունների ընթացքում կիրառվող հնարքները, և թե իրենց կարծիքով դրանք ինչպես կարող են հարմարեցվել, որպեսզի ապահովվի համապատասխան անձի արժանապատվությունը և բարօրությունը: Մասնակիցները հատկապես քննարկում են տրվող հարցերը, օգտագործվող ձայնի տոնը, ժեստիկուլյացիան, օգտագործվող տարածքը և հարցաքննության տևողությունը:

Բացի դրանից՝ անձի անհատական հանգամանքները, հատկապես խոցելիությունը հաշվի առնելով՝ պետք է հարմարեցումներ կատարել նրա առանձնահատուկ կարիքները հոգալու համար: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս *3–րդ մոդուլը՝ «Խոցելի տուժողների, վկաների, կասկածյալների և մեղադրյալների ներգրավմամբ կատարվող քննությունը»*:

2. Հարցաքննությունները և խոշտանգման, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կիրառությունը

Հարցեր տալու և հարցաքննելու ընթացքում ավելի մեծ է անձի խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի ենթարկվելու ռիսկը: Ինչպես նշվեց, այդ վերաբերմունքը հակասում է 3–րդ հոդվածին, ուստի պետք է արգելված լինի բոլոր հանգամանքներում:

Քրեական գործով քննության ընթացքում հարցաքննվող անձինք հատկապես խոցելի են այս իրավունքի ոտնահարումների նկատմամբ: 3–րդ հոդվածը բացարձակ է, ուստի 3–րդ հոդվածով արգելված վարքագիծը որևէ հանգամանքում չի կարող հանդուրժելի համարվել, անգամ՝ ահաբեկչության դեմ պայքարի (*Tomasi–ն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 27 օգոստոս, 1992)) կամ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի (*Selmouni–ն ընդդ. Ֆրանսիայի* (Մեծ պալատի վճիռ՝ 28 հուլիս, 1999)) համատեքստում: ՄԻԵԴ–ը նշել է, որ քննության կարիքները և հանցավորության դեմ պայքարի անհերքելի դժվարությունները չեն կարող արդարացնել կասկածյալի ֆիզիկական անձեռնմխելիության

առումով նախատեսված պաշտպանության սահմանափակումները (*Ribitsch–ն ընդդ. Ավստրիայի* (վճիռ՝ 4 դեկտեմբեր, 1995), պարբ. 39): *Միշա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված վճռում եվրոպական դատարանը որդեգրեց գրեթե բացարձակ դիրքորոշում խոշտանգումով ստացված ապացույցների կիրառելիության հարցում, նույնիսկ եթե մնացած ապացույցների համակցության մեջ խոշտանգումով ստացված ապացույցների ապացուցողական նշանակությունը նվազ է: Այսպես՝ դատարանը սահմանեց, որ խնդիր կարող է առաջանալ Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին մասի ներքո այն ապացույցի կապակցությամբ, որը ձեռք էր բերվել հոդված 3–ի խախտումով, նույնիսկ եթե դատապարտման համար նման ապացույցի ընդունելիությունը չունի վճռորոշ նշանակություն: Հոդված 3–ի խախտումով ձեռք բերված ապացույցի՝ քրեական դատավարության ժամանակ օգտագործումը, դատավարության արդարության առումով լուրջ խնդիրներ է առաջացնում: **Մեղադրող ապացույցը, լինի դա խոստովանության կամ իրեղեն ապացույցի տեսքով,** որը ձեռք է բերվել բռնությունների գործադրման միջոցով կամ դաժանությունների կամ այլ վերաբերմունքի, որը կարելի է բնութագրել որպես խոշտանգում, երբեք չպետք է դրվի տուժողի մեղքի ապացույցի հիմքում, **անկախ նրա ապացուցողական նշանակությունից**: Ցանկացած այլ եզրահանգում միայն կծառայի բարոյապես դատապարտելի արարքը անուղղակիորեն արդարացնելու համար, որը Կոնվենցիայի հոդված 3–ի հեղինակները ջանացել են արգելել, այլ կերպ ասած՝ «թույլ կտա դաժանությունների գործադրումն օրենքի քողի տակ (կետ 63):

Ավելին՝ *Gäfgen–ն ընդդ. Գերմանիայի* գործով ՄԻԵԴ–ը նշեց, որ «3–րդ հոդվածով նախատեսված իրավունքի բացարձակ բնույթի փիլիսոփայական հիմքերը չեն թույլատրում որևէ բացառություն անել հիմնավորումների կամ շահերի հավասարակշռման նկատառումներով՝ անկախ տվյալ անձի վարքագծից և խնդրո առարկա հանցագործության բնույթից» (*Gäfgen–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 1 հունիս, 2010), պարբ. 107):

Ինչպես նշվեց, որպեսզի վարքագիծը տեղավորվի 3–րդ հոդվածի շրջանակի մեջ, այն պետք է «հասնի ծանրության նվազագույն աստիճա-

նի» (*Ireland–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 18 հունվար, 1978), պարբ. 162): 3–րդ հոդվածի խնդիր առավել հաճախ ծագում է այն ժամանակ, երբ քննիչներն ուժ են գործադրում հարցեր տալու և հարցաքննելու ժամանակ: ՄԻԵԴ–ն իսկապես նշել է, որ «ֆիզիկական ուժի ցանկացած գործադրում, որը խիստ անհրաժեշտ չի դարձել անձի սեփական գործողությունների հետևանքով, նսեմացնում է մարդու արժանապատվությունը և սկզբունքորեն հանդիսանում է 3–րդ հոդվածի խախտում» (*Ribitsch–ն ընդդ. Ավստրիայի* (վճիռ՝ 4 դեկտեմբեր, 1995), պարբ. 38): Ձերբակալելու կամ հարցաքննելու ընթացքում ուժի գործադրումը կարող է անմարդկային վերաբերմունք (*Ribitsch–ն ընդդ. Ավստրիայի* (վճիռ՝ 4 դեկտեմբեր, 1995) կամ՝ կախված ծանրությունից անգամ խոշտանգում առաջացնել: Դիտավորյալ կամ որոշակի նպատակի, օրինակ՝ խոստովանություն կամ տեղեկություններ կորզելու համար վատ վերաբերմունքի գործադրումը կհամարվի ծանրացուցիչ գործոն[33]:

ՀՀ վճռաբեկ դատարանը նույնպես զարգացրել է ընդարձակ նախադեպային իրավունք խոշտանգումով ստացված ապացույցի վերաբերյալ: Նախ՝ Արմեն Սարգսյանի վերաբերյալ գործով 16.09.2009 թ. կայացված որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի **էական խախտմամբ** ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, **ազդել են կամ կարող էին ազդել** ստացված փաստական տվյալների հավաստիության վրա: Այլ կերպ ասած՝ ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, **անկախ գործի համար ունեցած նշանակությունից**, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի

[33] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 36.

կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում: Վճռաբեկ դատարանի այս մոտեցումը նման է Միշա Հարությունյանի գործով ՄԻԵԴ վճռում արտահայտված դիրքորոշմանը այն առումով, որ եթե ապացույցը ստացվում է մարդու հիմնարար իրավունքի խախտումով, դա ինքնին համարվում է քրեադատավարական իրավունքի էական խախտում, և նման ապացույցը, անկախ դրա ապացուցողական նշանակությունից և գործի ելքի վրա դրա ունեցած ազդեցությունից, չի կարող օգտագործվել, այսինքն՝ դրվել մեղադրանքի կամ դատապարտման հիմքում:

Արայիկ Գզոյանի գործով 12.02.2010 թ. կայացրած իր որոշման մեջ Վճռաբեկ դատարանը զարգացրեց վերը նշված մոտեցումը: Սույն գործով առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները հաստատված էին համարել, որ մեղադրյալի կողմից թմրամիջոց ձեռք բերելու փաստը ապացուցված չէր, քանի որ փաստը հաստատվել էր խոշտանգման արդյունքում: Այդուհանդերձ, դատարանը ապացուցված էր համարել նույն թմրանյութի իրացման փաստը և նրան դատապարտել ազատազրկման թմրանյութի իրացման հիմքով: Վճռաբեկ դատարանը բեկանել է երկու դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել է նոր քննության՝ արձանագրելով, որ **եթե թմրանյութ ձեռք բերելու վերաբերյալ ապացույցը ճանաչվել է անթույլատրելի, անթույլատրելի պետք է ճանաչվի նաև դրա հիմքում ընկած փաստական տվյալը:** Վատ վերաբերմունքի արդյունքում ստացված ապացույցի թեկուզ ձևական հիմքով մեղադրանքի հիմքում մնալը ինքնին կարող է հարցականի տակ դնել դատավարության արդարությունը: Այսինքն՝ սահմանվեց բացարձակ մոտեցում. **վատ վերաբերմունքի արդյունքում ստացված ապացույցը երբեք չի կարելի դնել մեղադրանքի կամ դատապարտման հիմքում՝ անկախ դրա ապացուցողական նշանակությունից:**

Դատական նախադեպի օրինակներ

***Aksoy–ն ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 18 դեկտեմբեր, 1996)**

Ոստիկանները գանգատաբերի վրայից հանել էին ողջ հագուստը: Նրան կախել էին թևերից, որոնք կապված էին մեջքի հետևում: Դրա

արդյունքում գանգատաբերն ուժեղ ցավ էր զգացել, և նրա երկու թևերը ժամանակավորապես անշարժացել էին: Դատարանը վճռեց, որ դիտավորյալ նման կերպ վերաբերվելու համար «որոշակի նախապատրաստություն և ջանքեր» էին պահանջում պետական պաշտոնյաներից, ընդ որում՝ ըստ երևույթին նպատակը գանգատաբերից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելն էր (պարբ. 64): Հետևաբար, վարքագիծը 3–րդ հոդվածի իմաստով հավասարազոր էր խոշտանգման:

***Selmouni–ն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 28 հուլիս, 1999)**

Գանգատաբերին բազմաթիվ հարվածներ էին հասցրել հարցաքննության ընթացքում, որոնց վերաբերյալ ՄԻԵԴ–ը համարեց, որ դրանք ենթադրաբար ծանր ցավ էին պատճառել՝ անկախ գանգատաբերի առողջական վիճակից: Գանգատաբերին նաև մազերից բռնած քարշ էին տվել, ստիպել էին վազել միջանցքով, որի երկու կողմերում կանգնած ոստիկանները նրան սայթաքեցրել էին, ստիպել էին ծնկաչոք լինել երիտասարդ մի կնոջ առաջ, ում ինչ–որ մեկն ասել էր. «Նայի՛ր, հիմա ինչ–որ մեկը երգելու է»: Ոստիկաններից մեկը միզել էր կասկածյալի վրա, ինչպես նաև սպառնացել էր՝ ցույց տալով զոդման լամպ, ապա՝ ներարկիչ: ՄԻԵԴ–ը նշեց, որ այդ գործողությունները ոչ միայն բռնի էին, այլ նաև զարհուրելի և նվաստացուցիչ ցանկացած մեկի համար՝ անկախ նրա վիճակից (պարբ. 103):

Այս պայմաններում ՄԻԵԴ–ը համոզված էր, որ գանգատաբերի նկատմամբ գործադրված ֆիզիկական և հոգեկան բռնության ամբողջությունն «ուժեղ ցավ» և տառապանք էր պատճառել և առանձնապես ծանր էր և դաժան: Ուստի վերաբերմունքը 3–րդ հոդվածի իմաստով հավասարազոր էր խոշտանգման (պարբ. 105):

Ծանրության նվազագույն աստիճանը կախված է յուրաքանչյուր գործի անհատական փաստերից և հանգամանքներից (օրինակ՝ ազատությունից զրկված անձին երեք ժամ կանգնած մնալ ստիպելը կարող է անմարդկային վերաբերմունք չլինել, եթե տվյալ անձն առողջ է և լավ մարզավիճակում, թեպետ նույնիսկ այդ պարագայում անձին այդքան երկար կանգնած մնալ ստիպելու համար պետք է լուրջ պատճառներ

լինեն, սակայն եթե անձը տարեց է կամ ունի որևէ այլ հիվանդություն, ապա երեք ժամ կանգնած մնալը կարող է անմարդկային վերաբերմունք համարվել)[34]: Ձեռնաշղթաների կամ ֆիզիկական զսպման այլ միջոցների անհարկի օգտագործումը որոշ դեպքերում կարող է հավասարազոր լինել անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի (*Henaf–ն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 27 նոյեմբեր, 2003)):

Խոշտանգման և վատ վերաբերմունքի արգելքը կարող է կիրառելի լինել նաև սպառնալիքների պարագայում: *Gäfgen–ն ընդդ. Գերմանիայի* գործով անձին ոստիկանությունում ազատությունից զրկված լինելու ընթացքում սպառնացել էին «անտանելի ցավ» պատճառել, եթե նա չբացահայտի անհայտ կորած երեխայի գտնվելու վայրը: Դատարանը վճռեց, որ այդ սպառնալիքը, թեպետ այն ի կատար չէր ածվել, հավասարազոր էր եղել անմարդկային վերաբերմունքի (*Gäfgen–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 1 հունիս, 2010), պարբ. 107–108):

Եթե անձը ոստիկանության կողմից ազատությունից զրկվում է առողջ վիճակում, սակայն ազատ արձակման պահին նրա մոտ արձանագրվում են մարմնական վնասվածքներ, պետությունն է պարտավոր ողջամտորեն բացատրել, թե ինչն է եղել այդ մարմնական վնասվածքների պատճառը, այլապես՝ 3–րդ հոդվածի ներքո կծագի ակնհայտ խնդիր (*Tomasi–ն ընդդ. Ֆրանսիայի*(վճիռ՝ 27 օգոստոս, 1992): Ուստի ազատությունից զրկված լինելու ընթացքում ստացած մարմնական վնասվածքները բացատրելու պարտավորությունը կրողը պետությունն է (*Ciorap–ն ընդդ. Մոլդովայի* (վճիռ՝ 18 հունիս, 2007), պարբ. 60–71):

Դասին առնչվող գրականություն

Ձեռնարկներ և գիտագործնական մեկնաբանություններ

- Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, հատոր 2, ՀՀ դատա-

[34] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 35.

վորների միություն, Երևան, 2013, էջեր 306–320:

Իրավական ակտեր

- ՀՀ Սահմանադրություն
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
- ՄԻԵԿ և կից արձանագրությունները

Դատական ակտեր

- ՀՀ վճռաբեկ դատարանի 16.09.2009 թ. որոշում Արմեն Սարգսյանի գործով
- ՀՀ վճռաբեկ դատարանի 12.02.2010 թ. որոշում Արայիկ Գզոյանի գործով

- Եվրոպական դատարանի որոշումներ
  - *Միշա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 36549/03
  - *Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի*, 01.06.2010 թ.

ԴԱՍ 4. ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ԿԱԼԱՆՔԸ

Այս բաժինը նվիրված է քրեական գործով քննության ընթացքում մինչդատական կալանքի կիրառությանը և կասկածյալների ու մեղադրյալների մարդու իրավունքների վրա դրա հնարավոր ազդեցությանը: Որոշակի հանգամանքներում քննիչները կարող են գործի հանգամանքների լույսի ներքո անհրաժեշտ համարել մեղադրյալների կալանավորումը, սակայն այս բաժնում ներկայացված երաշխիքները պետք է բոլոր դեպքերում պահպանվեն՝ ՄԻԵԿ–ի չափանիշների խախտումներից խուսափելու համար:

Դասի ավարտին մասնակիցները պետք է՝

- գիտելիքներ ձեռք բերեն մինչդատական կալանքի ընթացքում կիրառելի նյութական իրավունքների վերաբերյալ.
- հասկանան, թե այդ նյութական իրավունքներն ինչպես են կիրառվել ՄԻԵԴ–ի կողմից, որպեսզի դրա հիման վրա հասկանան մինչդատական կալանք կիրառելու պարամետրերը.
- ՄԻԵԿ–ին համապատասխանող մինչդատական կալանքի պայմանները հասկանալու նպատակով սովորեն, թե ինչպես է ՄԻԵԴ–ը կիրառել այդ նյութական իրավունքները:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մինչդատական կալանքը մեղադրյալի կալանավորումն է քրեական գործով քննության ընթացքում՝ նախքան նրա գործը դատարան ուղարկելը և նախքան նրա նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելը կամ նրան արդարացնելը: Այս իրավահարաբերությունը կարգավորվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18–րդ գլխով:

Ազատությունից զրկված անձանց իրավունքները սույն ձեռնարկում նշված քննության մեթոդների օգնությամբ պաշտպանելու եղանակների ընկալման համար ելակետայինն այն իրավիճակներն են, որոնք ՄԻԵԴ–ը համարում է ոչ թե տեղաշարժվելու ազատության նկատմամբ պարզ միջամտություն, այլև ազատությունից զրկում:

Այս կապակցությամբ դատարանը համարել է, որ «ազատությունից զրկելու և ազատությունը սահմանափակելու տարբերությունը ... զուտ աստիճանի կամ ծանրության խնդիր է, սակայն ոչ՝ բնույթի կամ բովանդակության» (*Guzzardi–ն ընդդ. Իտալիայի* (վճիռ՝ 6 նոյեմբեր, 1980), պարբ. 93): Ավելին՝ յուրաքանչյուր դեպքում ելակետը գանգատաբերի «կոնկրետ վիճակն է», և պետք է հաշվի առնել մի շարք տարաբնույթ չափորոշիչներ, ինչպիսիք են տվյալ միջոցառման կիրառման տեսակը, տևողությունը, հետևանքները և ձևը (*Guzzardi–ն ընդդ. Իտալիայի* (վճիռ՝ 6 նոյեմբեր, 1980), պարբ. 92):

Գնահատման ենթակա են մի շարք առանձին տարրեր, որոնցից են անձին արգելանքի տակ պահելու տարածքի չափը, պահելու տևողությունը և կիրառված հարկադրանքի աստիճանը, թեպետ վերաբերելի են նաև ազատությունը կորցնելու բնույթը, տևողությունը, հետևանքները և իրավական հիմքերը: Անձին խուզարկելու նպատակով նրան ժամանակավորապես արգելանքի վերցնելը չի կարող համարվել «ազատությունից զրկել»: Սակայն եթե անձին հագցրել են ձեռնաշղթաներ, տեղավորել ոստիկանության մեքենայի մեջ, տարել ոստիկանության բաժին, ապա տեղի է ունեցել «ազատությունից զրկելու» դեպք[35]:

Աշխատանք մասնակիցների համար

Դասընթացավարը նախաձեռնում է լսարանային քննարկում՝ նվիրված մեղադրյալների մինչդատական կալանքի մեջ հայ քննիչների դերակատարմանը և նրան, թե այդ դերն ինչպես կարող է ազդել մեղադրյալի ՄԻԵԿ–ով նախատեսված իրավունքների վրա: Դասընթացավարը պետք է եզրակացնի, որ մինչդատական կալանքը կարող է խախտել ազատության իրավունքը (5–րդ հոդված), իսկ որոշ դեպքերում կալանքի պայմանները կարող են խախտել նաև խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելքը:

[35] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 48.

Անձին կալանավորելն ակնհայտորեն լրջորեն սահմանափակում է անձի ազատությունը: Այնուամենայնիվ, քննիչների կողմից այդ միջոցի կիրառությունը քրեական գործի հանգամանքներում կարող է անհրաժեշտ դառնալ: Անձին ազատությունից զրկելը ոչ միշտ է ինքնաբերաբար խախտում ՄԻԵԿ–ը, քանզի վերջինս նախատեսում է այն հանգամանքների ցանկը, որոնցում կալանքը կարող է անհրաժեշտ լինել:

Աշխատանք մասնակիցների համար

Մասնակիցները քննարկում են քրեական գործով քննության այն հանգամանքները, որոնցում մեղադրյալին կալանավորելը կարող է անհրաժեշտ լինել: Նրանց օրինակները կարող են հիմնվել ներպետական օրենսդրության կամ սեփական պրակտիկ փորձի վրա:

ՄԻԵԿ–ով 5–րդ հոդվածի 1(գ) կետով թույլատրվում է քրեական վարույթի ընթացքում անձին ազատությունից զրկելը: Թույլատրելի է.

«...անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար»:

Այնուամենայնիվ, մարդու իրավունքների միջազգային չափանիշները՝ ներառյալ ՄԻԵԿ–ը, որոշակի երաշխիքներ են պարունակում, որոնք քննիչները պետք է հաշվի առնեն նախքան անձին մինչդատական կալանքի վերցնելը: Այդ երաշխիքները վերաբերում են մինչդատական կալանքի թե՛ նպատակահարմարությանը, թե՛ պայմաններին:

Ամփոփ կարելի է նշել, որ թեպետ ազատությունից զրկելը հանցավորության կանխարգելման և համայնքում առաջացող ռիսկերի փարատման կարևոր գործիք է, ազատությունից զրկելը նաև լուրջ հետևանքներ է առաջացնում անհատի համար[36]: Ուստի քննիչն ունի անձին կա-

[36] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 42-43.

լանավորելու իրավասություն, սակայն վերջինս պետք է իրականացնել զգուշավորությամբ:

Ինչպես նշվեց, կասկածյալի և մեղադրյալի մարդու իրավունքները պետք է հաշվի առնել թե՛ մինչդատական կալանքի նպատակահարմարությունը որոշելիս, թե՛ կալանավորված անձանց նկատմամբ մարդավայել վերաբերմունքը երաշխավորելիս: Հետևապես, այս բաժինը վերաբերում է հետևյալ հարցադրումներին.

- Մինչդատական կալանքի կարգավորումը ՄԻԵԿ–ի 5–րդ հոդվածով և վերջինիս մեջ զետեղված՝ կամայական մինչդատական կալանքի բացառման երաշխիքները.
- Կալանավորված անձանց հետ վարվեցողության համապատասխանությունը ՄԻԵԿ–ի 3–րդ հոդվածին. մասնավորապես նրանց խոցելիությունը վատ վերաբերմունքի նկատմամբ, և քրեական հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց կալանավորման պատշաճ պայմանները:

Մինչդատական կալանքի մանրակրկիտ վերլուծության համար տե՛ս *Մինչդատական կալանքը և քննության հարակից հիմնախնդիրները* մոդուլը:

Կարևոր եզրակացություններ մասնակիցների համար

Ե՞րբ է թույլատրելի ազատությունից զրկելը

Քննիչները պարտավոր են ապահովել մեղադրյալին կալանավորելու մասին որոշման համապատասխանությունը Հայաստանի ներպետական օրենսդրությանը, ինչպես նաև կալանքի համապատասխանությունն ազգային օրենսդրության նյութական և դատավարական նորմերին:

Ներպետական օրենսդրությունը չպետք է կիրառել կամայականորեն: Մասնավորապես 5–րդ հոդվածով նախատեսված երաշխիքների ակնհայտ ոտնահարում է մեղադրյալի անհաղորդակից կալանավորումը:

ՄԻԵԿ–ով թույլատրվում է անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով

անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար:

Քննիչը պետք է ողջամիտ կասկած ունենա առ այն, որ անձը հանցանք է կատարել, այսինքն՝ երբ գոյություն ունեն փաստեր կամ տեղեկություններ, որոնք անաչառ դիտորդին կհամոզեին, որ հնարավոր է, որ ձերբակալվածը հանցանք է գործել: Մեղսագրվող վարքագիծը պետք է հանցագործություն համարվի այն պահին, երբ այն ենթադրաբար կատարվել է:

Ինչ երաշխիքներ գոյություն ունեն անձանց կամայական կալանավորումից պաշտպանելու համար

Քննիչը պետք է կալանավորված յուրաքանչյուր անձի անհապաղ տեղեկացնի ձերբակալության պատճառների և ներկայացվող մեղադրանքի մասին: Քննիչը պարտավոր է որոշակի տեղեկություններ տրամադրել անձին կամ նրա ներկայացուցչին: Ձերբակալված անձին պետք է պարզ, ոչ մասնագիտական և նրան հասկանալի լեզվով ներկայացնել ձերբակալության իրավական և փաստական հիմքերը, որպեսզի նա կարողանա ցանկության դեպքում դատարանում վիճարկել իրեն ազատությունից զրկելու օրինականությունը:

Ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն: Դատավորի մոտ տանելը պետք է տեղի ունենա մինչև չորս օրվա ընթացքում, իսկ ՀՀ Սահմանադրությամբ՝ 72 ժամվա ընթացքում: Այնուհանդերձ, անհապաղ տանելու պահանջը կարող է խախտված համարվել նույնիսկ ավելի կարճ ժամկետի դեպքում, եթե գոյություն չունեն որևէ առանձնահատուկ դժվարություններ կամ բացառիկ հանգամանքներ, որոնք իշխանության մարմիններին թույլ չեն տալիս ձերբակալված անձին ավելի վաղ տանել դատավորի մոտ: Ի վերջո, ազատությունից զրկելու օրինականության դատական ստուգումը պետք է ինքնաբերաբար տեղի ունենա և չի կարող կախված լինել դրա վերաբերյալ ազատությունից զրկված անձի կողմից միջնորդություն ներկայացնելուց:

Ազատությունից զրկված անձի պայմանները և վատ վերաբերմունքը ձերբակալման կամ կալանավորման ընթացքում

Քննիչը պարտավոր է ապահովել, որպեսզի կասկածյալի ազատությունից զրկելը չգերազանցի ժամանակի ողջամիտ տևողությունը: Կալանքի ողջ ընթացքում պետք է շարունակաբար գոյություն ունենա ողջամիտ կասկածը: Այնուհանդերձ, որոշակի ժամանակ անցնելուց հետո կալանքը շարունակելու համար պետք է բերվեն նաև այլ հիմքեր:

ՄԻԵԴ–ի նախադեպային պրակտիկայում ձևավորվել են կալանավորման չորս հիմքեր. 1) մեղադրյալի դատական քննությանը չներկայանալու վտանգը, 2) մեղադրյալին ազատ արձակելու դեպքում նրա կողմից արդարադատության իրականացումը խաթարող քայլեր կատարելու վտանգը, 3) մեղադրյալի կողմից նոր հանցանք կատարելու վտանգը, 4) մեղադրյալի կողմից հասարակական անկարգություն առաջացնելու վտանգը:

Քննիչը պարտավոր է դիտարկել կալանքի այլընտրանքների՝ ներառյալ գրավի կիրառման նպատակահարմարությունը:

Քննիչը պետք է ապահովի կալանքի ողջ ընթացքում կալանավորված անձանց նկատմամբ արժանապատիվ և մարդավայել վերաբերմունքը և քննության առնի այն հարցը, թե արդյոք կալանքի պայմաններն այնպիսին են, որ կարող է հավասարազոր լինեն խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի:

2. ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ԿԱԼԱՆՔԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԸ

Այս բաժնում դիտարկվում են այն հանգամանքները, որոնց հիման վրա քննիչի կողմից մեղադրյալին մինչդատական կալանքի վերցնելն իրավաչափ է կամ անհրաժեշտ: ՄԻԵԴ–ի հետաքրքրող հիմնական հարցն այն է, որ մեղադրյալին մինչդատական կալանքի վերցնելու մասին որոշումը չլինի կամայական, ուստի քննիչը պետք է ապահովի մեղադրյալի կալանավորման մասին որոշման կայացումը հետևյալ երաշխիքների պահպանմամբ և դրանց շրջանակներում: Ըստ էության, 5–րդ հոդվածի հիմնական նպատակն է կանխել կամայական կամ չհիմնավորված ազատությունից զրկելը (*McKay–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 3 հոկտեմբեր, 2006), պարբ. 30):

Ա. Ազատությունից զրկելու ցանկացած եղանակ պետք է լինի օրինական

Ցանկացած հիմքով ազատությունից զրկելը պետք է լինի «օրինական» և «օրենքով սահմանված ընթացակարգին համապատասխան»: Ավելին՝ 5–րդ հոդվածի 1–ին մասում զետեղված «կամայականության» հասկացությունը չի սահմանափակվում ազգային օրենսդրության պահանջների կատարմամբ, ուստի ազատությունից զրկելն, ազգային օրենսդրության համաձայն, կարող է օրինական լինել, սակայն, միևնույն ժամանակ Կոնվենցիայի համաձայն, լինել կամայական և առաջացնել Կոնվենցիայի խախտում (*Creanga–ն ընդդ. Ռումինիայի* (վճիռ՝ 23 փետրվար, 2012), պարբ. 84; *Ա.–ը և այլք ընդդ. Միացյալ Թագավորության* (Մեծ պալատի վճիռ՝ 19 փետրվար, 2009), պարբ. 164):

Ինչ վերաբերում է առաջին հարցին, այն է՝ թե արդյոք ազատությունից զրկելը «օրենքով սահմանված ընթացակարգին համապատասխան» է, քննիչը պարտավոր է ապահովել, որ մեղադրյալին կալանավորելու մասին որոշումը համապատասխանի Հայաստանի ներպետական օրենսդրության պահանջներին: Կալանքի՝ «օրենքով սահմանված ընթացակարգին համապատասխան» լինելու պահանջը բավարարելու համար կալանքը պետք է համապատասխանի ազգային օրենսդրության նյութական և դատավարական նորմերին (*Del Río Prada–ն ընդդ. Իսպանիայի* (պարբ. 125) կամ միջազգային իրավունքի նորմերին, երբ դրանք կիրառելի են (*Medvedyev–ը և այլք ընդդ. Ֆրանսիայի,* պարբ. 79): Ավելին՝ ներպետական նորմերով պետք է հստակորեն սահմանված լինեն կալանքի պայմանները, իսկ դրանց կիրառությունը պետք է լինի կանխատեսելի (*Creanga–ն ընդդ. Ռումինիայի* (վճիռ՝ 23 փետրվար, 2012),պարբ. 101):

Ամփոփելով հարկ է նշել, որ մեղադրյալին կալանավորելու մասին որոշումը պետք է համապատասխանի ներպետական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերին, իսկ քննիչը պետք է ի վիճակի լինի փաստաթղթերով կամ այլ միջոցներով հիմնավորել, որ բերման ենթարկելը և հետագա կալանքը համապատասխանել են ներպետական ընթացակարգերին (*Cakici–ն ընդդ. Թուրքիայի* (Մեծ պալատի վճիռ՝ 8 հուլիս,

1999), պարբ. 105)[37]: Արձանագրվում է 5–րդ հոդվածի խախտում, եթե կալանքը տեղի է ունեցել ներպետական օրենսդրության մեջ իրավական հիմքերի բացակայության պայմաններում, օրինակ՝ երբ քննիչը գերազանցել է անձին կալանավորելու իր իրավասության սահմանները[38]:

Դատական նախադեպի օրինակներ

***K. F.–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 27 նոյեմբեր, 1997)**

Անձի ինքնությունը ստուգելու նպատակով ոստիկաններն իրավունք ունեին անձին արգելանքի վերցնել ոչ ավելի, քան 12 ժամով: Այնուհանդերձ, անձն այդ ժամկետը լրանալուց մոտ 45 րոպե անց դեռևս ազատ չէր արձակվել: Դա հանգեցրել էր 5–րդ հոդվածի խախտման. Ստրասբուրգի դատարանը համարեց, որ կալանքի թույլատրելի տևողության բացարձակ բնույթից բխում էր ոստիկանների պարտականությունը՝ նախազգուշական բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկելով ապահովելու օրենքի պահանջների կատարումը (պարբ. 71–73):

Ավելին՝ օրինականության պահանջը բավարարելու համար պետք է կատարել ոչ միայն կիրառելի ներպետական օրենսդրության պահանջները. ներպետական օրենսդրությունն ինքնին պետք է համապատասխանի Կոնվենցիայի պահանջներին՝ ներառյալ դրանում արտահայտված կամ դրանից բխող ընդհանուր սկզբունքներին (*Plesó–ն ընդդ. Հունգարիայի* (վճիռ՝ 2 հոկտեմբեր, 2012), պարբ. 59): Այսպիսով՝ ներպետական օրենսդրությունը չպետք է կիրառվի կամայականորեն, քանի որ «5–րդ հոդվածի բուն նպատակն է անձին պաշտպանել կամայական ազատազրկումից» (*Akdeniz–ը և այլք ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 31 մայիս, 2001), պարբ. 106):

Մասնավորապես անձի անհաղորդակից ազատությունից զրկելն ամբողջովին ոտնահարում է 5–րդ հոդվածով նախատեսված երաշխիքները (*El–Masri–ն ընդդ. Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հան-*

[37] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 50.

[38] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 51.

ռապետության (Մեծ պալատի վճիռ՝ 13 դեկտեմբեր, 2012), պարբ. 233, *Akdeniz–ը և այլք ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 31 մայիս, 2001), պարբ. 106): Այսպիսով՝ ազատազրկման օրվա, ժամի և վայրի, ազատազրկվածի անվան, ազատությունից զրկելու պատճառների և այն կատարող անձի անվան և նմանաբնույթ այլ տվյալների արձանագրման բացակայությունը պետք է համարել Կոնվենցիայի նպատակի հետ անհամատեղելի երևույթ (*Kurt–ն ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 25 մայիս, 1998), պարբ. 125), որը նաև հակասում է օրինականության պահանջին (*Anguelova–ն ընդդ. Բուլղարիայի* (վճիռ՝ 13 հունիս, 2002), պարբ. 154):

Կամայականության հասկացությունը տարբերվում է՝ կախված ազատազրկման տեսակից[39]: Դատարանը նշել է, որ կամայականություն կարող է ծագել այն ժամանակ, երբ տեղի է ունեցել ոչ բարեխիղճ գործունեություն կամ խաբեություն իշխանությունների կողմից, երբ կալանավորելու և կալանքն ի կատար ածելու մասին որոշումն իրապես չի համապատասխանել 5–րդ հոդվածի 1–ին մասի վերաբերելի կետերով թույլատրված նպատակին, երբ ազատությունից զրկելու թույլատրելի հիմքը կապ չի ունեցել ազատությունից զրկելու վայրի և պայմանների հետ, և երբ համաչափություն չի ապահովվել ազատությունից զրկելու հիմքի և փաստացի ազատազրկման միջև (*տե՛ս James–ը, Wells–ը և Lee–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 19 սեպտեմբեր, 2012), պարբ. 191–195 և *Saadi–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (Մեծ պալատի վճիռ՝ 29 հունվար, 2008), պարբ. 68–74):

5–րդ հոդվածով ընձեռվող լրացուցիչ երաշխիքները (*տե՛ս ստորև*) օգնում են կամայական ազատազրկման բացառմանը: Քննիչները պետք է հաշվի առնեն, որ ցանկացած ազատազրկման դեպքում պետք է ապացուցել, որ այն խստորեն հիմնավորված է տվյալ հանգամանքներում և կատարվել է բարեխղճորեն[40]: Ազատությունից զրկելը պետք է լինի «օրենքով սահմանված կարգին համապատասխան», իսկ օրինական

[39] Council of Europe, Guide on Article 5 of the Convention: Right to Liberty and Security, (2014 Council of Europe Publishing), պարբ. 32. Available at: http://www.echr.coe.int/Documents/Guide_Art_5_ENG.pdf [accessed 7 ապրիլ, 2016].

[40] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 51.

լինելու համար այն պետք է նաև հետապնդի 5–րդ հոդվածի 1–ին մասով սպառիչ կերպով թվարկված հանգամանքներից որևէ մեկի վրա ազդող նպատակ:

Բ. Երբ է ազատությունից զրկելը թույլատրելի

Ինչպես նշվեց, անձին ազատությունից զրկելը ՄԻԵԿ–ով արգելված է, բացառությամբ սահմանափակ թվով հանգամանքների: Քրեական գործով քննության նկատմամբ կիրառելի դրույթը 5–րդ հոդվածի 1–ին մասի (գ) կետն է, որով թույլատրվում է «անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար»:

Այս դրույթն ըստ էության քննիչներին վերապահում է անձանց ձերբակալման և մինչդատական կալանքի մասին որոշումներ կայացնելու հայեցողություն՝ հետևյալ հինգ դեպքերում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով, որոնցից առաջինը քրեական իրավունքը խախտած լինելու մեջ ողջամիտ կասկածի առկայությունն է: Սա ներկայացվում է որպես կալանավորման նախապայման: Այնուհետև սահմանված են կալանավորման չորս հիմքեր. 1) փախուստի դիմելու վտանգը, 2) քննությանը խոչընդոտելու վտանգը, 3) նոր հանցագործություն կատարելու վտանգը, 4) հասարակական անկարգություններ կատարելու վտանգը:

1. Հանցագործություն կատարած լինելու ողջամիտ կասկածը որպես կալանավորման նախապայման

Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 1–ին մասի գ կետի հիմքով՝ հանցագործության կատարման «ողջամիտ կասկածի» առկայությունը անձին կալանավորելու կամ կալանավորման ժամկետը երկարաձգելու **նա-**

խապայման է՝ *sine qua non* պայման (*Բիկովն ընդդեմ Ռուսաստանի,* թիվ 4378/02, 10.03.2009, § 64): Դա նշանակում է, որ եթե անձին ձերբակալելիս անհրաժեշտ է ցույց տալ ողջամիտ կասկածի առկայությունը, անձին կալանավորելիս, ինչպես նաև կալանավորման ժամկետը երկարաձգելիս նույնպես պետք է ցույց տալ, որ հանցագործության կատարման ողջամիտ կասկածը շարունակում է առկա մնալ (*Իլգար Մամմադովն ընդդեմ Ադրբեջանի*, թիվ 15172/13, 22.05.2014, § 90):

ՀՀ իրավական համակարգում «ողջամիտ կասկած» արտահայտությունը սահմանված է որպես «հիմնավոր կասկած», որոնք, ըստ էության, համարժեք են, եթե դրանք մեկնաբանվում են նույն կերպ: Դա հիմնավորվում է ՀՀ վճռաբեկ դատարանի Վահրամ Գևորգյանի գործով 24.02.2011 թ. գործով կայացրած որոշմամբ (քր. գործ թիվ ԵԿԴ/0678/06/10), որում դատարանը Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 1–ին մասի գ կետի և ՀՀ Սահմանադրության 27–րդ հոդվածի 1–ին մասի 4–րդ կետի հիմքով «հիմնավոր կասկած» արտահայտությունը մանրամասն վերլուծել ու մեկնաբանել է՝ հիմնվելով ՄԻԵԴ նախադեպային իրավունքի վրա և նույնիսկ սահմանելով առավել բարձր երաշխիքներ: Վճռաբեկ դատարանը, հիմնվելով ՀՀ նախկին Սահմանադրության 16–րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107–րդ հոդվածի և Եվրոպական դատարանի նախադեպային դրույթների վրա, սահմանել է, որ անձի կալանավորումը կհամարվի օրինական և հիմնավորված միայն այն դեպքում, երբ.

1) հաստատվի անձի առնչությունն իրեն մեղսագրվող հանցագործությանը (հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը),

2) առկա լինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135–րդ հոդվածի 1–ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկը (կետ 19): Նույն կետում դատարանը կատարեց հետևյալ սահմանումը.

«19. …Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը պարտավոր է անդրադառնալ կալանավորման պայմանների և հիմքերի առկայությանը: Կալանավորման պայմանները փաստական տվյալներով հաստատված հանգամանք-

ներ են, որոնց բացակայությունը բացառում է խափանման միջոցի կիրառումը: Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադառնալ կալանավորման հիմքերին: Ավելին, եթե առկա չէ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135–րդ հոդվածի 1–ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է»:

Այսպիսով՝ առաջ քաշվեց այն գաղափարը, որ հիմնավոր կասկածի առկայությունը կալանավորման նախապայման է, և եթե այս պայմանը չի բավարարվում, անձը չի կարող պահվել կալանքի տակ՝ անկախ հիմքերի առկայության վերաբերյալ վարույթ իրականացնող մարմնի պնդումներից:

Այս հանգամանքը հատկապես կարևոր է քննիչների համար քրեական վարույթի շրջանակում: Նման դեպքերում կալանքի նպատակն է օգնել անձի՝ հանցանք կատարած լինելու կասկածը հաստատելուն կամ փարատելուն, ուստի կալանքը պետք է հետապնդի միմիայն այդ նպատակը և չի կարող հետապնդել որևէ այլ արտաքնածին նպատակ (օրինակ՝ կալանավորվածի նկատմամբ բարոյական ճնշում գործադրելը) (*Giorgi Nikolaishvili–ն ընդդ. Վրաստանի* (վճիռ՝ 13 հունվար, 2009), պարբ. 60–67)[41]: Հիրավի, 5–րդ հոդվածի 1–ին մասի (գ) կետի հիման վրա կալանավորելու դեպքում հարցաքննության նպատակն է առաջ մղել քրեական քննությունը՝ հաստատելով կամ փարատելով ձերբակալման հիմք ծառայած որոշակի կասկածը (*Brogan–ը և այլք ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 29 նոյեմբեր, 1988), պարբ. 52–54, *Labita–ն ընդդ. Իտալիայի* (Մեծ պալատի վճիռ՝ 6 ապրիլ, 2000), պարբ. 155, *O'Hara–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 16 հոկտեմբեր, 2001, պարբ. 36):

[41] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 54.

Դատական նախադեպի օրինակ

***Brogan–ը և այլք ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 29 նոյեմբեր, 1988)**

Գանգատաբերները պնդում էին, թե իրենց ձերբակալելու նպատակն իրենց իրավասու օրինական մարմնին ներկայացնելը չէր, քանի որ իրենք ազատազրկման ընթացքում ո՛չ մեղադրվեցին, ո՛չ էլ ներկայացվեցին դատարանի առջև: Այնուհանդերձ, ՄԻԵԴ–ը նշեց, որ այն փաստը, որ գանգատաբերները ո՛չ մեղադրվեցին, ո՛չ էլ ներկայացվեցին դատարանի առջև, ինքնին դեռևս չի նշանակում, որ նրանց ազատությունից զրկելու նպատակը հակասել է 5–րդ հոդվածի 1–ին մասի (գ) կետին: Այդ նպատակը պետք է քննարկել դրան հասնել–չհասնելու հանգամանքից առանձին, ուստի 5–րդ հոդվածի 1–ին մասի (գ) կետը չի ենթադրում, թե ոստիկանությունը պետք է բավարար ապացույցներ ձեռք բերած լիներ մեղադրանք ներկայացնելու համար կա՛մ ձերբակալելու պահին, կա՛մ անձանց ազատազրկման մեջ գտնվելու ընթացքում: Ավելին՝ ՄԻԵԴ–ը նշեց, որ այդ ապացույցները ձեռք բերելը կարող էր անհնարին լինել կամ, հաշվի առնելով կասկածվող հանցագործությունների բնույթը, կարող էր անհնարին լինել դրանք դատարանում ներկայացնելը՝ չվտանգելով այլոց կյանքը:

Ուստի ՄԻԵԴ–ը եզրակացրեց, որ չկային որևէ այլ հիմքեր՝ կարծելու, թե ոստիկանական քննությունը չի եղել բարեխիղճ, կամ թե գանգատաբերներին կալանավորելը նպատակ չի ունեցել առաջ մղելու քննությունը՝ հաստատելով կամ փարատելով նրանց ձերբակալման հիմքում ընկած կոնկրետ կասկածները: Ավելին՝ ՄԻԵԴ–ը ենթադրեց, որ եթե դա հնարավոր լիներ, ապա ոստիկանությունը ներկայացրած կլիներ մեղադրանքը, և գանգատաբերները ներկայացված կլինեին իրավասու օրինական մարմնին: Ուստի 5–րդ հոդվածի 1–ին մասի (գ) կետի խախտում չարձանագրվեց (պարբ. 52–54):

Կարևոր է, որ այն «իրավախախտումը», որի համար անձը ձերբակալվել է կամ կալանավորվել, հանցագործություն եղած լինի այն պահի

դրությամբ, երբ դա ենթադրաբար կատարվել է[42]: Իսկապես, *Wloch–ն ընդդ. Լեհաստանի* գործով դատարանը համարեց, որ «ողջամիտ կասկած չի կարող լինել», եթե կալանավորված անձի դեմ ներկայացվող արարքները կամ փաստերը հանցագործություն չեն եղել դրանց տեղի ունենալու պահին (*Wloch–ն ընդդ. Լեհաստանի* (վճիռ՝ 19 հոկտեմբեր, 2000), պարբ. 109):

(Խաչատրյանն ու այլք ընդդեմ Հայաստանի, թիվ 23978/06, 27.11.2012, § 136)

Սույն գործով մեղադրանք էր առաջադրվել մի շարք անձանց այն բանի համար, որ նրանք լքել էին այլընտրանքային զինվորական ծառայության վայրը: Մեղադրանքն առաջադրվել էր Քրեական օրենսգրքի այն հոդվածի հիման վրա, որով քրեորեն հետապնդելի արարք էր համարվում պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու արարքը: Հայաստանի Հանրապետությունը 2004 թվականին ընդունել էր այլընտրանքային զինվորական ծառայության մասին օրենք, սակայն համապատասխան փոփոխություն Քրեական օրենսգրքում չէր կատարվել, որպեսզի քրեականացվեր նաև այլընտրանքային ծառայությունից խուսափելու արարքը: Արդյունքում՝ կիրառվել էր անալոգիա (այլընտրանքային զինվորական ծառայությունից խուսափելու փաստը քրեաիրավական որակման էր ենթարկվել պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու հոդվածով), որը քրեական իրավունքում արգելվում է: Քանի որ անձինք գտնվել էին խափանման միջոց կիրառված կալանքի տակ, ի թիվս այլ հիմքերի, նաև հանցագործության կատարման հիմնավոր կասկածի հիմքով, Եվրոպական դատարանը նրանց արդարացնելու փաստի ուժով խափանման միջոցի՝ կալանքի տակ գտնվելու ժամկետը համարեց անօրինական, քանի որ համարեց, որ ի սկզբանե (այսինքն՝ արգելանքի վերցնելու պահից) բացակայել էր հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը:

[42] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 54.

Կարևոր է, որ քննիչը միշտ կարողանա հիմնավորել, որ եղել է «ողջամիտ կասկած»: Դա նշանակում է, որ անձը պետք է կալանավորվի միայն այն դեպքում, երբ գոյություն ունեն փաստեր կամ տեղեկություններ, որոնք անաչառ դիտորդի համար բավարար կլինեին՝ համոզվելու համար, որ հնարավոր է, որ ձերբակալվածը կատարել է հանցագործություն (*Fox–ը, Campbell–ը և Harley–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 20 օգոստոս, 1990), պարբ. 32–36): Բողոքի հիմնավորված լինելը պարզելու նպատակով գործի հիմնական փաստերը քննիչների կողմից խորությամբ չուսումնասիրելն ինքնին 5–րդ հոդվածի 1–ին մասի (գ) կետի խախտում է (*Stepuleac–ն ընդդ. Մոլդովայի* (վճիռ՝ 6 նոյեմբեր, 2007), պարբ. 73,*Elçi–ն և այլք ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 13 նոյեմբեր, 2003), պարբ. 674):

«Ողջամիտ կասկածի» որոշումը կախված է կոնկրետ գործի բոլոր հանգամանքներից[43]: Հիրավի, ՄԻԵԴ–ը նշել է, որ «ձերբակալման հիմքում ընկած կասկածի՝ օբյեկտիվ փաստերով բավականաչափ հիմնավորված չլինելու գործերի և հիմնավորված լինելու գործերի միջև տարբերությունը նշմարելը կարող է դժվար լինել» (*O'Hara–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 16 հոկտեմբեր, 2001), պարբ. 41):

Ավելին՝ ազնվորեն այդ կասկածն ունենալը բավարար չէ: Կասկածը պետք է «ողջամիտ» լինի, թեպետ «կասկած հարուցող փաստերի մակարդակը կարող է նույնը չլինել, ինչ քրեական գործով քննության գործընթացի հաջորդ փուլում՝ մեղադրական դատավճիռ հիմնավորելու կամ անգամ մեղադրանք ներկայացնելու համար պահանջվող փաստերի մակարդակը» (*Murray–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 28 հոկտեմբեր, 1994), պարբ. 55): Անգամ քննող մարմնի բարեխիղճ կամ «իսկական» կասկածը կարող է բավարար չլինել՝ կասկածի ողջամիտ լինելու մեջ անաչառ դիտորդին համոզելու համար (*Stepuleac,* § 76):

Վերը վկայակոչված Վահրամ Գևորգյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանը ողջամիտ կասկածը մեկնաբանել է հետևյալ կերպ.

[43] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 55.

«21. ....«հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղքը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կասկածը հիմնավոր կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում՝ անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում են այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է: Այլ կերպ՝ կասկածը կարող է համարվել հիմնավոր միայն այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություններ կայացնող պաշտոնատար անձը՝ ***քննիչը*** *կամ դատախազը, կասկածվող անձի կատարած գործողությունների (անգործության) վերաբերյալ կներկայացնի* ***տեղեկություններ****,* ***փաստեր*** *կամ* ***ապացույցներ****, որոնք ուղղակիորեն կմատնանշեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, ինչպես նաև կհիմնավորեն, որ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցանքի դեպքին:*

Եվ վերջապես՝ ինչպես և 5–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն թույլատրվող ազատազրկման բոլոր դեպքերում, այնպես էլ անձին իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով ազատությունից զրկելը չպետք է կամայական լինի: Այսպես՝ դատարանը համարել է, որ կասկածյալին ազատությունից զրկելը պետք է դադարի այն պահից, երբ կասկածը դադարում է «ողջամիտ» լինել (*De Jong–ը, Baljet–ը և Van Den Brink–ն ընդդ. Նիդերլանդների* (վճիռ՝ 22 մայիս, 1984) պարբ. 44)[44]:

[44] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 55.

Դատական նախադեպի օրինակներ

***Fox–ը, Campbell–ը և Harley–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 20 օգոստոս, 1990)**

Դատարանը համարեց, որ «ողջամիտ կասկած» ունենալու համար ենթադրվում է, որ գոյություն ունեն փաստեր կամ տեղեկություններ, որոնք անաչառ դիտորդին կհամոզեին, որ հնարավոր է, որ տվյալ անձը հանցանք է գործել: «Ողջամտության» չափանիշը, սակայն, կախված է հանգամանքների ամբողջությունից (պարբ. 32): Այսպես՝ թեպետ այն փաստը, որ պրն Ֆոքսը և պրն Քեմփբելը երկուսն էլ նախկինում դատված էին Իռլանդիայի Հանրապետական Բանակին (IRA) առնչվող ահաբեկչական գործողությունների համար, կարող էր խորացնել նրանց ահաբեկչական բնույթի հանցագործության կատարման հետ կապող կասկածը, այն չէր կարող միակ հիմքը լինել մոտ յոթ տարի անց նրանց ձերբակալումը հիմնավորող կասկածի համար (պարբ. 35):

***Stepuleac–ն ընդդ. Մոլդովայի* (վճիռ՝ 6 նոյեմբեր, 2007)**

ՄԻԵԴ–ը վճռեց, որ գանգատաբերի ձերբակալման առնչությամբ տեղի է ունեցել 5–րդ հոդվածի 1–ին մասի խախտում՝ նշելով հետևյալը.

... մասնավորապես գանգատաբերի անունը կասկածյալների ցանկում ներառելու մասին դատախազի որոշումը՝ առանց տուժողի ցուցմունքի կամ գանգատաբերին մատնացույց անող որևէ այլ ապացույցների ..., ինչպես նաև հիմնական փաստերը դատախազի կողմից իսկապես չուսումնասիրելը և բողոքի հիմնավորվածությունը չպարզելը, դատարանը եզրակացնում է, որ իր ունեցած տեղեկություններն «անաչառ դիտորդին չէին համոզի, որ հնարավոր է, որ տվյալ անձն է կատարել հանցագործությունը» (պարբ. 73):

***Labita–ն ընդդ. Իտալիայի* (Մեծ պալատի վճիռ՝ 6 ապրիլ, 2000)**

Գանգատաբերի հասցեին հնչեցվող մեղադրանքները մեկ աղբյուր ունեին. դա այն *pentito*–ն էր, ով 1992 թվականին նշել էր, որ ինքը միջնորդավորված կերպով տեղեկացել է, որ գանգատաբերը մաֆիայատիպ կազմակերպության գանձապահն է եղել: *Pentito*–ից ստացված ապացույցներն ըստ էության ասեկոսեներ էին: ՄԻԵԴ–ը համարեց, որ «թեպետ կասկածյալը կարող էր *pentito*–ների ցուցմունքների հիման վրա

հիմնավորված կերպով կալանավորվել վարույթի սկզբում, այդ հայտարարությունները ժամանակին զուգընթաց պարտադիր կերպով կորցնում են իրենց նշանակությունը, հատկապես երբ քննության ընթացքում չեն հայտնաբերվում լրացուցիչ ապացույցներ» (պարբ. 156–159):

2. Անձի ձերբակալումը կամ կալանավորումը հանցանքի կատարումը կանխելու նպատակով

Անձի ձերբակալումը կամ կալանավորումը հանցանքի կատարումը կանխելու նպատակով նույնպես վերաբերում է մինչդատական կալանքին, սակայն այդ հիմքը կիրառելի չէ այն դեպքում, երբ տվյալ անձը չի կասկածվում արդեն իսկ քրեական հանցանք կատարած լինելու մեջ (*Ostendorf–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 7 մարտ, 2013), պարբ. 82):

Կալանավորումը պետք է նաև «ողջամտորեն անհրաժեշտ համարվի», ուստի նպատակին տրվում է սահմանափակ մեկնաբանություն, և այն կիրառվում է միայն «որոշակի հանցագործության» կատարումը կանխելու նպատակով կալանավորելուն (*Guzzardi–ն ընդդ. Իտալիայի* (վճիռ՝ 6 նոյեմբեր, 1980), պարբ. 102): Դրա շնորհիվ բացառվում է այն ընդգրկուն սահմանումը, որի դեպքում կստացվեր, որ «յուրաքանչյուր ոք, ով կասկածվում է հանցանք կատարելու մտադրություն ունենալու մեջ, կարող է անսահմանափակ ժամկետով ձերբակալվել և կալանավորվել՝ բացառապես գործադիրի որոշման ուժով» (*Lawless–ն ընդդ. Իռլանդիայի, թիվ 3* (վճիռ՝ 1 հուլիս, 1961), պարբ. 14): Կալանավորման այս հիմքը ՀՀ ներպետական իրավունքում սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135–րդ հոդվածի 1–ին մասի 3–րդ կետում: Նոր հանցագործություն կատարելու վտանգը պետք է գնահատվի գործից բխող փաստերի, ինչպես նաև անձնական հանգամանքների հիման վրա, որոնք նոր հանցագործություն կատարելու հավանականության գնահատման համար կարող են հանդիսանալ «լուրջ ցուցիչներ»:

Դատական նախադեպի օրինակ

***Eriksen–ն ընդդ. Նորվեգիայի* (վճիռ՝ 27 մայիս, 1997)**

Գանգատաբերը գլխուղեղի վնասվածք ստանալուց հետո ագրեսիվ դառնալու հակում էր ձեռք բերել և տարիների ընթացքում պահվել էր բանտում կամ հոգեբուժական հիվանդանոցում: Գործը քննող դատարանի կողմից գանգատաբերի նկատմամբ «անվտանգության միջոցառումների» կիրառության շրջանակում նրա կալանավորումը թույլատրելուց կարճ ժամանակ առաջ ոստիկանությունը դիմել և ստացել էր թույլտվություն՝ նրան ևս մի քանի շաբաթ կալանքի տակ պահելու և այդ կերպ թարմ բժշկական տեղեկանք կազմելու համար:

ՄԻԵԴ–ը համարեց, որ տվյալ գործի բացառիկ հանգամանքներում գանգատաբերին մինչդատական կալանքի տակ պահելը կարող էր հիմնավորված համարվել 5–րդ հոդվածի 1–ին մասի (գ) կետի ներքո՝ որպես անձի կալանավորում այն դեպքում, «երբ դա ողջամտորեն անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցանքի կատարումը կանխելու համար»: Հաշվի առնելով գանգատաբերի՝ սպառնալից վարքագծի և ֆիզիկական հարձակումների համար նախկին դատվածությունների բնույթը և ծանրությունը, ինչպես նաև այդ ժամանակ նրա հոգեկան վիճակը, ՄԻԵԴ–ը համարեց, որ լուրջ հիմքեր են եղել՝ կարծելու համար, որ նա ապագայում ևս կգործի նմանաբնույթ հանցանքներ: Ուստի ապագայում հանցագործություն կատարելու մտահոգությունները բավականաչափ որոշակի էին եղել (պարբ. 86):

3. Անձի ձերբակալումը և կալանավորումը հանցագործության մեջ կասկածվողի փախուստը կանխելու նպատակով

Անձը կարող է կալանավորվել հանցանք կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով: Փախուստի վտանգը պետք է յուրաքանչյուր գործով ուշադիր կերպով քննության առնել. պետության կողմից անձի կալանավորման հավանականությունը և ողջամտությունը գնահատելիս վերաբերելի կհամարվեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են պետության տարածքից հեռանալու դյուրինությունը, ծանր պատիժ ստանալու հավանականությունը և պետության ներսում կապերի

բացակայությունը (*Wemhoff–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 27 հունիս, 1968), պարբ. 13–15)[45]:

Կալանավորման այս հիմքը ՀՀ ներպետական իրավունքում սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետում: Փախուստի դիմելու հավանականությունը չի կարող գնահատվել, հետևաբար նաև կալանավորման մասին որոշում կայացվել **բացառապես** առաջադրված մեղադրանքի կամ նախատեսված պատժի ծանրությամբ (*Պանչենկոն ընդդեմ Ռուսաստանի,* թիվ 45100/98, 08.02.2005, § 106): Անհրաժեշտ է հաշվի առնել գործի հանգամանքները, կալանավորի անձը, նրա անձնական, հասարակական, ընտանեկան, աշխատանքային կապերը տվյալ պետության կամ համայնքի հետ, կացության կարգավիճակը, գույքային վիճակը և այլն, և այդ ամենի համատեքստում գնահատել նաև մեղադրանքի ծանրությունը և նախատեսված պատժի խստությունը որպես փախուստի դիմելու հավանականությունը գնահատելու հիմք:

4. Արդարադատության ընթացքին միջամտելու վտանգը

Կալանավորման այս հիմքը ՀՀ ներպետական իրավունքում սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետում: Հավանական է, որ մեղադրյալը կօգտագործի իր ազատման հնարավորությունն իր դեմ քննվող գործի նախապատրաստումը խաթարելու կամ վկաների նկատմամբ ճնշում գործադրելու համար, որպեսզի նրանք ցուցմունք չտան, կամ տեղեկություններ հաղորդի քննությամբ անցնող այլ անձանց կամ վարույթին արձագանքելու հետ կապված հարցերում հանցավոր համաձայնության գա գործին մասնակից այլ անձանց հետ, ինչպես նաև ոչնչացնի ապացույցները: Այդուհանդերձ, քննությանը խոչընդոտելու վտանգը (օրինակ՝ ապացույցները վերացնելը, վկաների վրա ճնշում գործադրելը և այլն) չպետք է գնահատվի վերացական կերպով, այլ պետք է բխի գործի

[45] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 56.

կոնկրետ հանգամանքներից և ապացույցներից (*Բեցիևն ընդդեմ Մոլդովայի,* թիվ 9190/03, 04.10.2005, § 59): Օրինակ՝ *Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված որոշման մեջ Եվրոպական դատարանը քննության առավ այն հանգամանքը, որ քննությանը խոչընդոտելու վտանգը դատարանի կողմից գնահատվել էր վերացական կերպով՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները միայն «վերացական» և «կարծրատիպային» եղանակով նշել էին, որ ազատ արձակվելու դեպքում անձը կարող էր թաքնվել քննությունից կամ խոչընդոտել գործի քննությանը: Ըստ Եվրոպական դատարանի՝ ազգային դատարանները «չեն էլ փորձել հերքել դիմումատուի փաստարկները (կետ 99): Այս համատեքստում նպատակահարմար է նշել նաև այն հանգամանքը, որ «փախուստի դիմելու հավանականությունը ներկայացվել էր որպես «հավելյալ քննչական գործողություն» կատարելը խոչընդոտելու ենթադրության հիմք: Այս դեպքում նույնպես ենթադրությունը հիմնավորվել էր վերացական կերպով: Կոնկրետ փաստերի հիման վրա չէր ներկայացվել, թե ինչու էր հավանական, որ ազատության մեջ հայտնվելիս անձը կարող էր խոչընդոտել քննչական գործողության կատարմանը, և թե որն էր այդ քննչական գործողությունը: Այս առումով ՄԻԵԴ–ը կատարեց նախադեպային ձևակերպում, որ այնպիսի հիմք, ինչպիսին է հավելյալ քննչական գործողություն կատարելու անհրաժեշտությունը, չի կարող կալանավորման հիմք հանդիսանալ դատաքննության փուլում (կետ 98):

5. Հասարակական անկարգություն առաջացնելու վտանգը

Հաշվի առնելով որոշակի հանցագործությունների առանձնակի ծանրությունը և դրանց նկատմամբ հանրության արձագանքը, այդ հանցագործությունները կարող են սոցիալական անհանգստություն առաջացնել, որով կարող է հիմնավորվել մինչդատական կալանքը առնվազն որոշակի ժամկետով: Ուստի որոշ բացառիկ դեպքերում այս գործոնը կարող է Կոնվենցիայի իմաստով հաշվի առնվել՝ առնվազն այնքանով, որքանով այդ հիմքը նախատեսված է ներպետական օրենսդրությամբ

(Լեպելիերն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 12369/86, 26.06.1991, § 51):

Կալանավորման հիմք հանդիսացող այս չորրորդ հիմքը՝ հասարակական անկարգություններ ստեղծելու վտանգը, լայն կիրառություն չունի: Հանցագործության առանձնահատուկ բնույթը, ծանրությունը և դրա նկատմամբ հանրության ռեակցիան կարող են հասարակական անկարգությունների առաջացման վտանգ ստեղծել, և բացառիկ դեպքերում Կոնվենցիան դա ընդունում է որպես կալանավորման հիմք, եթե նման հիմք նախատեսված է ազգային օրենսդրությամբ: Շատ երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, այս հիմքը գործնականում կիրառվում է նոր հանցագործություն կատարելու կալանավորման հիմքի շրջանակներում:

3. ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄԻՑ ԿԱՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Ա. Անհապաղ տեղեկացվելու իրավունքը

5–րդ հոդվածի 1–ին մասի (գ) կետի համաձայն՝ անձին ձերբակալելուց կամ կալանավորելուց հետո, համաձայն 5–րդ հոդվածի 2–րդ մասի, «յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին»: 5–րդ հոդվածի 2–րդ մասը պարունակում է տարրական այն երաշխիքը, որի համաձայն՝ ձերբակալված յուրաքանչյուր անձ պետք է իմանա, թե ինչու է ինքը զրկվում ազատությունից, որը 5–րդ հոդվածով ընձեռվող պաշտպանության համակարգի կարևորագույն բաղադրիչն է[46]:

Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 2–րդ մասի հիմքով այս իրավունքը ներպետական իրավունքում ամրագրված է ՀՀ Սահմանադրության 27–րդ հոդվածի 2–րդ մասում. *«անձնական ազատությունից զրկված*

[46] Council of Europe, Guide on Article 5 of the Convention: Right to Liberty and Security, (2014 Council of Europe Publishing), պարբ. 114.

յուրաքանչյուր ոք իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին»: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում այս իրավունքն ամրագրված է 11–րդ հոդվածի 4–րդ մասում. *«Յուրաքանչյուր ձերբակալվածի և կալանավորվածի անհապաղ հաղորդվում են ձերբակալության կամ կալանավորման հիմքերը, ինչպես նաև այն հանցագործության փաստական հանգամանքները և իրավաբանական որակումը, որի կատարման մեջ նա կասկածվում կամ մեղադրվում է»:* Այս հիմքը չպետք է շփոթել Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 3–րդ մասի ա կետի հիմքով նախատեսված պահանջի հետ, համաձայն որի՝ հանցագործության կատարման մեջ մեղադրվող ցանկացած անձի անհապաղ տեղեկացվում է մեղադրանքի հիմքի և բնույթի մասին: Սա առավել բարձր երաշխիք պարունակող պահանջ է և կոնվենցիոն այս հիմքը համընկնում է այն պահի հետ, երբ մեղադրյալին առաջին անգամ հասու է դարձվում քրեական գործն իր ամբողջությամբ, որը, որպես կանոն, կատարվում է նախաքննության վերջում, երբ մեղադրյալը ծանոթանում է քրեական գործի նյութերին (տե՛ս, այս առումով, Վճռաբեկ դատարանի 18.12.2009 թ. որոշումը Ս. Նալբանդյանի գործով (գործ թիվ ՀՅՔՐԴ 2/0144/01/09):

5–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ քննիչը պարտավոր է որոշակի տեղեկություններ տրամադրել անձին կամ նրա ներկայացուցչին: Եթե գանգատաբերն ի վիճակի չէ ստանալ տեղեկությունները, ապա համապատասխան մանրամասները պետք է տրամադրվեն նրա շահերը ներկայացնող համապատասխան անձանց, օրինակ՝ փաստաբանին կամ օրինական ներկայացուցչին (*Z.H.–ն ընդդ. Հունգարիայի* (վճիռ՝ 8 նոյեմբեր, 2012), պարբ. 42–43):

Հաղորդվող տեղեկությունների բովանդակության բավարար լինելու հանգամանքը պետք է յուրաքանչյուր գործի շրջանակում գնահատել՝ հաշվի առնելով այդ գործի առանձնահատկությունները (*Fox–ը, Campbell–ը և Hartley–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 20 օգոստոս, 1990), պարբ. 40): Այնուհանդերձ, ձերբակալման իրավական հիմքը նշելը՝ առանց որևէ այլ տեղեկությունների, 5–րդ հոդվածի 2–րդ մասի իմաստով բավարար չէ (*Fox–ը, Campbell–ը և Hartley–ն*

ընդդ. Միացյալ Թագավորության (վճիռ՝ 20 օգոստոս, 1990), պարբ. 41, *Murray–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (Մեծ պալատի վճիռ՝ 28 հոկտեմբեր, 1994), պարբ. 76, *Kortesis–ն ընդդ. Հունաստանի* (վճիռ՝ 12 հունիս, 2012), պարբ. 61–62):

Այսպիսով՝ ձերբակալված անձին պետք է պարզ, ոչ տեխնիկական և նրան հասկանալի լեզվով ներկայացնել ձերբակալության իրավական և փաստական հիմքերը, որպեսզի նա ցանկության դեպքում կարողանա 5–րդ հոդվածի 4–րդ մասին համապատասխան դատարանում վիճարկել իր ազատազրկման օրինականությունը (*Fox–ը, Campbell–ը և Harley–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 20 օգոստոս, 1990), պարբ. 40): Այնուամենայնիվ, 5–րդ հոդվածի 2–րդ մասով չի պահանջվում, որպեսզի այդ տեղեկությունները ներառեն ձերբակալվածի նկատմամբ ունեցած մեղադրանքների ամբողջական ցանկը (*Bordovskiy–ն ընդդ. Ռուսաստանի* (վճիռ՝ 8 փետրվար, 2005), պարբ. 56):

Դատական նախադեպի օրինակներ

***Fox–ը, Campbell–ը և Hartley–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 20 օգոստոս, 1990)**

Արգելանքի վերցնելու ժամանակ ձերբակալող ոստիկանը պրն Ֆոքսին, պրն Քեմփբելին և պրն Հարթլիին պարզապես ասել էր, որ նրանք ձերբակալվում են 1978 թվականի օրենքի 11–րդ հոդվածի 1–ին մասի հիման վրա՝ կասկածվելով ահաբեկիչ լինելու մեջ: ՄԻԵԴ–ը համարեց, որ բացառապես ձերբակալման իրավական հիմքը մատնանշելը 5–րդ հոդվածի 2–րդ մասի իմաստով բավարար չէր:

Այնուհանդերձ, բոլոր գանգատաբերները ձերբակալվելուց հետո ոստիկանության կողմից հարցաքննվել էին կոնկրետ հանցավոր արարքներին իրենց մասնակցության կասկածի և օրենքով արգելված կազմակերպություններին իրենց անդամակցության կասկածի առնչությամբ: ՄԻԵԴ–ը հիմք չարձանագրեց՝ եզրակացնելու համար, որ այդ հարցաքննությունները գանգատաբերներին թույլ չէին տվել հասկանալ իրենց ձերբակալման պատճառը: Նրանց ահաբեկիչ լինելու մեջ կասկածելու պատճառներն այդ կերպ ներկայացվել էին նրանց ուշադրությանը հարցաքննության ընթացքում (պարբ. 41):

***H.B.–ն ընդդ. Շվեյցարիայի* (վճիռ՝ 5 ապրիլ, 2001)**

1993 թ. մայիսի 12–ին ձերբակալվելուց անմիջապես հետո գանգատաբերը գրավոր տեղեկացվել էր այն տարբեր հանցագործությունների մասին, որոնց կատարման մեջ նա կասկածվում էր: Ավելին՝ գանգատաբերը քննող դատավորի կողմից բանավոր տեղեկացվել էր ընկերության դեմ ուղղված մեղադրանքների մասին և իսկապես քաջատեղյակ էր եղել ընկերության նկատմամբ դատախազության հետաքրքրության մասին: Բոլոր այդ տեղեկությունները գանգատաբերին թույլ էին տվել իր ձերբակալման օրը ձեռագիր բողոք ներկայացնել Սոլոթուրնի կանտոնի վերաքննիչ դատարան (պարբ. 48): Հաշվի առնելով, որ գանգատաբերը, լինելով ընկերության խորհրդի անդամ և կառավարիչ, մասնագիտացած գիտելիք ուներ ընկերության ֆինանսական վիճակի մասին, ՄԻԵԴ–ը համարեց, որ գանգատաբերն իր ձերբակալման պահին հավուր պատշաճի տեղեկացվել էր «իր ձերբակալման կարևորագույն իրավական և փաստական հիմքերի մասին, որպեսզի ցանկության դեպքում դատարան դիմելու միջոցով վիճարկեր դրա օրինականությունը» (պարբ. 49):

Տեղեկություններն անհապաղ տրամադրելու հարցը պետք է յուրաքանչյուր գործի շրջանակում գնահատել՝ հաշվի առնելով դրա առանձնահատկությունները[47]: Այնուհանդերձ, ձերբակալող պաշտոնյան պետք է ձերբակալության պահին ևեթ ամբողջությամբ շարադրի ձերբակալման պատճառները (*Fox–ը, Campbell–ը և Harley–ն ընդդ. Միացյալ Թագավորության,* պարբ. 40, *Murray–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (Մեծ պալատի վճիռ՝ 28 հոկտեմբեր, 1994), պարբ. 72):

Դատական նախադեպի օրինակներ

***Murray–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 28 հոկտեմբեր, 1994)**

Տիկին Մյուրեյը ձերբակալվել էր առավոտյան 7–ին իր տանը և բանակի կենտրոնում հարցաքննվել էր նույն առավոտյան 8.20–ից մինչև

[47] Council of Europe, Guide on Article 5 of the Convention: Right to Liberty and Security, (2014 Council of Europe Publishing), պարբ. 117.

9.35–ն ընկած ժամանակահատվածում: Սույն գործի համատեքստում ՄԻԵԴ–ը տվյալ ժամանակային միջակայքը համարեց 5–րդ հոդվածի 2–րդ մասով նախատեսված անհապաղության շրջանակից բխող սահմաններից դուրս (պարբ. 78):

***Dikme–ն ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 11 հուլիս, 2000)**

Հարցաքննությունների հաճախակիությունը և խորությունը վկայում էին նաև այն մասին, որ առաջին իսկ փուլում, որը սկիզբ էր առել առավոտյան ժ. 7.30–ին ձերբակալելուց մի քանի ժամ հետո և տևել էր մինչև երեկոյան ժ. 7–ը կամ դրանից քիչ ավելի ուշ, պարոն Դիքմեն կարող էր որոշակի պատկերացում ձեռք բերած լինել այն մասին, թե ինչի մեջ է ինքը կասկածվում: Ուստի 5–րդ հոդվածի 2–րդ մասով նախատեսված անհապաղության շրջանակից բխող սահմանները պահպանվել էին, հատկապես քանի որ առաջին գանգատաբերն ինքն էր որոշ չափով պատճառ հանդիսացել տվյալ ժամկետի ձգձգմանը՝ թաքցնելով իր ինքնությունը (պարբ. 56):

Բ. Դատավորի մոտ անհապաղ տարվելու իրավունքը

5–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ «սույն հոդվածի 1–ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն...»:

ՀՀ Սահմանադրությամբ այս իրավունքն ամրագրված է 27–րդ հոդվածի 4–րդ մասում, համաձայն որի՝ *«եթե սույն հոդվածի 1–ին մասի 4–րդ կետի հիմքով ազատությունից զրկված անձի վերաբերյալ ազատությունից զրկվելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին, ապա նա անհապաղ ազատ է արձակվում»*: Քրեական դատավարության օրենսգրքի 11–րդ հոդվածի 3–րդ մասը սահմանում է, որ «*մինչև դատարանի համապատասխան որոշումը ստանալն անձը չի կարող ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահվել 72 ժամից ավելի»:*

Հանցանք կատարած լինելու կասկածով ձերբակալված կամ կալանավորված անձանց համար 5–րդ հոդվածի 3–րդ մասով նախատեսվում է երաշխիք ընդդեմ կամայական կամ չհիմնավորված ազատությունից զրկման (*Aquilina–ն ընդդ. Մալթայի* (Մեծ պալատի վճիռ՝ 29 ապրիլ, 1999), պարբ. 47): 5–րդ հոդվածի 3–րդ մասում տեղ գտած պահանջը երկու նպատակների է ծառայում[48]. (1) հնարավոր դարձնել կալանավորման օրինականության գնահատումը և անձին ազատ արձակելու անհրաժեշտության կամ մինչև նրա մեղքի կամ անմեղության որոշումը կալանքի տակ պահելու անհրաժեշտության որոշումը (*Brogan–ը և այլք ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 29 նոյեմբեր, 1988), պարբ. 58), և (2) նպաստել *անհաղորդակից* (*incommunicado*) ազատությունից զրկված, ձերբակալված կամ կալանավորված անձանց պաշտպանությանը և, որ ավելի կարևոր է, նպաստել ազատազրկման ընթացքում վատ վերաբերմունքի կանխարգելմանը:

Դատարանն ընդունել է, որ սերտ կապ գոյություն ունի այս դրույթի նպատակի և 2–րդ հոդվածի (կյանքի իրավունք) և 3–րդ հոդվածի (խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելք) նպատակների միջև, մասնավորապես.

… Անհապաղ դատական միջամտության շնորհիվ կարելի է հայտնաբերել և կանխել վատ վերաբերմունքի՝ կյանքի համար վտանգավոր և ծանր դրսևորումները, որոնք խախտում են Կոնվենցիայի 2–րդ և 3–րդ հոդվածներով նախատեսված հիմնարար երաշխիքները… Այստեղ կարևորվում է թե՛ անձի ֆիզիկական ազատության, թե՛ նրա անձնական անվտանգության պաշտպանությունն այնպիսի իրավիճակում, որում երաշխիքների բացակայության դեպքում կարող էր խաթարվել իրավունքի գերակայությունը՝ կալանավորված անձանց համար անհասանելի դարձնելով իրավական պաշտպանության տարրական ձևերն անգամ (*Kurt–ն ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 25 մայիս, 1998), պարբ. 123):

[48] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 61.

ա) «Անհապաղ»

5–րդ հոդվածի 3–րդ մասի նպատակն է ապահովել 5–րդ հոդվածի 1–ին մասի (գ) կետի համաձայն իրականացված ոստիկանական կամ վարչական ազատությունից զրկման անհապաղ և ինքնաբերական դատական ստուգումը (*De Jong–ը, Baljet–ը և Van Den Brink–ն ընդդ. Նիդերլանդների* (վճիռ՝ 22 մայիս, 1984), պարբ. 48–49)[49]: Այս պահանջից բխող խիստ ժամկետը սահմանափակում է ճկուն մեկնաբանության հնարավորությունը, և դրույթը չի նախատեսում անձին ձերբակալումից կամ կալանավորումից հետո անհապաղ դատավորի կամ դատական այլ պաշտոնատար անձի մոտ տանելու պահանջից բացառության հնարավորությունը (*Bergmann–ն ընդդ. Էստոնիայի* (վճիռ՝ 29 մայիս, 2008), պարբ. 45)[50]:

ՄԻԵԴ–ն իսկապես նշել է, որ «անհապաղության հարցը պետք է յուրաքանչյուր գործի շրջանակում գնահատել՝ հաշվի առնելով դրա առանձնահատկությունները», և որ «5–րդ հոդվածի 3–րդ մասի այս պահանջից բխող ժամկետային խիստ սահմանափակումը դրա մեկնաբանության համար մեծ ճկունություն չի ընձեռում» (*Kandzhov–ն ընդդ. Բուլղարիայի* (վճիռ՝ 6 նոյեմբեր, 2008), պարբ. 65):

Ինչ վերաբերում է դատավորի մոտ «անհապաղ» տարվելու պահանջի իմաստին, ապա ՄԻԵԴ–ի նախադեպային պրակտիկան հուշում է, որ դատավորին ներկայացնելը պետք է տեղի ունենա չորս օրվա ընթացքում (բացառությամբ իսկապես արտառոց դեպքերի, երբ ձերբակալվածին ազատ արձակելուց կամ կալանավորման նպատակով դատավորի մոտ տանելուց առաջ լրացել է 96 ժամը, և դա կարող է հիմնավորվել, օրինակ, ձերբակալվածի առողջական խնդիրներով կամ աշխարհագրական գործոններով)[51]: Այնուհանդերձ, անհապաղ տանելու պահանջը կարող է խախտված համարվել նույնիսկ ավելի կարճ ժամկետի

[49] Council of Europe, Guide on Article 5 of the Convention: Right to Liberty and Security, (2014 Council of Europe Publishing), պարբ. 130.

[50] Council of Europe, Guide on Article 5 of the Convention: Right to Liberty and Security, (2014 Council of Europe Publishing), պարբ. 131-132.

[51] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing).

դեպքում, եթե գոյություն չունեն որևէ առանձնահատուկ դժվարություններ կամ բացառիկ հանգամանքներ, որոնք իշխանության մարմիններին թույլ չեն տալիս ձերբակալված անձին ավելի վաղ տանել դատավորի մոտ (*Gutsanovi–ն ընդդ. Բուլղարիայի* (վճիռ՝ 15 հոկտեմբեր, 2013), պարբ. 154–59, *Ipek–ը և այլք ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 17 փետրվար, 2004), պարբ. 36–37, և *Kandzhov–ն ընդդ. Բուլղարիայի* (վճիռ՝ 6 նոյեմբեր, 2008), պարբ. 66):

Եվ վերջապես՝ ազատությունից զրկելու դատական ստուգումը պետք է ինքնաբերաբար տեղի ունենա և չի կարող կախված լինել դրա վերաբերյալ ազատությունից զրկված անձի կողմից միջնորդություն ներկայացնելուց (McKay–ն ընդդ. *Միացյալ Թագավորության* (Մեծ պալատի վճիռ՝ 3 հոկտեմբեր, 2006), պարբ. 34, *Varga–ն ընդդ. Ռումինիայի* (վճիռ՝ 1 ապրիլ, 2008), պարբ. 52, *Viorel Burzo–ն ընդդ. Ռումինիայի* (վճիռ՝ 30 հունիս, 2009), պարբ. 107):

Նման պահանջը ոչ միայն կփոխեր 5–րդ հոդվածի 3–րդ մասով ընձեռված երաշխիքի բնույթը, որը տարբերվում է 5–րդ հոդվածի 4–րդ մասով ընձեռված երաշխիքից (վերջինս երաշխավորում է ազատությունից զրկելու օրինականության դատական վերանայման նպատակով վարույթ հարուցելու իրավունքը), այլ նաև կիմաստազրկեր 5–րդ հոդվածի 3–րդ մասով ընձեռված երաշխիքը, որի նպատակն է անձին պաշտպանել կամայական ազատությունից զրկելուց՝ ապահովելով ազատությունից զրկելու գործողության անկախ դատական ստուգումը (*Aquilina–ն ընդդ. Մալթայի* (Մեծ պալատի վճիռ՝ 29 ապրիլ, 1999), պարբ. 49, *Niedbała–ն ընդդ. Լեհաստանի* (վճիռ՝ 4 հուլիս, 2000), պարբ. 50): Այդպիսով, ի տարբերություն 5–րդ հոդածի 3–րդ մասի, 5–րդ հոդվածի 4–րդ մասի հիմքով դատական ստուգման ընթացակարգը մեկնարկում է դիմողի նախաձեռնությամբ, մինչդեռ 5–րդ հոդվածի 3–րդ մասի հիմքով նախաձեռնությունը պետք է դրսևորվի պետական մարմինների կողմից:

Դատական նախադեպի օրինակներ

***Brogan–ը և այլք ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 29 նոյեմբեր, 1988)**

ՄԻԵԴ–ը համարեց, որ «անհապաղության» հասկացության մեկնաբանության և կիրառության մեջ ճկուն լինելու հնարավորությունը խիստ սահմանափակ է: ՄԻԵԴ–ը համարում է, որ ազատազրկման չորս ժամկետներից նույնիսկ ամենակարճը, որը պարոն Մաքֆադենի կողմից ոստիկանությունում անցկացրած չորս օրը և վեց ժամն էր, գերազանցում էր 5–րդ հոդվածի 3–րդ մասի առաջին կետով թույլատրված խիստ սահմանափակ ժամկետը (պարբ. 58):

***Aksoy–ն ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 18 դեկտեմբեր, 1996)**

ՄԻԵԴ–ը նշեց.

... Brannigan–ի և McBride–ի գործով վճռում ... դատարանը վճռեց, որ Միացյալ Թագավորության կառավարությունը չի գերազանցել հայեցողության թույլատրելի սահմանը՝ շեղվելով Կոնվենցիայի 5–րդ հոդվածով նախատեսված իր պարտավորությունից ..., քանի որ ահաբեկչական հանցագործությունների մեջ կասկածվող անձանց թույլատրվում էր առանց դատական ստուգման պահել մինչև յոթ օր ժամկետով (պարբ. 77):

Այնուամենայնիվ, դատարանը նշեց, որ «թեպետ դատարանը գտնում է, որ ... ահաբեկչական հանցագործությունների քննությունն անկասկած իշխանությունների համար ստեղծում է առանձնահատուկ խնդիրներ, դատարանը չի կարող ընդունել այն մոտեցումը, որ կասկածյալին անհրաժեշտ է առանց դատական միջամտության պահել 14 օր: Այդ ժամկետը չափազանց երկար է, որի հետևանքով գանգատաբերը խոցելի է մնում ոչ միայն իր ազատության իրավունքի նկատմամբ կամայական միջամտության առումով, այլ նաև խոշտանգման առումով» (պարբ. 78):

***Harkmann–ն ընդդ. Էստոնիայի* (վճիռ՝ 11 հուլիս, 2006)**

Դատարանը նշեց, որ գանգատաբերն ազատ էր արձակվել 2002 թ. հոկտեմբերի 17–ին իր կալանավորման դատական լսումից հետո, այսինքն՝ նախքան իր ազատությունից զրկման օրինականության

քննարկումը: Մինչև այդ պահը նա ազատությունից զրկված էր եղել 15 օր: Դատարանը համարում է, որ այդ ժամկետն անհամատեղելի է 5–րդ հոդվածի 3–րդ մասով նախատեսված «անհապաղության» պահանջին (պարբ. 39):

Դատավորի մոտ անհապաղ տարվելու իրավունքին ՄԻԵԴ–ն անդրադարձել է Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում (թիվ 3627/06, 10.07.2012): Սույն գործով դիմումատուն պնդում էր, որ թեև դատավորի մոտ տարվել է մինչև Սահմանադրությամբ և օրենքով սահմանված 72 ժամի լրանալը (մոտ մեկուկես ժամ առաջ), սակայն կալանավորումը երկարաձգելու մասին որոշումը դատարանը կայացրել էր այս ժամանակահատվածի լրանալուց մի քանի ժամ հետո, որի ընթացքում ինքը դատարանի դահլիճում ազատ չէր արձակվել: Դատարանը որոշեց, որ իշխանությունները կատարել էին անձին նշված ժամկետում, հետևաբար անհապաղ կերպով, դատավորի մոտ տանելու իրենց պարտականությունը: Իսկ այն հանգամանքը, որ դատական քննությունը ձգձգվել էր մի քանի ժամով և դատական ակտը կայացվել էր 72 ժամը լրանալուց հետո, դատարանը նկատեց, որ այդ ձգձգումը չէր վերագրվում դատավորին, այլ դիմումատուին, ում տասը պաշտպանները շարունակ հանդես էին եկել միջնորդություններով ու առարկություններով, որն էլ պատճառ էր հանդիսացել դատական քննության ձգձգմանը:

4. ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ ԳՏՆՎԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Այս բաժինն անդրադառնում է մինչդատական կալանքի ընթացքում կալանավորվածների պայմաններին և նրանց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքին: Այս ժամանակահատվածում կասկածյալները խոցելի են վատ վերաբերմունքի նկատմամբ, և նրանց իրավունքների իրականացումը գրեթե ամբողջովին կախված է պետության կամքից: Քննիչները, ուստի, պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնեն կալանքի տակ գտնվող կասկածյալների իրավունքներին:

Ա. Մինչդատական կալանքի ողջամիտ տևողությունը

Քննիչը նախ և առաջ պետք է ապահովի, որպեսզի կասկածյալի կալանքը չգերազանցի ողջամիտ ժամկետը: 5–րդ հոդվածի 3–րդ մասով նախատեսվում է, որ «սույն հոդվածի 1–ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք ... ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»: ՀՀ Սահմանադրության 27–րդ հոդվածի 4–րդ մասը սահմանում է, որ եթե հոդվածի 1–ին մասի 4–րդ կետի հիմքով ազատությունից զրկված անձի վերաբերյալ ազատությունից զրկվելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին, ապա նա անհապաղ ազատ է արձակվում:

5–րդ հոդվածի 3–րդ մասի իմաստով կալանավորման տևողությունը որոշելիս ժամկետի հաշվարկը սկսվում է մեղադրյալին ազատությունից զրկելու օրվանից և ավարտվում մեղադրական դատավճռի օրը (*Solmaz–ն ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 16 հունվար, 2007), պարբ. 23–24, *Kalashnikov–ն ընդդ. Ռուսաստանի* (վճիռ՝ 15 հուլիս, 2002), պարբ. 110,

Wemhoff-ն ընդդ. Գերմանիայի (վճիռ՝ 27 հունիս, 1968), պարբ. 9): Այսինքն՝ ՀՀ օրենսդրության պայմաններում 5-րդ հոդվածի 3-րդ մասի ներքո կալանավորման ժամկետը սկսում է անձին արգելանքի վերցնելու պահից մինչև մեղադրական դատավճռի ուժի մեջ մտնելը: Մեղադրական դատավճռից հետո մինչև անձի վերջնական դատապարտումը անձի կալանավորման ժամկետը կարգավորվում է 5-րդ հոդվածի 1-ին մասի ա կետի ներքո՝ ազատազրկում պատիժը կրելու նպատակով: Այսինքն՝ առկա են տարբեր մոտեցումներ ազգային իրավունքի և Կոնվենցիայի ներքո: Անկախ այն հանգամանքից, որ մեղադրական դատավճիռը դեռ ուժի մեջ չի մտել և անձը շարունակում է մնալ խափանման միջոց կալանավորման տակ մինչև մեղադրական դատավճռի ուժի մեջ մտնելը ազգային իրավակարգավորման համաձայն, Կոնվենցիայի ներքո անձը համարվում է դատապարտված, և անձի անազատության մեջ գտնվելու այդ հատվածը համարվում է ազատազրկում պատժի կրման նպատակով:

Այսպիսով՝ այս նորմը շատ վերաբերելի է Հայաստանում քննիչների աշխատանքին, ովքեր իրենց գործունեությունը ծավալում են հենց այդ ժամանակահատվածում:

1. Կալանքը երկարաձգելու պատճառները

5-րդ հոդվածի 3-րդ մասը դատական իշխանություններին հնարավորություն չի ընձեռում ընտրություն կատարել մեղադրյալին ողջամիտ ժամկետում դատաքննության ներկայացնելու կամ մինչև դատական քննությունը ժամանակավորապես ազատ արձակելու միջև: Այսինքն՝ մեղադրյալը պետք է ժամանակավորապես ազատ արձակվի այն պահից, երբ նրա կալանավորումը դադարում է ողջամիտ լինելուց[52]:

Մասնավորապես, ինչպես նշվեց, կալանքը երկարաձգելու օրինականության պարտադիր նախապայման է կալանավորված անձի կողմից հանցանք կատարած լինելու ողջամիտ կասկածի պահպանումը (*Vosgien-ն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 3 հոկտեմբեր, 2013)): Այնուհան-

[52] Council of Europe, Guide on Article 5 of the Convention: Right to Liberty and Security, (2014 Council of Europe Publishing), պարբ. 155.

դերձ, որոշակի ժամանակ անցնելուց հետո ողջամիտ կասկածի պահպանումն այլևս բավարար չէ, և ՄԻԵԴ–ը պարտավոր է դիտարկել, թե արդյոք ազգային իշխանության մարմինները ներկայացրել են ազատությունից զրկելը հիմնավորող այլ հիմքեր: Ուստի կալանքի երկարաձգումը կարող է կոնկրետ գործով հիմնավորված լինել միայն այն դեպքում, երբ գոյություն ունեն հանրային շահի իրական պահանջի առկայությունը հաստատող որոշակի նշաններ, որոնք, ի հեճուկս անմեղության կանխավարկածի, ավելի ծանրակշիռ են, քան անձի ազատության իրավունքը[53]: Եթե այդ հիմքերը «վերաբերելի» են և «բավարար», ապա դատարանը պետք է նաև ստուգի, թե արդյոք իրավասու ազգային մարմինները վարույթը իրականացնելիս դրսևորել են «հատուկ ջանասիրություն»[54]:

Ամփոփելով կարելի է նշել, որ ներպետական դատարանները պարտավոր են վերանայել անձի մինչդատական կալանքի երկարաձգումը՝ նպատակ ունենալով ապահովել անձի ազատումն այն դեպքում, երբ հանգամանքներն այլևս չեն արդարացնում ազատությունից զրկման շարունակումը: Առնվազն սկզբնական որոշակի շրջանում ողջամիտ կասկածի գոյությունը կարող է բավարար լինել կալանքը հիմնավորելու համար, սակայն գալիս է մի պահ, երբ դա այլևս բավարար չէ: Հաշվի առնելով, որ ժամկետի ողջամիտ լինելը հնարավոր չէ վերացական գնահատման ենթարկել, այլ պետք է գնահատել յուրաքանչյուր գործի առանձնահատկությունները հաշվի առնելով, գոյություն չունի ֆիքսված որոշակի ժամկետ, որը կիրառելի կլիներ բոլոր գործերի նկատմամբ (*McKay*–ն ընդդ. *Միացյալ Թագավորության* (Մեծ պալատի վճիռ՝ 3 հոկտեմբեր, 2006), պարբ. 41–45, *Bykov–ն ընդդ. Ռուսաստանի* (Մեծ պալատի վճիռ՝ 10 մարտ, 2009), պարբ. 61–64, *Idalov–ն ընդդ. Ռուսաստանի* (Մեծ պալատի վճիռ՝ 22 մայիս, 2012), պարբ. 139–41)[55]:

---

[53] Council of Europe, Guide on Article 5 of the Convention: Right to Liberty and Security, (2014 Council of Europe Publishing), պարբ. 156.

[54] Council of Europe, Guide on Article 5 of the Convention: Right to Liberty and Security, (2014 Council of Europe Publishing), պարբ. 156.

[55] Council of Europe, Guide on Article 5 of the Convention: Right to Liberty and Security, (2014 Council of Europe Publishing), պարբ. 159.

Կալանավորման «վերաբերելի» և «բավարար» պատճառներին անդրադարձել է Վճռաբեկ դատարանը իր մի շարք նախադեպային որոշումներում: Մասնավորապես Ա. Ճուղուրյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանը նախ սահմանեց, որ թեև կալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխատեսական, մոտավոր բնույթ, սակայն անհրաժեշտ է դրանք հիմնավորել քրեական գործով ձեռք բերված որոշակի նյութերով, որով էլ վերջին հաշվով որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը: Այնուհետև Վճռաբեկ դատարանը սահմանեց, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135–րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա, որը նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ **փաստական տվյալներ** (Ա. Ճուղուրյանի վերաբերյալ գործով որոշում, ՎԲ–132/07, 2007 թ. օգոստոսի 30–ին): Հաջորդ՝ Ասլան Ավետիսյանի վերաբերյալ գործով կայացրած որոշման մեջ Վճռաբեկ դատարանը սահմանեց, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135–րդ հոդվածով սահմանված խափանման միջոցի կիրառման հիմքերը չեն կարող այնպես մեկնաբանվել և կիրառվել, որ կալանքի ժամկետը երկարացնելու մասին դատական ակտը պատճառաբանելու համար ընդամենը բավարար լինի վերարտադրել կամ վկայակոչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135–րդ հոդվածով սահմանված իրավական ձևակերպումները՝ առանց փաստական հիմքերի: Այսինքն՝ մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն **գործի նյութերից բխող** ողջամիտ ենթադրությունների վրա (Ա. Ավետիսյանի վերաբերյալ գործով որոշում, ԱՎԴ/0022/06/08, 31.10.2008, 18–22 կետեր):

Բոլոր դեպքերում պետք է հիշել, որ ազատ արձակելու դեմ և կողմ փաստարկները չպետք է լինեն ընդհանրացված և վերացական բնույթի: Հատկապես երբ օրենքը սահմանում է կալանավորման անհրաժեշտության **կանխավարկածային** հիմքեր, դատարանները պետք է համոզիչ կերպով մատնացույց անեն այն փաստերը, որոնք գերակա-

յում են անձի ազատության իրավունքի նկատմամբ հարգանքի կանոնը (*Խուդոյորովն ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 6847/02, 08.11.2005, § 173): Եթե դատարանները հիմնվում են օրենքով սահմանված կանխավարկածային հիմքերի վրա, նրանց որոշումներում գերակշռում են շաբլոնային և ստանդարտ ձևակերպումները որպես կալանավորման հիմք: Հաճախ էլ դատարանները բավարարվում են միայն օրենսդրական նորմի պարզ վկայակոչմամբ: Նման որոշումներում բացակայում է փաստերի, հանգամանքների, ապացույցների **վերլուծությունը**: Նման որոշումները հակասում են 5–րդ հոդվածի 3–րդ մասին:

Կանխավարկածային հիմքեր ասելով՝ նկատի ունենք հանգամանքներ, որոնք կալանավորումը դարձնում են պարտադիր՝ անկախ այն հանգամանքից, որ կալանավորման հիմքերը բացակայում են: Այդպիսի հիմքերից են, օրինակ, մեղադրանքի ծանրությունը կամ պատժաչափի խստությունը՝ ինքնին որպես կալանավորման պարտադիր հիմք: Պարտադիր կալանավորման ցանկացած համակարգ *per se* (ինքնին) հակասում է 5–րդ հոդվածի 3–րդ մասին *(Ռոխլինան ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 54071/00, 7.04.2005, § 67): Գործնականում հաճախ հանդիպում է կալանավորման պատճառաբանության հետևյալ եղանակը.

«Դատարանը գտնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման, քանի որ մեղադրյալին մեղսագրվող արարքի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է: Այդ գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ մեղադրյալը, ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությունը, անօրինական ազդեցություն գործադրել»:

Նման պատճառաբանության մեջ բացակայում են փաստերը, հանգամանքները կամ ապացույցները և դրանց վերլուծությունը: Պրակտիկայում կարելի է հանդիպել նաև որոշումների, որոնցում կատարված է միայն օրենսդրական նորմի վկայակոչում, ինչպես նաև որոշումներ,

որոնցում դատարանը ուղղակի նշել է, որ կալանավորման նախկին որոշումը ընտրվել է ճիշտ և այդ առումով ուժի մեջ է թողել նախկին որոշումը, քան թե որոշում է կայացրել ժամկետը երկարաձգելու մասին (*Խարչենկոն ընդդեմ Ուկրաինայի,* թիվ 40107/02, 10.02.2011, § 80): Ի դեպ՝ նման խնդիր առկա է նաև Հայաստանում, երբ դատավորը քրեական գործը վարույթ ընդունելիս որոշում է կայացնում կալանավորման մասին նախկին որոշումն ուժի մեջ թողնելու, քան թե դատաքննության փուլում կալանավորումը երկարաձգելու մասին: ՄԻԵԴ–ը խախտում է արձանագրում, երբ քննչական մարմիններից գործը դատական քննության համար ստացող դատավորը **ոչ թե «երկարաձգում», այլև «անփոփոխ է թողնում»** կալանքը՝ չվերլուծելով կալանքի հիմքերը և ողջամիտ կասկածի առկայությունը, որը վարույթի մինչդատական փուլում կիրառելի սովորական պահանջ է *(Giorgi Nikolaishvili–ի* գործը*, թիվ 37048/04, 13.01.2009,* § 65):

Դատական նախադեպի օրինակներ

***Vosgien–ն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 3 հոկտեմբեր, 2013)**

2006 թ. սեպտեմբերի 15–ին պարոն Վոզգիենը ձերբակալվել էր և տեղավորվել ոստիկանության պահման վայրում՝ կասկածվելով այլ անձանց հետ միասին փրկագին ստանալու նպատակով անձին առևանգելու և բանտարկելու, այլ անձանց հետ համատեղ կատարված զինված ավազակային հարձակման, բռնաբարության և բռնաբարության փորձի մեջ: 2006 թ. սեպտեմբերի 19–ին պարոն Վոզգիենի և այլ անձանց նկատմամբ կիրառվել էր մինչդատական կալանք: Գանգատաբերի մինչդատական կալանքը մի քանի անգամ երկարաձգվել էր և տևել ընդհանուր առմամբ 4 տարի 3 ամիս:

Սույն գործով քննող մարմինները վարույթի ողջ ընթացքում քիչ թե շատ միևնույն հիմքերն էին կիրառել ազատ արձակման մասին միջնորդությունները մերժելու կամ մինչդատական կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշումներ կայացնելու համար: Դրանք էին փախուստի վտանգը, նոր հանցանք գործելու վտանգը, հանցակիցների հետ պայմանավորվածության գալու վտանգը և հասարակական կարգը

ծանր և շարունակական կերպով խաթարելու վտանգը: Այնուհանդերձ, քննչական բաժինը չէր հստակեցրել, թե ինչ հիմքեր ունի՝ համարելու, որ մշտապես առկա է փախուստի ռիսկ: Ինչ վերաբերում էր նոր հանցանք գործելուն, ապա քննչական բաժինը որևէ շոշափելի ապացույցներ չէր ներկայացրել՝ հիմնավորելու այն պնդումը, թե գանգատաբերի անձն էր այնպիսին, որ հավանական էր դառնում նոր հանցանք գործելու վտանգը: Դատարանը նկատեց նաև, որ ներպետական դատարանները հենվել էին ճնշումներ գործելու և հանցավոր պայմանավորվածություն ձեռք բերելու վտանգի առկայության վրա՝ հաշվի առնելով համապատասխան անձանց՝ ներառյալ գանգատաբերի կողմից իրենց նպատակներին հասնելու համար գործադրած բռնությունը, այնուհանդերձ, դա անելիս ներպետական դատարանները չէին սահմանափակվել որոշակի գործի որոշակի հանգամանքներով:

Դատարանը վճռեց, որ դատական իշխանությունների նշած պատճառները բավարար չէին եղել գանգատաբերին չորս տարի երեք ամիս շարունակ կալանքի տակ պահելը հիմնավորելու համար: Հետևապես, դատարանը եզրակացրեց, որ գանգատաբերի մինչդատական կալանքի չափազանց երկար տևողության պատճառով տեղի է ունեցել 5–րդ հոդվածի 3–րդ մասի (ազատության և անձի անձեռնմխելիության իրավունքի) խախտում (ECHR Press Release, ECHR 284(2013), 3 հոկտեմբեր, 2013):

2. Մինչդատական կալանքի այլընտրանքները

Եվ վերջապես՝ անձին ազատ արձակելու կամ կալանավորելու մասին որոշում կայացնելիս քննիչները պետք է դիտարկեն դատաքննությանը նրա ներկայանալն ապահովելու այլընտրանքային միջոցներ կիրառելու հնարավորությունը (*Idalov–ն ընդդ. Ռուսաստանի* (Մեծ պալատի վճիռ՝ 22 մայիս, 2012), պարբ. 140). դա ներառում է գրավի կիրառությունը: ՄԻԵԴ–ի նախադեպային պրակտիկայում մշակվել են գրավը մերժելու չորս հիմնական ընդունելի պատճառներ. 1) մեղադրյալի դատին չներկայանալու վտանգը, 2) մեղադրյալին ազատ արձակելու դեպքում նրա կողմից արդարադատության իրականացումը խաթարող գործողություններ կատարելու վտանգը, 3) մեղադրյալի կողմից նոր հանցանք

գործելու վտանգը, 4) մեղադրյալի կողմից հասարակական անկարգություն առաջացնելու վտանգը (*Tiron–ն ընդդ. Ռումինիայի* (վճիռ՝ 7 ապրիլ, 2009), պարբ. 37, *Smirnova–ն ընդդ. Ռուսաստանի* (վճիռ՝ 24 հուլիս, 2003), պարբ. 59, *Piruzyan–ն ընդդ. Հայաստանի* (վճիռ՝ 26 հունիս, 2012), պարբ. 94): Գրավ կիրառելու անհրաժեշտությունը առաջանում է միայն այն դեպքում, երբ կալանավորման հիմքերը գերակայում են (*Մանգուրասն ընդդեմ Իսպանիայի,* թիվ 12050/04, 28.09.2010, §§ 78–79): Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 3–րդ մասի վերջին արտահայտության ներքո՝ գրավի նպատակը ոչ թե վնասի հատուցումն է, այլ մեղադրյալի ներկայությունը դատաքննությանն ապահովելը (*Մանգուրասն ընդդեմ Իսպանիայի,* թիվ 12050/04, 28.09.2010, § 78): Գրավի չափը որոշելիս դատարանները պետք է հաշվի առնեն մեղադրյալի ֆինանսական, գույքային վիճակը, վճարելու նրա հնարավորությունը (*Մանգուրասն ընդդեմ Իսպանիայի*, թիվ 12050/04, 28.09.2010, § 80)՝ մինչև վստահության այն աստիճան, որ դատաքննությանը չներկայանալու դեպքում անվտանգության բացակայության հեռանկարը կարող է նրան հետ պահել փախուստի դիմելու ցանկությունից (*Ալեքսանդր Մակարովն ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 15217/07, 12.03.2009, § 139): Գրավի պահանջվող գումարը գնահատելիս պետք է առաջին հերթին «հաշվի առնել մեղադրյալի անձը, նրա գույքային դրությունը և նրա կապն ապահովման միջոցը տրամադրող անձանց հետ, այլ կերպ ասած՝ որքան հավանական է, որ նրա կողմից դատին չներկայանալու դեպքում ապահովման միջոցը կորցնելու կամ երաշխավորների դեմ քայլեր կատարելու հեռանկարը կարող է բավարար չափով փարատել կամ խափանել փախուստի դիմելու նրա ցանկությունը» (*Mangouras–ն ընդդ. Իսպանիայի* (Մեծ պալատի վճիռ՝ 28 սեպտեմբեր, 2010), պարբ. 78, *Neumeister–ն ընդդ. Ավստրիայի* (վճիռ՝ 27 հունիս, 1968), պարբ. 14):

Աշխատանք մասնակիցների համար

Մասնակիցները քննարկում են մինչդատական կալանքի՝ Հայաստանում գոյություն ունեցող և իրենց հայտնի այլընտրանքները և այն հանգամանքները, որոնցում դրանք կարող են կիրառվել:

Մինչդատական կալանքի այլընտրանքների վերաբերյալ մանրակրկիտ տեղեկությունների համար տե՛ս հետևյալ ուսումնական մոդուլը. *Մինչդատական կալանքը և քննության հարակից հիմնախնդիրները*:

Բ. Վերաբերմունքը կալանքի ընթացքում՝ ներառյալ կալանքի պայմանները

Քննիչը պետք է դիտարկի մեղադրյալին մինչդատական կալանքի տակ պահելու պայմանները և նրա նկատմամբ դրսևորվող վերաբերմունքը: Քննիչն իսկապես պետք է նաև տեղյակ լինի, որ անձի մինչդատական կալանքի պայմանները նույնպես կարող են առաջացնել 3–րդ հոդվածով արգելված խոշտանգում կամ անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք:

Ձերբակալմանը հաջորդող շրջանում և մինչդատական կալանքի ընթացքում մեղադրյալները հատկապես խոցելի են պետության կողմից վատ վերաբերմունքի դրսևորումների նկատմամբ: ՄԻԵԴ–ը, մասնավորապես, նշել է, որ ազատությունից զրկված անձինք խոցելի են Կոնվենցիայի 2–րդ հոդվածի (կյանքի իրավունք) և 3–րդ հոդվածի (խոշտանգման և վատ վերաբերմունքի արգելք) առումներով: Խոշտանգման կամ անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի կանխարգելման եվրոպական հանձնաժողովն իսկապես համարում է, որ ազատությունից զրկելուն անմիջապես հաջորդող շրջանում է անձն առավել խոցելի[56]:

Քննության ընթացքում խոշտանգման կամ անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս *IV.5 բաժինը՝ Հարցաքննության անօրինական մեթոդները*: Հատկապես խոցելի են կալանավորվածների որոշ խմբեր, օրինակ՝ կանայք և երեխաները[57]: Մինչդատական կալանքի ընթացքում

[56] CPT, 6th General Report on the CPT's activities covering the period 1 January to 31 December 1995, [CPT/Inf (96) 21], paragraph 15. Available at: http://www.cpt.coe.int/en/annual/rep-06.htm [accessed 7 ապրիլ, 2016].

[57] UN OHCHRC, Human Rights and Law Enforcement, A Manual on Human Rights and Training for Police, (1997) Professional Training Series No. 5, p. 75.

վատ վերաբերմունքի նկատմամբ հատկապես խոցելի անձանց վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տես *3–րդ մոդուլը՝ «Խոցելի տուժողների, վկաների և կասկածյալների ներգրավմամբ կատարվող քննությունը»*:

Մեղադրյալների կալանավորման պայմանները նույնպես կարող են 3–րդ հոդվածի խախտման հանգեցնել: Մասնավորապես պետությունը պարտավոր է ապահովել անձի կալանավորումը նրա մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքն ապահովող պայմաններում, ինչպես նաև ապահովել, որպեսզի միջոցի կատարման ձևը և մեթոդը նրա համար չառաջացնեն այնպիսի դժվարություններ կամ անհարմարություններ, որոնց աստիճանը կգերազանցի ազատությունից զրկմանը ներհատուկ տառապանքի անխուսափելի աստիճանը, և հաշվի առնելով ազատազրկման պրակտիկ պահանջները, ապահովել նրա առողջությունը և բարօրությունը, մասնավորապես, նրա համար կազմակերպելով անհրաժեշտ բուժօգնություն (*Ciorap–ն ընդդ. Մոլդովայի* (վճիռ՝ 19 հունիս, 2007), պարբ. 64, *Kudla–ն ընդդ. Լեհաստանի* (Մեծ պալատի վճիռ՝ 26 հոկտեմբեր, 2000), պարբ. 94):

Կալանավորման պայմանները գնահատելիս ՄԻԵԴ–ը հաշվի է առնում պայմանների կուտակային ազդեցությունը և կալանավորման տևողությունը (*Ciorap–ն ընդդ. Մոլդովայի* (վճիռ՝ 19 հունիս, 2007), պարբ. 64, *Ostrovar–ն ընդդ. Մոլդովայի* (վճիռ՝ 13 սեպտեմբեր, 2005), պարբ. 80):

Գերբնակեցումն ինքնին 3–րդ հոդվածի ներքո խնդիր է առաջացնում (*Kalashnikov–ն ընդդ. Ռուսաստանի* (վճիռ՝ 15 հուլիս, 2002), պարբ. 97, *Ostrovar–ն ընդդ. Մոլդովայի* (վճիռ՝ 13 սեպտեմբեր, 2005), պարբ. 84), հատկապես երբ այն երկար ժամանակ է տևում (*Ciorap–ն ընդդ. Մոլդովայի* (վճիռ՝ 19 հունիս, 2007), պարբ. 67): Սննդի, ջրի, անձնական տարածքի, կյանքի պայմանների, բուժօգնության և զբաղմունքի հետ կապված խնդիրները նույնպես այս առումով կարող են խնդիրներ առաջացնել (*Ciorap–ն ընդդ. Մոլդովայի* (վճիռ՝ 19 հունիս, 2007), պարբ. 60–70):

Դատական նախադեպի օրինակներ

Elci–ն և այլք ընդդ. Թուրքիայի **(վճիռ՝ 13 նոյեմբեր, 2003)**

Գանգատաբերը բողոքում էր կալանավորման ծանր պայմաններից՝ սառը, մութ և խոնավ, ոչ համարժեք մահճակալի պարագաներով, սննդով և սանիտարական հանգույցով, և պնդում էր, որ իրենց վիրավորել են, նվաստացրել, ապտակել և ահաբեկելով ստիպել, որ ստորագրեն իրենց առջև դրվող ցանկացած փաստաթուղթ: Ավելին՝ ՄԻԵԴ–ն ընդունեց, որ առնվազն կարևոր պահերին, ինչպիսք են հարցաքննությունը և պրն Գրյուվենի հետ առերեսումը, գանգատաբերների աչքերը կապված են եղել (պարբ. 641): Հիմնավորվեց, որ գանգատաբերները ենթարկվել են ֆիզիկական և հոգեկան բռնության, և այդ վատ վերաբերմունքի պատճառով նրանք ցավ և տառապանք են կրել, որը եղել է առանձնապես դաժան՝ խախտելով 3–րդ հոդվածը և հանգեցնելով խոշտանգման:

Ciorap–ն ընդդ. Մոլդովայի **(վճիռ՝ 19 հունիս, 2007)**

Գանգատաբերը բողոքում էր, որ իր կալանքի պայմանները հավասարազոր էին եղել անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի: Յուրաքանչյուր կալանավոր բանտի իր խցում ուներ 1 քառակուսի մետրից մի փոքր ավելի տարածք, որը ՄԻԵԴ–ը համարեց «ընդունելի նվազագույնից ակնհայտորեն պակաս» (պարբ. 65): Մեկ այլ խցում, որում նա պահվել էր, կալանավորների թիվը գերազանցել էր մահճակալների թիվը (պարբ. 66): Հաշվի առնելով բանտի գերբնակեցումը՝ ՄԻԵԴ–ը նշեց, որ դա էական է հատկապես այն ժամանակ, երբ դա երկար է տևում, ինչպես սույն գործի դեպքում, երբ գանգատաբերը գտնվել էր նախնական կալանքի տակ ավելի քան 5 տարի (պարբ. 67): Բանտում կային նաև մակաբույծ միջատներ: Բանտը խոնավ էր, մահճակալների թիվը՝ անբավարար, կային կրծողներ և արևի լույսը կամ էլեկտրականությունը օրվա ընթացքում 18 ժամ հասանելի չէին (պարբ. 68): Գանգատաբերը բողոքում էր նաև սննդի քանակությունից և որակից (պարբ. 69):

ՄԻԵԴ–ը եզրակացրեց, որ «նրա կալանքի պայմաններն անմարդկային են եղել հատկապես ծայրահեղ գերբնակեցման, հակահիգիենիկ

պայմանների և սննդի քանակության և որակի առումներով, ինչպես նաև հաշվի առնելով այն տևական ժամկետը, որի ընթացքում գանգատաբերը պահվել էր այդ պայմաններում» (պարբ. 70):

Եվրոպական դատարանը ընդդեմ Հայաստանի Հանրապետության կայացրել է մի շարք վճիռներ կալանավայրի պայմանների վերաբերյալ, որոնք են՝ *Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի* (թիվ 31237/03), *Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի* (թիվ 22390/05), *Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի* (թիվ *41698/04),* ինչպես նաև Դավթյանն ընդդեմ Հայաստանի (թիվ 29736/06) և Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի (թիվ 34334/04), որոնք վերաբերում են կալանավայրում անհրաժեշտ բժշկական խնամքի և մասնագիտական բուժման բացակայությանը:

Դասին առնչվող գրականություն

Ձեռնարկներ և գիտագործնական մեկնաբանություններ

- Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, հատոր 1, ՀՀ դատավորների միություն, Երևան, 2011, էջեր 109–147:
- Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, հատոր 2, ՀՀ դատավորների միություն, Երևան, 2013, էջեր 357–377:

Իրավական ակտեր

- ՀՀ Սահմանադրություն
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
- ՄԻԵԿ և կից արձանագրությունները

Դատական ակտեր

- ՀՀ վճռաբեկ դատարանի 24.02.2011 թ. որոշումը Վահրամ Գևորգյանի գործով
- ՀՀ վճռաբեկ դատարանի 18.12.2009 թ. որոշումը Ս. Նալբանդյանի գործով
- ՀՀ վճռաբեկ դատարանի 27.08.2007 թ. որոշումը Ա. Ճուղուրյանի գործով
- ՀՀ վճռաբեկ դատարանի 31.10.2008 թ. որոշումը Ասլան Ավետիսյանի գործով

- Եվրոպական դատարանի որոշումներ
  - Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի (թիվ 3627/06)
  - Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի (թիվ 31237/03)
  - Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի (թիվ 22390/05)

- Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի (թիվ 41698/04)
- Դավթյանն ընդդեմ Հայաստանի (թիվ 29736/06)
- Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի (թիվ 34334/04)

ԴԱՍ 5. ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՍԿԱԾՅԱԼԻ ԵՎ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՄԱՐ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ

Այս բաժնի շնորհիվ մասնակիցները պատկերացում են կազմում այն մասին, թե արդար դատաքննության իրավունքն ինչ ազդեցության կարող է ենթարկվել քրեական գործով քննության ընթացքում: Դասը վերաբերում է 6–րդ հոդվածին առնչվող ՄԻԵԴ–ի նախադեպային պրակտիկային: Մասնավորապես կներկայացվեն քրեական գործով քննության այն մեթոդները, որոնք կարող են միջամտել արդար դատաքննության իրավունքներին: Կվերլուծվեն խախտումներից խուսափելու հնարավոր ուղիները:

Դասի ավարտին մասնակիցները պետք է.

- ընկալեն արդար դատաքննության իրավունքի կարևորությունը քրեական գործով քննության շրջանակում,
- հասկանան, թե քննության որ հնարքները կարող են ՄԻԵԴ–ի 6–րդ հոդվածի խախտումներ առաջացնել,
- պատկերացնեն, թե քննության ինչ մեթոդաբանություն կարող է կիրառվել՝ բոլոր կասկածյալների և մեղադրյալների համար 6–րդ հոդվածի համաձայն երաշխավորելու արդար դատաքննությունը:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մասնակիցները թերևս արդեն տեղյակ են, որ քննիչները կարևոր դեր են կատարում հանցավոր վարքագիծը քննելու գործում և այս առումով ունեն ընդարձակ լիազորություններ՝ ներառյալ կասկածյալներին, մեղադրյալներին և վկաներին հարցաքննելու, խուզարկություն-

ներ և օպերատիվ–հետախուզական միջոցառումներ իրականացնելու և մինչդատական կալանք կիրառելու լիազորությունները: Սրանցից շատերը կարող են խիստ միջամտողական լինել, և հանցագործության մեղադրանքը քննելիս քննիչները պարտավոր են ապահովել քրեական գործընթացի անաչառությունը[58] և մարդու իրավունքների միջազգային չափանիշների բավարար չափով կատարումը: Այնուհանդերձ, նախորդ դասերի ընթացքում վերլուծված՝ քննիչների պարտավորություններն ունեն նաև այլ առանձնահատկություն. դրսևորվելով քրեական գործընթացի շրջանակում՝ դրանք կարող են կարևոր ազդեցություն ունենալ նաև 6–րդ հոդվածով երաշխավորված՝ արդար քրեական դատաքննության վրա[59]:

Աշխատանք մասնակիցների համար

Մասնակիցները խմբերով քննարկում են, թե ինչպես են իրենք ընկալում «արդար դատաքննության» հասկացությունը և քրեական գործով քննության շրջանակում ծագող այն դեպքերը, որոնցում իրենց կարծիքով մեղադրյալի արդար դատաքննության իրավունքները կարող են վտանգված լինել:

Ինչպես քննարկվեց, 6–րդ հոդվածը ՄԻԵԿ–ի այն դրույթն է, որով պաշտպանվում է արդար դատաքննության իրավունքը: Հենց այս դրույթի վերաբերյալ է ՄԻԵԴ–ի կողմից ձևավորվել առավել ծավալուն նախադեպային պրակտիկա[60]: Թեպետ դա հիմնականում ուղղակիորեն չի վերաբերում քրեական վարույթի նախնական քննության փուլին, նախադեպային պրակտիկայի որոշ տարրեր իսկապես կարևոր նշանակություն ունեն քննիչների համար[61]:

---

[58] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 64.

[59] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 64.

[60] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 75.

[61] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 75.

6–րդ հոդվածի ներքո կարևորագույն խնդիրն ի վերջո այն է, թե արդյոք քրեական վարույթն ամբողջության մեջ եղել է արդար, այսինքն՝ այնպիսին, ինչպիսին տվյալ հանգամանքներում անհրաժեշտ էր արդարադատության պատշաճ իրականացման համար (*Vaudelle–ն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 30 հունվար, 2001), պարբ. 57–66)[62]: Հետևաբար, 6–րդ հոդվածի հիմնարար և համընդգրկուն սկզբունքը վարույթի «արդարությունն» է, որն արտացոլված է 6–րդ հոդվածի 1–ին մասում: Վերջինս ներառում է «արդար և հրապարակային դատաքննության» իրավունքը, «ողջամիտ ժամկետի» իրավունքը, «օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի» իրավունքը, ընդ որում՝ դատավճիռ պետք է հրապարակվի դռնբաց նիստում, բացառությամբ սահմանված որոշակի հանգամանքների, որոնց պետք է տալ նեղ մեկնաբանություն:

Ավելին՝ քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձը ձեռք է բերում 6–րդ հոդվածի 2–րդ և 3–րդ մասերով նախատեսված լրացուցիչ նվազագույն իրավունքներ՝ ներառյալ անմեղ համարվելու իրավունքը, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ, իրեն ներկայացված մեղադրանքի մասին տեղեկացվելու իրավունքը, իր պաշտպանությունը պատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունքը, անձամբ իրեն պաշտպանելու կամ իրավաբանի օգնությունը ստանալու իրավունքը, վկաներին (անձամբ կամ միջնորդավորված կերպով) հարցաքննելու իրավունքը և թարգմանչի ծառայություններից անվճար օգտվելու իրավունքը[63]:

Թեպետ անձը կարող է հրաժարվել 6–րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներից (օրինակ՝ հարցաքննության ընթացքում հրաժարվելով փաստաբանի ծառայություններից), դա կարող է տեղի ունենալ, եթե նա դա անում է «իր սեփական ազատ կամարտահայտությամբ և աներկբայորեն», և եթե չկա հանրային շահի խնդիր (*Albert–ը և Le Compte–ն ընդդ. Բելգիայի* (վճիռ՝ 10 փետրվար, 1983), պարբ. 35):

Արդար դատաքննության իրավունքը ամրագրված է Սահմանադրու-

[62] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 77.

[63] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 76.

թյան 63–րդ հոդվածի 1–ին մասով, համաձայն որի՝ «յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդար, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»: Կոնվենցիայի 6–րդ հոդվածի առանձին դրույթներ ևս ամրագրված են Սահմանադրությամբ, ինչպես, օրինակ՝ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը կամ անմեղության կանխավարկածը, այդուհանդերձ, այդ դրույթներն առավել մանրամասն շարադրված են «Քրեական դատավարության օրենսգրքի» ընդհանուր մասում:

Ա. 6–րդ հոդվածը կիրառելի՞ է քրեական գործով նախնական քննության ընթացքում

Նախքան արդար դատաքննության առանձին երաշխիքները քննարկելը տեղին կլիներ անդրադառնալ մեղադրյալի արդար դատաքննության իրավունքի երաշխավորման մեջ քննիչների դերին: 6–րդ հոդվածի բոլոր դրույթները կիրառելի են «քրեական մեղադրանքի» առաջադրման պահից, ուստի, մեկնաբանության համաձայն, պետք է ներառեն նաև քննության մինչդատական փուլը: Այսինքն՝ Կոնվենցիայի ներքո արդար դատաքննության իրավունքը սկսում է գործել այն պահից, երբ անձին առաջադրվում է մեղադրանք:

Հաշվի առնելով, որ ՄԻԵԴ–ը քրեական վարույթը դիտարկում է որպես մեկ ամբողջություն, 6–րդ հոդվածի որոշ պահանջներ, օրինակ՝ դատաքննության ողջամիտ ժամկետի պահանջը, կարող են կիրառելի լինել նաև նախաքննության փուլում, քանի որ դրանց չկատարումը սկզբնական շրջանում կարող է լուրջ վնաս հասցնել դատական քննության արդարությանը (*Imbrioscia–ն ընդդ. Շվեյցարիայի* (վճիռ՝ 24 նոյեմբեր, 1993), պարբ. 36):

Ավելին՝ 6–րդ հոդվածով երաշխավորված իրավունքները կարող են կիրառվել նույնիսկ այն դեպքում, երբ անձին, ներպետական օրենսդրության համաձայն, պաշտոնապես չի ներկայացվել մեղադրանք: Դա նշանակում է, որ քրեական գործընթացի սկզբնական շրջանում իրականացվող վարույթները նույնպես կարող են տեղավորվել 6–րդ հոդվածի շրջանակի մեջ, օրինակ՝ անձի ձերբակալությունը (*B.–ն ընդդ.*

Ավստրիայի (վճիռ՝ 28 մարտ, 1990), պարբ. 48), ձերբակալության կամ խուզարկության սանկցիա տալը (*Eckle–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 15 հուլիս, 1982), պարբ. 73–75), ապացույց տալու պահանջ կիրառելը (*O'Halloran–ը և Francis–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 29 հունիս, 2007), պարբ. 35) կամ պաշտոնական այլ միջոցառումներ, որոնցում անուղղակիորեն ենթադրվում է քրեական պատասխանատվության հնարավորությունը, և որոնք նմանապես «էական ազդեցություն ունեն կասկածյալի վիճակի վրա»[64]: Այս սկզբունքը ներմուծել է նաև Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում: Օրինակ՝ Լևիկ Պողոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 22.12.2011 թ. որոշման մեջ (գործ թիվ ԵԿԴ/0136/11/11) դատարանը որոշեց, որ հանցադեպի հիմքով քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ անձի անունը նշելը ինքնին հանդիսանում է մեղադրանքի առաջադրում՝ այդ հասկացության ինքնավար մեկնաբանության հիմքով: Հիշենք, որ «մեղադրանք» հասկացության ինքնավար մեկնաբանությունը, ըստ Կոնվենցիայի, տրվել էր վերևում վկայակոչված Գագիկ Միքայելյանի գործով որոշման մեջ, համաձայն որի՝ անձի նկատմամբ մեղադրանքի առկայության մասին կարող է վկայել ոչ միայն նրան պաշտոնապես մեղադրանք առաջադրելու գործողությունը, այլ նաև դրանից առաջ անձի նկատմամբ այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա: Հենց այս նախադեպային դրույթի հիման վրա էլ Վճռաբեկ դատարանը սահմանեց «բերվածի» կարգավիճակը, որը նույնացրեց մեղադրյալի կարգավիճակին՝ իր ողջ հետևանքներով: Մասնավորապես դատարանը սահմանեց, որ անկախ այն հանգամանքից, որ բերվածը չունի կասկածյալի կամ մեղադրյալի ձևական կարգավիճակ, նրա համար պետք է ապահովել կասկածյալի կամ մեղադրյալի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա) իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը (բխում է Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 3(ա) ենթակետից),

[64] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 77-78.

բ) տեղեկացնելու իրեն բերման ենթարկելու մասին (բխում է ՀՀ Սահմանադրության 16–րդ հոդվածի 2–րդ մասի 2–րդ նախադասությունից),

գ) հրավիրելու իր փաստաբանին (բխում է ՀՀ Սահմանադրության 20–րդ հոդվածի 1–ին մասից),

դ) լռելու (բխում է ՀՀ Սահմանադրության 22–րդ հոդվածի 1–ին մասից):

(Տես *Գագիկ Միքայելյանի* գործով Վճռաբեկ դատարանի որոշումը, վկայակոչված վերևում, կետ 22):

Դրանք այն երաշխիքներն են, որոնք սահմանված են Կոնվենցիայի 6–րդ հոդվածով: Հետևաբար, բերման ենթարկելը և ոստիկանությունում պահելը հավասարազոր է մեղադրանքի առաջադրմանը, իսկ քանի որ այդ պահը Կոնվենցիայի 6–րդ հոդվածով սահմանված իրավունքների իրականացման մեկնարկային պահն է, ստացվում է, որ անձին բերման ենթարկելով և ոստիկանությունում պահելով՝ սկսվում է նրա նկատմամբ դատավարություն՝ ըստ Կոնվենցիայի: Այստեղից էլ բխում է իրավական հետևանք. առանց նշված երաշխիքների քննչական կամ դատավարական գործողություններ կատարելը հանգեցնում է այդ ընթացքում հավաքված փաստական տվյալների և ապացույցների անթույլատրելիությանը:

Այսպիսով՝ տվյալ բաժինը կշարունակի ներկայացնել քրեական գործով քննության այն տարրերը, որոնք իրենց վրա կրում են արդար դատաքննության իրավունքի ազդեցությունը՝ ներառյալ.

- կասկածյալների իրավունքները հարցաքննության ընթացքում,
- ապացույցների հավաքման այն մեթոդները, որոնք կարող են խաթարել արդար դատաքննությունը,
- քրեական գործով քննության ողջ գործընթացում կիրառելի ընդհանուր երաշխիքները:

Կարևոր եզրակացություններ մասնակիցների համար

Քննիչները պարտավոր են քրեական գործով քննությանը վերաբերվել այնպես, որպեսզի չվնասեն քրեական վարույթի արդարությանը: Արդար դատաքննության իրավունքը որպես այդպիսին կիրառելի է նախաքննության ընթացքում:

Ընդհանուր երաշխիքները

Ուստի քննիչները պարտավոր են իրենց աշխատանքը կատարել արագորեն և առանց քննության գործընթացի անհարկի ձգձգումների, որպեսզի հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ստանա դատական քննություն ողջամիտ ժամկետում: Համապատասխան ժամանակահատվածը սկիզբ է առնում մեղադրանքի առաջացման պահից, և «ողջամտությունը» գնահատվում է՝ ելնելով գործի հանգամանքներից՝ ներառյալ դրա բարդությունը և մեղադրյալի վարքագիծը:

Քննիչները պետք է ապահովեն, որ հանցանք կատարելու մեջ կասկածվող բոլոր անձինք համարվեն անմեղ, քանի դեռ նրանց մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով:

Քննիչները պետք է ապահովեն, որ հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձ իրավունք ունենա անհապաղ և իրեն հասկանալի լեզվով մանրամասնորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և պատճառի մասին:

Կասկածյալի և մեղադրյալի իրավունքները հարցաքննության ընթացքում

Բոլոր կասկածյալները և մեղադրյալները պետք է ունենան փաստաբանի աջակցությունը ստանալու իրավունքը: Ուստի փաստաբանի աջակցությունը ստանալու իրավունքից ցանկացած բացառություն պետք է հստակորեն սահմանափակված լինի և ունենա ժամկետային խիստ սահմանափակում:

Քննիչները պետք է կասկածյալներին տեղեկացնեն լռություն պահպանելու իրավունքի և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքի մասին և չպետք է ապացույցներ ստանալու նպատակով կիրառեն հարկադրանքի հնարքներ:

Ապացույցների հավաքման մեթոդներ, որոնք կարող են խաթարել արդար դատաքննությունը

Եթե ապացույցը ստացվել է խոշտանգմամբ կամ վատ վերաբերմունքով (ի խախտումն 3–րդ հոդվածի), դատաքննության մեջ դրա հետագա

օգտագործումը կհամարվի 6–րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի խախտում:

Քողարկված գործակալների կիրառությունը կարող է հանդուրժելի լինել, եթե դրա նկատմամբ գործում են հստակ սահմանափակումներ և երաշխիքներ. հանրային շահը չի կարող արդարացում լինել ոստիկանության կողմից հանցագործության դրդելու արդյունքում ստացված ապացույցները օգտագործելու համար, քանի որ այդպես վարվելը սկզբից ևեթ մեղադրյալի համար կառաջացներ արդար դատաքննությունից վերջնականապես զրկվելու վտանգ: Ուստի քննության հնարքները՝ ներառյալ քողարկված գործակալների կիրառությունը, պետք է սահմանափակվեն հանցավոր գործունեության կատարումը քննելով՝ հանցավոր գործունեության վրա չազդելով այնպես, որպեսզի անձին դրդեն հանցանք գործելու:

Անանուն ապացույցների, ներառյալ անանուն աղբյուրների օգտագործումը բացառված չէ: Այնուհանդերձ, նման ապացույցները չպետք է կիրառել որպես միակ հիմք, որի վրա քրեական վարույթի հետագա փուլում հիմնվելու է մեղադրական դատավճիռը:

2. ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՂՋ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԻՐԱՌԵԼԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Այս բաժնում կդիտարկվեն 6–րդ հոդվածով նախատեսված այն ընդհանուր բնույթի երաշխիքները, որոնք կիրառելի են քրեական գործով նախնական քննության ողջ գործընթացում, և որոնք քննիչները պետք է ապահովեն իրենց աշխատանքի ողջ ընթացքում: Դրանք ներառում են.

- նախնական քննության ողջամիտ տևողությունը,
- նախնական քննության ողջ ընթացքում անմեղության կանխավարկածը,
- ներկայացված մեղադրանքի մասին տեղեկանալու մեղադրյալի իրավունքը,
- պաշտպանությունը պատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ստանալու մեղադրյալի իրավունքը:

Ա. Քննության ողջամիտ տևողությունը

6–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձ ունի ողջամիտ ժամկետում դատական քննության իրավունք: Ուստի քննիչները պետք է իրենց աշխատանքը կատարեն արագորեն և առանց քննության գործընթացի անհարկի ձգձգումների: Դա ներառելու է քննիչների կողմից քննությունը պատշաճ կերպով կազմակերպելը և ծրագրելը, ինչպես նաև նախապես սահմանված և ողջամիտ ժամկետներով առաջնորդվելը:

Քրեական գործերի շրջանակում 6–րդ հոդվածի 1–ին մասում նշված «ողջամիտ ժամկետը» սկիզբ է առնում անձին մեղադրանք ներկայացնելու պահից, օրինակ՝ ձերբակալության օրվանից, անձին քրեական հետապնդման ենթարկելու մասին նրան պաշտոնապես ծանուցելու օրվանից կամ նախաքննություն սկսելու օրվանից (*Eckle–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 15 հուլիս, 1982), պարբ. 73, *Բ.–ն ընդդ. Ավստրիայի* (վճիռ՝ 28 մարտ, 1990), պարբ. 48): «Ողջամիտ ժամկետի» հաշվարկը կարող է սկիզբ առնել նախքան գործը քննող դատարանում գործի մուտք արվելը (*Deweer–ն ընդդ. Բելգիայի* (վճիռ՝ 27 փետրվար, 1980), պարբ. 42), օրինակ՝ անձին ձերբակալելու պահից, անձին մեղադրանք ներկայացնելու պահից կամ նախաքննություն հարուցելու պահից: Այսինքն՝ այնպես, ինչպես Վճռաբեկ դատարանը սահմանել է Լևիկ Պողոսյանի և Գագիկ Միքայելյանի որոշումներում, մեղադրանքի առկայության փաստը պետք է գնահատել ոչ թե փաստաթղթային, այլ բովանդակային իմաստով:

1–ին մասում նշված «ողջամիտ ժամկետի» հաշվարկը սկիզբ է առնում մեղադրանքի ստեղծման պահից, իսկ երբեմն էլ ՄԻԵԴ–ը ողջամիտ ժամկետի գերազանցում է արձանագրել անգամ այնպիսի գործի շրջանակում, որը նախաքննության փուլով ավարտվել է (*Viezzer–ն ընդդ. Իտալիայի* (վճիռ՝ 19 փետրվար, 1991, պարբ. 15–17):

Վարույթի տևողության ողջամտությունը պետք է որոշել՝ հաշվի առնելով գործի հանգամանքները, որոնք ենթակա են ամբողջական գնահատման (*տես, օրինակ՝ Viezzer–ն ընդդ. Իտալիայի* (վճիռ՝ 19 փետրվար, 1991), պարբ. 17, *Boddaert–ն ընդդ. Բելգիայի* (վճիռ՝ 12 հոկտեմբեր,

1992), պարբ. 36): Դատարանը հաշվի է առել այնպիսի գործոններ, ինչպիսիք են գործի բարդությունը, մեղադրյալի վարքագիծը և վարչական և դատական համապատասխան մարմինների վարքագիծը (*König–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 28 հունիս, 1978), պարբ. 99):

Գործի **բարդությունը** կարող է պայմանավորված լինել, օրինակ՝ մեղադրանքների քանակով, վարույթին մասնակցող անձանց՝ ամբաստանյալների և վկաների թվաքանակով կամ գործի միջազգային բնույթով (*Neumeister–ն ընդդ. Ավստրիայի* (վճիռ՝ 27 հունիս, 1968), պարբ. 20): Գործը կարող է խիստ բարդ լինել նաև այն դեպքում, երբ կասկածը վերաբերում է «սպիտակօձիք» հանցավորությանը, այսինքն՝ մի քանի ընկերությունների և բարդ գործարքների իրականացմամբ կատարված մեծամասշտաբ խարդախությանը, որի նպատակն է եղել խուսափել քննող մարմինների հսկողությունից, և որի համար անհրաժեշտ են հաշվապահական և ֆինանսական մեծածավալ փորձաքննություններ (*C.P.–ն և այլք ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 1 օգոստոս, 2000), պարբ. 30): Այնուհանդերձ, նույնիսկ երբ գործը որոշակիորեն բարդ է, ՄԻԵԴ–ը «ողջամիտ» չի համարի անգործության տևական ժամանակահատվածները (*Adiletta–ն ընդդ. Իտալիայի* (վճիռ՝ 19 փետրվար, 1991), պարբ. 17):

Վարույթի ողջամիտ տևողությունը գնահատելիս կարող է հաշվի առնվել նաև մեղադրյալի **վարքագիծը** (*Eckle–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 15 հուլիս, 1982), պարբ. 82): Եթե մեղադրյալը մտադրություն է ունեցել ձգձգելու քննությունը, ապա դա հաշվի կառնվի վարույթի տևողության ողջամտությունը գնահատելիս (*I.A.–ն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 23 սեպտեմբեր, 1998), պարբ. 121): Օրինակ՝ *I.A.–ն ընդդ. Ֆրանսիայի* գործով մեղադրյալը, ի թիվս այլ բաների, սպասել էր և տեղեկացել, որ նյութերը շուտով ուղարկվելու են դատախազին, որից հետո էր միայն ներկայացրել քննչական մի շարք լրացուցիչ գործողություններ կատարելու մասին միջնորդությունները:

Դատական նախադեպի օրինակներ

Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի (վճիռ՝ 10 հուլիս, 2012 թ.)

2005 թվականին հարուցվել է քրեական գործ, և դիմումատուին ներկայացվել է մեղադրանք, իսկ 2006 թվականի փետրվարին քրեական գործը կասեցվել է, և այդ օրվանից մինչև Եվրոպական դատարանի կողմից վճռի արձակման օրը որևէ քննչական կամ դատավարական գործողություն չի կատարվել: Եվրոպական դատարանը որոշեց, որ խախտվել է դիմումատուի ողջամիտ ժամկետում դատական քննության իրավունքը, քանի որ գործի քննության ձգձգումները վերագրվում էին նախաքննական մարմնին. փաստերը ցույց էին տալիս, որ հարուցված քրեական գործի և անձի մեղադրյալի կարգավիճակում գտնվելու պայմաններում վարույթ իրականացնող մարմինը ոչ մի քննչական գործողություն չի կատարել, և այդ իրավիճակը տևել է չափազանց երկար՝ վեց տարի: Հետևաբար, խախտվել է Կոնվենցիայի 6–րդ հոդվածի արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը՝ դատավարության ողջամիտ ժամկետները, քանի որ իրավասու պետական մարմինները դրսևորել և շարունակում էին դրսևորել անգործություն: Նման պայմաններում քրեական գործը կա՛մ պետք է կարճվեր, կա՛մ գործը պետք է ուղարկվեր դատարան՝ դատական քննություն իրականացնելու և գործին լուծում տալու համար:

***Viezzer–ն ընդդ. Իտալիայի* (վճիռ՝ 19 փետրվար, 1991)**

Գանգատաբերը պնդում էր, թե իր գործը չի քննվել 6–րդ հոդվածի 1–ին մասով պահանջվող «ողջամիտ ժամկետում»: Ժամանակահատվածը սկիզբ էր առել 1981 թ. մայիսի 21–ին, երբ գանգատաբերը ձերբակալվել էր, և վճիռ կայացնելու պահի դրությամբ այն դեռևս չէր ավարտվել: ՄԻԵԴ–ը համարեց, որ քննությունն անկասկած գործի փաստերով պայմանավորված որոշակի բարդություն ուներ, սակայն գանգատաբերը ոչինչ չէր արել այն դանդաղեցնելու ուղղությամբ, և ՄԻԵԴ–ը չէր կարող սույն գործով «ողջամիտ» համարել այն ժամանակահատվածը, երբ միայն նախնական քննության փուլը տևել էր 9 և կես տարի: Ուստի դատարանը եզրակացրեց, որ տեղի է ունեցել 6–րդ հոդվածի 1–ին մասի խախտում (պարբ. 15–17):

***Adiletta–ն ընդդ. Իտալիայի* (վճիռ՝ 19 փետրվար, 1991)**

ՄԻԵԴ–ը նշեց, որ գործը որոշակիորեն բարդ էր և հատկապես՝ նա-

խաքննության փուլում: Ավելին՝ գանգատաբերներն իրենք էլ դատաքննությունը հետաձգելու մասին ներկայացված մի քանի միջնորդություններով ձգձգումներ էին պատճառել: Այնուհանդերձ, դատարանը համարեց, որ չի կարող «ողջամիտ» համարել 13 տարի և 5 ամիս ժամանակահատվածը: Մասնավորապես վարույթը բնորոշվում էր անգործության տևական ժամանակաշրջաններով, օրինակ՝ գործը քննող դատավորին հանձնելու պահից մինչև մեղադրյալին և վկաներին հարցաքննելը տեղի էր ունեցել 5 տարվա ձգձգում (պարբ. 17):

Բ. Անմեղության կանխավարկածը

Արդար դատաքննության իրավունքի համար առաջնային նշանակություն ունի կասկածյալին և մեղադրյալին մինչև մեղքի ապացուցումն անմեղ համարելու երաշխիքը: Այս երաշխիքն ընձեռվում է 6–րդ հոդվածի 2–րդ մասով, որի համաձայն՝ «հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով»: ՀՀ Սահմանադրությամբ այս իրավունքն ամրագրված է 66–րդ հոդվածով, համաձայն որի՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Անմեղության կանխավարկածը իր ամբողջական հատկանիշներով սահմանված է նաև Քրեական դատավարության օրենսգրքի 18–րդ հոդվածով:

ՄԻԵԿ–ի 6–րդ հոդվածի 2–րդ մասի նպատակն է կանխել արդար դատաքննության խաթարումը վարույթի վերաբերյալ կանխակալ հայտարարություններ անելու միջոցով: Անմեղության կանխավարկածը խախտվում է, եթե պետական պաշտոնյան, օրինակ՝ քննիչը, կասկածյալի մեղավոր լինելու մասին կարծիք է հայտնում նախքան նրա մեղքն օրենքով սահմանված կարգով հաստատելը (*Ismoilov–ը և այլք ընդդ. Ռուսաստանի* (վճիռ՝ 24 ապրիլ, 2008), պարբ. 166): Հիմնարար կերպով պետք է տարբերակել անձին հանցանք կատարած լինելու մեջ պարզապես կասկածելու վերաբերյալ հայտարարությունը և օրինական ուժի

մեջ մտած մեղադրական դատավճռի բացակայության պայմաններում նրա կողմից տվյալ հանցանքը կատարած լինելու վերաբերյալ հայտարարությունը (*Ismoilov–ը և այլք ընդդ. Ռուսաստանի* (վճիռ՝ 24 ապրիլ, 2008), պարբ. 166, *Nešt'ák–ն ընդդ. Սլովակիայի* (վճիռ՝ 27 փետրվար, 2007), պարբ. 89):

Անմեղության կանխավարկածը հարգելու պարտավորությունը կիրառելի է գործին առնչվող պետական պաշտոնյաների, օրինակ՝ համապատասխան քննիչների նկատմամբ քրեական վարույթի նախնական քննության փուլում: ՄԻԵԴ–ն իսկապես վերահաստատել է, որ անմեղության կանխավարկածը խախտողը կարող է լինել ոչ միայն դատավորը կամ դատարանը, այլ նաև պետական իշխանության այլ մարմինները (*Allenet de Ribemont–ն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 10 փետրվար, 1995), պարբ. 36): 6–րդ հոդվածի 2–րդ մասով արգելվում են պետական պաշտոնյաների այնպիսի հայտարարությունները քննվող քրեական գործերի նկատմամբ, որոնք հանրությանը քաջալերում են հավատալու, որ կասկածյալը մեղավոր է, և նախադատում են փաստերի գնահատումն իրավասու դատական մարմնի կողմից (*Ismoilov–ը և այլք ընդդ. Ռուսաստանի* (վճիռ՝ 24 ապրիլ, 2008), պարբ. 161): Մասնավորապես քննիչների կողմից լրատվամիջոցներին արվող հայտարարությունները չպետք է խաթարեն անմեղության կանխավարկածը կամ անարդար դարձնեն դատաքննությունը[65]:

Դատական նախադեպի օրինակ

Saunders–ն ընդդ. Միացյալ Թագավորության (judgment of 17 դեկտեմբեր, 1996)

«Իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը չի կարող ողջամտորեն սահմանափակվել միայն իրավախախտման կատարումն ընդունելու վերաբերյալ կամ մեղադրական ցուցմունքներով: Հարկադրանքի արդյունքում ստացված ցուցմունքները, որոնք առաջին հայացքից չեն դիտարկվում որպես մեղադրական ապացույցներ կամ պարզապես հանդիսա-

[65] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 91.

նում են դիտողություններ կամ փաստերի մասին տվյալներ, քրեական դատավարության ընթացքում կարող են օգտագործվել մեղադրական նպատակներով, օրինակ՝ մեղադրյալի այլ հայտարարություններին հակազդելու, դատարանում նրա տված ցուցմունքը կասկածի տակ դնելու կամ այլ եղանակով վերջինիս նկատմամբ վստահությունը խաթարելու նպատակով: Ուստի, դատարանի կարծիքով, այս համատեքստում էականը դատական քննության ընթացքում հարկադրական եղանակով ստացված ապացույցների օգտագործման անթույլատրելիությունն է» (§ 68):

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի **(վճիռ՝ 02.10.2012)**

Դիմումատուի նկատմամբ կայացվել է քրեական գործը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում նախաքննական մարմնի կողմից: Սակայն այդ որոշումը ձևակերպվել է այնպես, որ կասկած չի առաջացել այն առումով, որ, դատախազի կարծիքով, դիմումատուն հանցանք է կատարել: Մասնավորապես դատախազը սկզբում ամփոփ տեսքով նշել է գործի փաստական հանգամանքները, ինչպես նշված են դիմումատուի դեմ ներկայացված մեղադրանքի մեջ, և ներկայացրել այնպես, որ ոստիկան Հ.Մ.–ն գործել է ինքնապաշտպանության նկատառումներով, իսկ դիմումատուն կանխամտածված մարմնական վնասվածքներ էր հասցրել նրան: Այնուհետև դատախազը եզրակացրել է, որ նպատակահարմար չէ քրեական հետապնդում իրականացնել դիմումատուի նկատմամբ, քանի որ կատարվածի պատճառով նա նույնպես ստացել է առողջական անվերականգնելի վնաս: Սա նշելով՝ դատախազը հստակորեն նշել է, որ «հանցանքը կատարելու ժամանակ [դիմումատուն] նույնպես ստացել է մարմնական վնասվածք և զրկանքների միջոցով քավել է իր մեղքը» բառերը (§ 189):

Allenet de Ribemont–ն ընդդ. Ֆրանսիայի **(վճիռ՝ 10 փետրվար, 1995)**

Բարձրաստիճան երկու ոստիկաններ մամլո ասուլիսի ընթացքում նշել էին, որ քիչ առաջ ձերբակալված գանգատաբերը սպանությունը դրդողներից մեկն է: Թեպետ 6–րդ հոդվածի 2–րդ մասը չի կարող կանխել քրեական գործով քննության առաջընթացի մասին հանրության տեղեկացումը, ՄԻԵԴ–ը հաստատեց, որ այն իրավասու մարմիններին

պարտավորեցնում է գործել այնպիսի հայեցողությամբ և շրջահայացությամբ, որն անհրաժեշտ է անմեղության կանխավարկածը հարգելու համար: Սույն գործով արված հայտարարության մեջ ուղղակիորեն նշվել էր, որ գանգատաբերը մեղավոր է: Դա ոչ միայն քաջալերել են հանրային համոզմունքը, որ գանգատաբերը մեղավոր է, այլ նաև կանխակալ ազդեցություն էր ունեցել վերաբերելի փաստերի անաչառ գնահատման վրա՝ այդ կերպ հանգեցնելով 2–րդ մասի խախտում արձանագրելուն (պարբ. 38):

Գ. Ներկայացված մեղադրանքի մասին տեղեկացվելու իրավունքը

6–րդ հոդվածի 3–րդ մասի (ա) կետի համաձայն՝ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին: Հետևապես, քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի հետ առնչվելիս քննիչները պետք է ապահովեն, որ նա տեղեկացված լինի իր՝ մեղադրյալ լինելու և իրեն ներկայացված մեղադրանքի մասին:

Քրեական գործերով մեղադրյալին ներկայացված մեղադրանքի վերաբերյալ լիարժեք, մանրակրկիտ տեղեկությունների և, հետևաբար, խնդրին դատարանի կողմից տրվելիք իրավական գնահատականի մասին տեղեկությունների տրամադրումը վարույթի արդարության երաշխավորման կարևորագույն նախապայման է (*Pélissier–ը և Sassi–ն ընդդ. Ֆրանսիայի* (Մեծ պալատի վճիռ՝ 25 մարտ, 1999), պարբ. 52, *Sejdovic–ն ընդդ. Իտալիայի* (Մեծ պալատի վճիռ՝ 1 մարտ, 2006), պարբ. 90):

Մեղադրյալին մեղադրանքի մասին տեղեկություններ տրամադրելիս քննիչները պետք է ապահովեն անձի տեղեկացումը ոչ միայն մեղադրանքի «հիմքի», այսինքն՝ այն գործողությունների մասին, որոնց կատարման մեջ նա մեղադրվում է և որոնց վրա հիմնված է մեղադրանքը, այլ նաև մեղադրանքի «բնույթի», այն է՝ այդ գործողություններին տրված իրավական գնահատականի մասին (*Mattoccia–ն ընդդ. Իտալիայի* (վճիռ՝ 25 հուլիս, 2000), պարբ. 59): Անհրաժեշտ չէ, սակայն, որ-

պեսզի առաջադրված մեղադրանքում նշված լինի, թե ինչ ապացույցների վրա է հիմնված մեղադրանքը[66]:

Թեպետ «հանգամանորեն» տեղեկացվելու շրջանակը կախված է գործի առանձնահատուկ հանգամանքներից, մեղադրյալին պետք է առնվազն բավարար տեղեկություններ տալ, որպեսզի նա լիարժեքորեն հասկանա իրեն ներկայացված մեղադրանքի ծավալը և համարժեքորեն պատրաստի իր պաշտպանությունը (*Mattoccia–ն ընդդ. Իտալիայի* (վճիռ՝ 25 հուլիս, 2000), պարբ. 60): ՀՀ քրեական դատավարությունում այս իրավունքի իրականացումը կատարվում է նախաքննության վերջում, երբ մեղադրյալին հնարավորություն է տրվում ուսումնասիրելու քրեական գործի նյութերը մինչև քրեական գործը դատարան ուղարկելը: Վճռաբեկ դատարանը 18.12.2009 թ. Ս. Նալբանդյանի գործով որոշման մեջ (վկայակոչված վերևում) արտահայտել է իրավական դիրքորոշում, որ կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի, ինչպես նաև գործի դատական քննության սահմանների առումով «մեղադրանք» հասկացությունը ներառում է նաև արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը (տե՛ս նաև Արթուր Սերոբյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007 թ. մարտի 30–ի ՎԲ–46/07 որոշումը): Մեղադրյալը արարքի քրեաիրավական որակմանը և դրա հիմքում ընկած փաստերին ամբողջական եղանակով ծանոթանում է նախաքննության վերջում քրեական գործի նյութերին ծանոթանալու փուլում: Հետևաբար, մինչև դատաքննության սկսելը, ինչպես նաև այնպիսի հանգամանքում, երբ դատաքննության ընթացքում մեղադրողը միջնորդում է փոխել արարքի քրեաիրավական որակումը Քրեական դատավարության օրենսգրքի 309[1] հոդվածի ընթացակարգով, մեղադրյալի համար պետք է ապահովվի մատչելիություն քրեական գործի ողջ նյութերին, իսկ մեղադրանքի քրեաիրավական որակումը դատաքննության ընթացքում փոփոխելիս՝ այդ գործողության հիմքում ընկած որոշումը՝ պայմանով, որ որոշումը մանրամասնորեն, այլ ոչ թե

[66] Council of Europe, Guide on Article 6: Right to a Fair Trial (criminal Limb), (2014 Council of Europe Publishing), պարբ. 236. Available at: http://www.echr.coe.int/Documents/Guide_Art_6_criminal_ENG.pdf [accessed 7 ապրիլ, 2016].

ընդհանրացված եղանակով արտահայտի նոր մեղադրանքի քրեաիրավական որակումը և փաստերը: Այս մոտեցումը ընկած էր վերևում վկայակոչված՝ Նալբանդյանի գործով որոշման հիմքում:

Դատական նախադեպի օրինակներ

***Mattoccia–ն ընդդ. Իտալիայի* (վճիռ՝ 25 հուլիս, 2000)**

Նախնական փուլում գանգատաբերը տեղեկացվել էր, որ մեղադրվում է 1985 թվականի նոյեմբերին Հռոմում R.–ին բռնաբարելու մեջ: 1986 թվականի հոկտեմբերի 23–ի մեղադրական եզրակացության մեջ լրացուցիչ մանրամասներ չէին ավելացվել: Քրեական հետապնդում իրականացնող մարմիններն այդ ժամանակ տեղեկացել էին, որ բռնաբարությունը կատարվել է 1985 թվականի հոկտեմբերին կամ 1985 թվականի նոյեմբերի 10–ին կամ մոտ օրերին: Նրանք նաև գիտեին, որ այն ենթադրաբար կատարվել էր երկրորդ հարկի զուգարանում: Այնուհանդերձ, նրանք առկա ոչ բոլոր տեղեկություններն էին հաղորդել գանգատաբերին: Նույնը նրանք չէին արել նաև 1986 թվականի սեպտեմբերի 30–ին նրա հարցաքննության ժամանակ, թեպետ նա ըստ երևույթին ընտրել էր պաշտպանության այնպիսի ռազմավարություն, որն ակնհայտորեն անբավարար էր. նա չէր անդրադարձել այն հարցին, թե արդյոք ինքն ընդհանրապես հնարավորություն ուներ մուտք գործելու դպրոցի տարածք (պարբ. 63):

Հաշվի առնելով, որ մեղադրանքի մեջ պարունակվող տեղեկությունները բնորոշվում էին անորոշությամբ՝ կապված ժամանակի և տեղի հիմնական տվյալների հետ, ինչպես նաև այն, որ այդ տեղեկությունները դատական քննության ընթացքում մի քանի անգամ հակասությունների տեղիք էին տվել և փոփոխվել, և հաշվի առնելով դատ նշանակելուց մինչև բուն դատական քննությունն անցած տևական ժամանակահատվածը (ավելի քան 3,5 տարի)՝ բուն դատական քննությունն անցկացնելու արագության համեմատության (մեկ ամսից պակաս), արդարության պահանջը ենթադրում էր, որ գանգատաբերին պետք է ավելի շատ հնարավորություն և պայմաններ տրված լինեին իրեն գործնական և արդյունավետ ձևով պաշտպանելու, օրինակ՝ ալիբին հաստատելու համար վկաներ հրավիրելու համար: Հաշվի առնելով այս ամենը՝ ՄԻԵԴ–ը

վճռեց, որ խախտվել են մեղադրյալի՝ իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքերի մասին հանգամանորեն տեղեկացվելու իրավունքը և իր պաշտպանության նախապատրաստման համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունքը (պարբ. 71–72):

Ավելին՝ տեղեկությունները պետք է մեղադրյալին ներկայացվեն ժամանակին, որպեսզի նա հասցնի պատրաստել իր պաշտպանությունը, որն էլ հենց 6–րդ հոդվածի 3–րդ մասի (ա) կետի հիմնական նպատակն է[67]:

Դատական նախադեպի օրինակներ

***Borisova–ն ընդդ. Բուլղարիայի* (վճիռ՝ 21 դեկտեմբեր, 2006)**

Գանգատաբերը պնդում էր, թե իրեն ոստիկանության մեքենա նստեցնելու պահին տեղյակ չի եղել իր դեմ սպասվող վարույթին: Ցանկացած պարագայում գանգատաբերին իր պաշտպանությունը պատրաստելու համար տրված ժամանակը մեկ–երկու ժամից ավելի չէր կարող եղած լինել, որի ընթացքում նա կա՛մ գտնվել էր դատարան տեղափոխվելու ճանապարհին, կա՛մ պահվում էր ոստիկանության բաժնի խցում (պարբ. 43): Այսպիսով՝ դատարանը վճռեց, որ իրեն ներկայացված մեղադրանքի մասին անհապաղ տեղեկացվելու գանգատաբերի իրավունքը խախտվել է (պարբ. 45):

Եվ վերջապես, եթե քննիչը հիմքեր է ունեցել՝ կարծելու, որ մեղադրյալը բավարար չափով չի տիրապետում տեղեկությունների հաղորդման լեզվին, իշխանությունները պարտավոր են նրա համար ապահովել թարգմանություն (*Brozicek–ն ընդդ. Իտալիայի* (վճիռ՝ 19 դեկտեմբեր, 1989), պարբ. 41): Մեղադրանքի թարգմանության հետ կապված ծախսը պետք է կրի պետությունը՝ 6–րդ հոդվածի 3–րդ մասի (ե) կետի համաձայն, որը երաշխավորում է թարգմանչի օգնությունն անվճար ստանալու իրավունքը (*Luedicke–ը, Belkacem–ը և Koç–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 28 նոյեմբեր, 1978), պարբ. 45):

[67] Council of Europe, Guide on Article 6: Right to a Fair Trial (criminal Limb), (2014 Council of Europe Publishing), պարբ. 249.

3. ԿԱՍԿԱԾՅԱԼԻ ԵՎ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննությունը քրեական գործով քննության կարևորագույն մասերից է, և խիստ կարևոր է այդ ժամանակահատվածում նրանց իրավունքների ապահովումը: Քննության ընթացքում հնարավոր վատ վերաբերմունքի վտանգներն արդեն իսկ քննարկվել են մեր կողմից: Այնուհանդերձ, կասկածյալի և մեղադրյալի արդար դատաքննության իրավունքները նույնպես կարող են որոշակի ազդեցություն կրել հարցաքննության և ապացույցների հավաքման ընթացքում, և այդ իրավունքները երկակի նշանակություն ունեն՝ ապահովելով կասկածյալին արդար դատաքննության ընձեռումը և միաժամանակ բացառելով վատ վերաբերմունքի կիրառությունը: Մասնավորապես քննիչները պետք է ծանոթանան փաստաբանի օգնությունը ստանալու իրավունքին և լռություն պահպանելու և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքին: Վերջապես, եթե ապացույցները ստացվել են վատ վերաբերմունքի միջոցով, ապա հետագայում դատական քննության ընթացքում դրանց օգտագործումը կհամարվի 6–րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի խախտում:

Հաշվի առնելով, որ ստորև մանրամասնված իրավունքները գործնականում մեծ նշանակություն չունեն, եթե անձը տեղյակ չէ դրանց մասին, դրանից բխող կարևոր իրավունք է «անհապաղ և իրեն հասկանալի լեզվով» իրավունքների մասին տեղեկացվելու իրավունքը: Ավելին՝ այդ տեղեկացումն ապահովելու համար «ոստիկանությունում ազատությունից զրկված անձանց անհրաժեշտ է ազատությունից զրկելու սկզբից ևեթ կանոնավոր կերպով տրամադրել հատուկ թերթիկ, որում միանշանակ կերպով շարադրված կլինեն այդ իրավունքները: Ավելին՝ համապատասխան անձանց կարելի է խնդրել, որպեսզի ստորագրեն հայտարարություն՝ հաստատելով, որ իրազեկվել են իրենց իրավունքների մասին»[68]:

[68] 12th General Report on the CPT's activities, CPT/Inf (2002) 15, paragraph 44.

Ա. Փաստաբանի օգնությունը ստանալու իրավունքը

1. Իրավունքի նպատակը

6–րդ հոդվածում ամրագրված արդարության հասկացությունը պահանջում է, որպեսզի կասկածյալը և մեղադրյալը քրեական վարույթի ողջ ընթացքում՝ ներառյալ նախնական քննության ընթացքում, օգտվեն փաստաբանի օգնությունից: Հետևապես, քննիչները չպետք է փորձեն կասկածյալներին կամ մեղադրյալներին հարցաքննել, եթե նախապես նրանց չեն տեղեկացրել փաստաբան ունենալու իրավունքի մասին:

Աշխատանք մասնակիցների համար

Մասնակիցները քննարկում են, թե իրենց կարծիքով ինչու է կարևոր փաստաբանի օգնությունը ստանալու իրավունքը կասկածյալին և մեղադրյալին ընձեռել քրեական գործով քննության հատկապես հարցաքննության և մինչդատական կալանքի ընթացքում:

Դասընթացավարը բացատրում է, որ տվյալ երաշխիքը հատկապես կարևոր է կալանքի տակ գտնվելու ընթացքում կասկածյալների և մեղադրյալների նկատմամբ վատ վերաբերմունքի կիրառությունը բացառելու և նման դեպքերի մասին հաղորդում ներկայացնելը քաջալերելու տեսանկյունից:

Խոշտանգման կանխարգելման եվրոպական հանձնաժողովն այս առումով պնդել է, որ ազատությունից զրկվելու սկզբից ևեթ անձը պետք է իր ազատությունից զրկման փաստի մասին երրորդ անձի ծանուցման իրավունք ունենա և փաստաբանով ապահովվելու առաջարկ ստանա[69]: «Վատ վերաբերմունք կիրառելու մտադրություն ունեցողներին տարհամոզելուց»[70] զատ՝ դրանք կարևոր մեխանիզմներ են խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի մասին բողոքները կամ այլ տեղեկությունները հաղորդելու և վատ վերաբերմունքի մասին ապա-

[69] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 82.
[70] 6th General Report on the CPT's activities, CPT/Inf (96) 21, paragraph 15.

ցույցները հավաքելու և իրավասու մարմիններին փոխանցելու համար[71]: Վճռաբեկ դատարանը Արայիկ Գզոյանի գործով կայացրած որոշման մեջ սահմանել է հավելյալ երաշխիք նման հանգամանքներում: Մասնավորապես դատարանը սահմանել է, որ եթե դատարաններն իրենց վարույթում գտնվող քրեական գործի քննության ընթացքում հայտնաբերում են հանցագործության ակնհայտ հատկանիշներ, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184–րդ հոդվածի 1–ին մասի հիման վրա պարտավոր են քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին (կետ 29): Նախկինում դատարանները նման հանգամանքներում բավարարվում էին այն հանգամանքով, որ ենթադրյալ խոշտանգման փաստի առթիվ իրականացված էր եղել գերատեսչական ծառայողական քննություն, մինչդեռ նշված որոշմամբ սահմանվեց առավել հիմնավոր երաշխիք խախտումների ու կամայականության դեմ: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ Գզոյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանը շեշտել է նաև, որ նախաքննության մարմնի դեմ ներկայացված բողոքները պետք է քննվեն անկախ մարմնի կողմից, որը չպետք է կապված լինի նախաքննության մարմնի հետ և պետք է առանձնացված լինի վերջինիցս: Այս հանգամանքը նշված է ՄԱԿ–ի Մարդու իրավունքների կոմիտեի 1998 թվականի նոյեմբերի 19–ի Եզրափակիչ դիտարկումներում, ինչպես նաև Ռամսահայն ընդդեմ Նիդերլանդների, Բատին և այլք ընդդեմ Թուրքիայի գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռներում: Ընդառաջ գնալով միջազգային իրավունքի նշված նորմերին՝ Հայաստանի Հանրապետությունը ստեղծել է Հատուկ քննչական ծառայությունը, որի իրավասության տակ են պաշտոնատար անձանց կողմից կատարված ենթադրյալ հանցագործություններով գործերի քննությունը:

ՄԻԵԴ–ը նշել է նաև, որ «ոստիկանությունում արգելանքի տակ գտնվելու ընթացքում խոշտանգման մասին բողոքները հիմնավորելը տուժողի համար ծայրահեղ դժվար է, եթե նա մեկուսացված է եղել արտաքին աշխարհից՝ չունենալով բժիշկների, փաստաբանների, ընտա-

[71] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 83.

նիքի անդամների կամ ընկերների հետ շփվելու հնարավորություն, ովքեր կկարողանային օժանդակություն ցուցաբերել և հավաքել անհրաժեշտ ապացույցները» (*Mammadov–ը (Jalaloglu–ն) ընդդ. Ադրբեջանի* (վճիռ՝ 11 հունվար, 2007), պարբ. 74):

Իրավաբանական ներկայացուցիչ ունենալու իրավունքը կարևոր է նաև քրեական վարույթի արդարությանն առնչվող 6–րդ հոդվածի իմաստով: 6–րդ հոդվածի 3–րդ մասի (գ) կետը մեղադրյալին ընձեռում է փոխկապակցված երեք իրավունքներ, որոնք են՝ «իրեն անձամբ պաշտպանելու» իրավունքը, «իր ընտրած պաշտպանների միջոցով» իրեն պաշտպանելու իրավունքը և «դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար բավարար միջոցներ չունենալու դեպքում անվճար նշանակված դատապաշտպան ունենալու իրավունքը, եթե դա պահանջում է արդարադատության շահը»: Դատաքննության ընթացքում իրավաբանական ներկայացուցչության բացակայության հարցին ՄԻԵԴ–ն անդրադարձել է *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված որոշման մեջ (31.03.2015 թ. թիվ 9935/06 և 23339/06):

2. Քննության ընթացքում իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի էությունը

Մեղադրյալին պետք է փաստաբան ունենալու հնարավորություն ընձեռել ողջամտորեն հնարավորինս շուտ: ՄԻԵԴ–ը համարել է՝ որպեսզի արդար դատաքննության իրավունքը բավականաչափ «գործնական և արդյունավետ» մնա, 6–րդ հոդվածի 1–ին մասով պահանջվում է փաստաբան ունենալու հնարավորությունը որպես կանոն ընձեռել ոստիկանության կողմից կասկածյալի առաջին իսկ հարցաքննության պահից, բացառությամբ, երբ յուրաքանչյուր գործի որոշակի հանգամանքներում հիմնավորվում է, որ այդ իրավունքը սահմանափակելու համար գոյություն ունեն ծանրակշիռ պատճառներ (*Salduz–ն ընդդ. Թուրքիայի* (Judgment 27 նոյեմբեր, 2008), պարբ. 55): Գագիկ Միքայելյանի գործով Վճռաբեկ դատարանի որոշումը, որի վերաբերյալ անդրադարձ կա վերևում, կոչված է ապահովելու այս, ինչպես նաև մի շարք այլ հիմնարար իրավունքների իրացման հնարավորությունը ոստիկանություն

բերման ենթարկված, սակայն դատավարական կարգավիճակ չստացած անձի համար: Ինչպես արդեն նշվեց վերևում, «բերված» կարգավիճակ սահմանելու նպատակներից մեկն այն է, որ եթե անձը բերվում է ոստիկանություն և երեք ժամ անց դատավարական կարգավիճակ չի ստանում, ապա այդ ժամկետի ավարտվելուց առավելագույնը մեկ ժամ անց անձը համարվում է բերված, որը ենթադրում է, որ անձը պետք է տեղեկացված լինի մի շարք հիմնարար իրավունքների մասին, այդ թվում նաև «հրավիրելու իր փաստաբանին»: Այս պահից բերման ենթարկված անձի նկատմամբ իրականացված քննչական կամ դատավարական գործողությունները առանց փաստաբանի կատարվելու դեպքում կհամարվեն անընդունելի: Ավելին՝ որոշ հանգամանքների ներքո, օրինակ, եթե նման գործողությունների արդյունքում ստացված ապացույցը ունենա առանցքային նշանակություն, դա կարող է հանգեցնել արդար դատաքննության իրավունքի խախտմանը և հանգեցնել անձի արդարացմանը:

Թեպետ այդ իրավունքը լուրջ պատճառների առկայության դեպքում կարող է սահմանափակվել (*John Murray–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 8 փետրվար, 1996), պարբ. 63), յուրաքանչյուր գործով պետք է պատասխանել այն հարցին, թե արդյոք սահմանափակումը, հաշվի առնելով վարույթի ամբողջությունը, մեղադրյալին զրկել է արդար դատաքննությունից (*John Murray–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 8 փետրվար, 1996), պարբ. 63): ՄԻԵԴ–ը պնդել է, որ փաստաբան ունենալու հնարավորությունից զրկելը հիմնավորելու համար ծանրակշիռ պատճառների գոյության դեպքում անգամ այդ սահմանափակումը, անկախ դրա հիմնավորումից, չպետք է անհարկիորեն նսեմացնի մեղադրյալի՝ 6–րդ հոդվածով ընձեռված իրավունքները (*Salduz–ն ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 27 նոյեմբեր, 2008), պարբ. 55): Փաստաբանի օգնությունն ընդհանուր առմամբ պարտադիր է հարցաքննության ժամանակ, որպեսզի բացառվի մեղադրյալի նկատմամբ «անշրջելի կանխակալ վերաբերմունքի» հնարավորությունը (*Salduz–ն ընդդ. Թուրքիայի* (Judgment 27 նոյեմբեր, 2008), պարբ. 55):

Թեպետ Խոշտանգման կանխարգելման եվրոպական հանձնաժողովն

ընդգծել է, որ «ոստիկանական քննության իրավաչափ շահերը պաշտպանելու նպատակով բացառիկ դեպքերում կարող է անհրաժեշտ լինել որոշակի ժամկետով հետաձգել ազատությունից զրկված անձին իր նախընտրած փաստաբանով ապահովելը», դա «չպետք է տվյալ ժամանակահատվածում անձին իսպառ զրկի փաստաբան ունենալու իրավունքից»[72]:

Ավելին՝ Խոշտանգման կանխարգելման եվրոպական հանձնաժողովը համարում է, որ այս իրավունքի իրականացման համար կարող են սահմանվել որոշակի բացառություններ, սակայն ոստիկանական քննության իրավաչափ շահերը պաշտպանելու համար անհրաժեշտ է այդ բացառությունները հստակորեն սահմանել և խստորեն սահմանափակել ժամանակի մեջ, ինչպես նաև դրանց կիրառությունն ուղեկցել համապատասխան երաշխիքներով (օրինակ՝ ազատությունից զրկելու մասին ծանուցելու ցանկացած ուշացում պետք է գրավոր արձանագրել՝ նշելով նաև դրա պատճառները, ուստի դրա համար պետք է նաև ստանալ գործին չառնչվող բարձրաստիճան ոստիկանի կամ դատախազի թույլտվությունը)[73]: Ուստի փաստաբանի օգնությունը ստանալու իրավունքի իրականացումից ցանկացած բացառություն պետք է հստակորեն սահմանափակված լինի, իսկ դրա կիրառությունը՝ ունենա ժամանակային խիստ սահմանափակում (*Salduz–ն ընդդ. Թուրքիայի* (վճիռ՝ 27 նոյեմբեր, 2007), պարբ. 54):

Դատական նախադեպի օրինակ

Galstyan–ն ընդդ. Հայաստանի **(վճիռ՝ 15 նոյեմբեր, 2007)**

91. Դատարանը նշում է, որ իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերը վկայում են, որ գանգատաբերը միանշանակ հրաժարվել է պաշտպանի միջոցով ներկայացված լինելու իր իրավունքից թե՛ մինչդատական վարույթում, թե՛ դատարանում (տե՛ս վերը՝ պարբերություններ 14 և 20)... սովորաբար այս հոդվածի պահանջներին չի հակասի, եթե մեղադրյալն իր կամքով ինքն է իրեն ներկայացնում, եթե, իհարկե, արդարադատության շահերն այլ բան չեն պահանջում: Սույն գործում

[72] 12th General Report on the CPT's activities, CPT/Inf (2002) 15, paragraph 41.
[73] 12th General Report on the CPT's activities, CPT/Inf (2002) 15, paragraph 43.

չկա որևէ ապացույց, որ գանգատաբերի՝ անձամբ ներկայացված լինելու ընտրությունն արդյունք է ֆիզիկական բռնության կամ սպառնալիքի: Ավելին՝ որևէ փաստ չկա, որը կհիմնավորի գանգատաբերի պնդումներն առ այն, որ իրեն «խաբեությամբ» համոզել են հրաժարվել պաշտպանից: … Ի վերջո՝ հաշվի առնելով, որ գանգատաբերը մեղադրվում էր ոչ ծանր հանցագործության մեջ, և նրա նկատմամբ առավելագույն պատիժը չէր կարող գերազանցել 15–օրյա կալանքը, դատարանը սույն գործով չի գտնում արդարադատության որևէ շահ, որը կպահանջեր պարտադիր իրավաբանական ներկայացվածություն ապահովել:

***John Murray–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 8 փետրվար, 1996)**

ՄԻԵԴ–ը նշեց, որ փաստաբան ունենալու իրավունքից զրկելը՝ անգամ ոստիկանական հարցաքննության առաջին 48 ժամերի ընթացքում, երբ այդ իրավիճակում անշրջելիորեն կանխակալ ազդեցություն կարող են կրել պաշտպանական կողմի իրավունքները, անկախ զրկելու հիմնավորումից՝ անհամատեղելի է մեղադրյալի՝ 6–րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին (պարբ. 66):

***Salduz–ն ընդդ. Թուրքիայի* (Judgment 27 նոյեմբեր, 2008)**

Գանգատաբերի փաստաբան ունենալու իրավունքը սահմանափակվել էր ոստիկանությունում նրա ազատությունից զրկման ընթացքում, քանի որ նա մեղադրվում էր պետական անվտանգության դատարանների իրավազորության շրջանակում տեղավորվող հանցանք կատարելու մեջ: Հետևանքը եղել էր այն, որ նա փաստաբան չէր ունեցել ոստիկանությանը, դատախազին և քննիչ–դատավորին ցուցմունք տալու ժամանակ (պարբ. 56): ՄԻԵԴ–ը համարեց, որ գանգատաբերի վրա անկասկած ազդել են փաստաբան ունենալու իրավունքի սահմանափակումները, քանի որ ոստիկանությանը տված նրա ցուցմունքն օգտագործվել էր նրան մեղավոր ճանաչելու համար (պարբ. 58): Այսպիսով՝ ՄԻԵԴ–ը եզրակացրեց, որ «թեպետ գանգատաբերը հնարավորություն ունեցել էր՝ գործը քննող դատարանում և հետագայում վերաքննիչ ատյանում վիճարկելու իր դեմ ներկայացվող ապացույցները, ոստիկանությունում ազատությունից զրկվելու ընթացքում փաստաբանի բացակայությունն

անշրջելիորեն ազդել էր նրա պաշտպանության իրավունքների վրա», ուստի տեղի էր ունեցել 6–րդ հոդվածի 3–րդ մասի (գ) կետի՝ 6–րդ հոդվածի 1–ին մասի հետ միասին վերցված խախտում (պարբ. 62–63):

***Averill–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 6 հունիս, 2000)**

Դատարանը վճռեց, որ ազատությունից զրկելու առաջին 24 ժամերի ընթացքում փաստաբան ունենալու իրավունքից զրկելը չէր համապատասխանում 6–րդ հոդվածի 3–րդ մասի (գ) ենթակետի պահանջին՝ հոդվածի 1–ին մասի պահանջի հետ միասին վերցրած: Գանգատաբերը պահվել և հարցաքննվել էր Հյուսիսային Իռլանդիայում ահաբեկչությամբ զուգորդված սպանություններին մասնակցություն ունեցած լինելու կասկածանքով: Այդ ժամանակահատվածում փաստաբան ունենալու իրավունքը չընձեռելը խաթարել էր նրա իրավունքները, քանի որ նման հանգամանքներում ազատությունից զրկված անձը կանգնում է ծանրագույն երկընտրանքի առջև՝ նա պետք է կա՛մ լռություն պահպանելու մասին որոշում կայացնի, որի հիման վրա դատական քննության ընթացքում եզրակացություններ կարող են կատարվել իր իսկ դեմ, կա՛մ պատասխանել հարցերի, որը նույնպես կարող էր խաթարել իր պաշտպանությունն այնպես, որ հետագայում բոլոր ատյաններում հնարավոր չլիներ վերացնել այդ միջամտությունների հետևանքները: Այդ երկընտրանքի գոյության հետևանքով մեղադրյալի իրավունքներն անշրջելիորեն խաթարելու հնարավորությունն արդար դատաքննության իմաստով նշանակում էր, որ գանգատաբերի համար փաստաբան ունենալու իրավունքը պետք է ապահովված լիներ նախքան նրա հարցաքննությունը սկսելը:

***Öcalan–ն ընդդ. Թուրքիայի* (Մեծ պալատի վճիռ՝ 12 մայիս, 2005)**

Մեծ պալատը հիմքեր չունեցավ չհամաձայնվելու պալատի այն եզրակացությանը, թե գանգատաբերի համար ոստիկանությունում ազատությունից զրկված լինելու ընթացքում փաստաբան չունենալը բացասաբար է ազդել նրա պաշտպանության իրավունքների վրա (պարբ. 131): Սույն գործի շրջանակում գանգատաբերին հարցաքննել էին փաստաբանի օգնության բացակայության պայմաններում՝ Թուրքիայում ոստիկանությունում ազատությունից զրկման մեջ գտնվելու ընթացքում, մոտ

յոթ օր շարունակ, որի ընթացքում նա մի քանի ցուցմունքներ էր տվել իր դեմ, որոնք հետագայում մեղադրական եզրակացության կարևորագույն տարրեր էին դարձել՝ նպաստելով նրա նկատմամբ մեղադրական դատավճռի կայացմանը:

***Yaremenko–ն ընդդ. Ուկրաինայի* (վճիռ՝ 12 հունիս, 2008)**

Դատարանը նշեց, որ տվյալ գործով գանգատաբերի նկատմամբ 1998 թվականի հանցագործության համար արձակված մեղադրական դատավճռի հիմնական հիմքը նրա ինքնախոստովանական ցուցմունքն էր, որը քննիչները ստացել էին փաստաբանի բացակայության պայմաններում, և որից գանգատաբերը հրաժարվել էր հաջորդ իսկ օրը, ապա նաև 2001 թվականի մարտից սկսած: Ուստի տեղի է ունեցել Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 3–րդ մասի (գ) կետի խախտում:

Մեղադրյալն իրավունք ունի հրաժարվելու փաստաբանի օգնությունը ստանալու իրավունքից, սակայն եթե անձը որոշում է չօգտվել այդ իրավունքից, որոշումը պետք է հիմնված լինի ազատությունից զրկված անձի ազատ կամքի վրա և չի կարող ենթարկվել անհարկի ազդեցության[74]:

Փաստաբան ունենալու իրավունքը պետք է ներառի գաղտնիության պայմաններում խորհրդակցելու իրավունքը, հարցաքննություններին իրավաբանական ներկայացուցչի ներկայության իրավունքը և ծառայությունների համար վճարել չկարողացող անձանց համար անվճար իրավաբանական օգնության հասանելիությունը[75]: 6–րդ հոդվածի 3–րդ մասի (գ) կետով երաշխավորվում է «գործնական և արդյունավետ» իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: Արդյունավետ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է, ի թիվս այլոց, իր փաստաբանի հետ գաղտնիության պայմաններում հաղորդակցվելու՝ մեղադրյալի իրավունքը: Պետությունը միայն բացառիկ հանգամանքներում իրավունք ունի սահմանափակելու ազատությունից զրկված անձի և նրա պաշտպանի միջև գաղտնի հաղորդակցությունը (*Sakhnovskiy–ն ընդդ. Ռուսաստանի* (Մեծ պալատի վճիռ՝ 2 նոյեմբեր, 2010), պարբ. 102):

---

[74] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers, (2013 Council of Europe Publishing), p. 86.

[75] 12th General Report on the CPT's activities, CPT/Inf (2002) 15, paragraph 41.

Բ. Լռություն պահպանելու և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը

Թեպետ 6–րդ հոդվածի տեքստում ուղղակիորեն նշված չէ ո՛չ հարցաքննվելիս լռություն պահպանելու իրավունքը, ո՛չ սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը, դրանք «համընդհանուր ճանաչում ստացած միջազգային չափանիշներ են, որոնք կազմում են 6–րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության բուն էությունը» (*John Murray–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 8 փետրվար, 1996), պարբ. 45): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18–րդ հոդվածը, որը սահմանում է անմեղության կանխավարկածը, սահմանում է լռելու իրավունքը այդ հոդվածի 2–րդ մասում, համաձայն որի՝ *«կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը»:* Գագիկ Միքայելյանի գործով Վճռաբեկ դատարանի որոշման 22–րդ կետում, որում սահմանված են, թե «բերվածին» ինչ հիմնարար իրավունքների մասին պետք է իրազեկել՝ անկախ նրա՝ կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունենալու հանգամանքից, լռելու իրավունքը սահմանված է հստակորեն և առանձին հիմքով (տես դ կետում): Լռելու իրավունքին Վճռաբեկ դատարանը անդրադարձել է նաև խափանման միջոց կալանավորման վարույթի շրջանակներում՝ սահմանելով, որ անձի լռելու և ցուցմունք չտալու հանգամանքը չի կարող գնահատող հատկանիշ համարվել անձի հնարավոր վարքագիծը կալանավորման հիմքերի շրջանակներում գնահատելու համար (Վճռաբեկ դատարանի Աշոտ Առաքելյանի գործով 23.07.2013 թ. որոշում, գործ թիվ ԵԿԴ/0580/06/09, կետ 20):

Լռություն պահպանելու իրավունքի և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքի տրամաբանությունը ներառում է մեղադրյալին ոչ պատշաճ հարկադրանքից պաշտպանելը, որի նպատակն է նվա-

զագույնի հասցնել արդարադատության սխալի վտանգը[76]: Ինչ վերաբերում է լռություն պահպանելու իրավունքին և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքին, ապա քննիչները չպետք է փորձեն մեղադրյալին ստիպել, որ նա տրամադրի ենթադրաբար իր կողմից կատարված հանցագործության ապացույցներ: Այնուհանդերձ, լռություն պահպանելու իրավունքը բացարձակ չէ (*John Murray–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 8 փետրվար, 1996), պարբ. 47):

Քրեական վարույթի ընթացքում գոյություն ունի կանխավարկած, որ դատախազությունը պետք է գործը ապացուցի քննիչի աշխատանքի օգնությամբ՝ չդիմելով հարկադրանք կամ բռնաճնշում ներառող մեթոդների: Մասնավորապես սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը սերտորեն կապված է անմեղության կանխավարկածի հետ և վերաբերում է «մեղադրյալի՝ լռություն պահպանելու ցանկությունը» հարգելուն (հարկադրանքի ուժով իրեղեն ապացույցներ, օրինակ՝ փաստաթղթեր, շնչառություն, ԴՆԹ–ի թեստավորման համար արյան և մեզի նմուշներ և մարմնի հյուսվածքներ ստանալու փոխարեն) (*Saunders–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 17 դեկտեմբեր, 1996), պարբ. 69), տ*Van Vondel–ն ընդդ. Նիդերլանդների* (վճիռ՝ 23 մարտ, 2006), պարբ. 1):

Դատական նախադեպի օրինակներ

***Funke–ն ընդդ. Ֆրանսիայի* (վճիռ՝ 25 փետրվար, 1993)**

Ֆրանսիայի մաքսային պաշտոնյաներն ապահովել էին պարոն Ֆունկեի դատապարտումը՝ նպատակ ունենալով ստանալու որոշակի փաստաթղթեր, որոնք իրենց կարծիքով գոյություն ունեին, սակայն դրանում նրանք հաստատ համոզված չէին: Չկարողանալով կամ չցանկանալով դրանք ձեռք բերել այլ միջոցներով, նրանք փորձել էին գանգատաբերին ստիպել, որպեսզի հենց նա տրամադրի իր կողմից ենթադրաբար կատարած հանցագործության ապացույցները: Դատարանը նկատեց, որ մաքսային օրենսդրության առանձնահատկություններով «չի կարող հիմնավորվել 6–րդ հոդվածում օգտագործված ձևակերպման ինքնու-

[76] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 81.

րույն իմաստով՝ հանցագործության մեջ մեղադրվող որևէ անձի իրավունքի այդպիսի ոտնահարումը, մասնավորապես՝ լռություն պահպանելու իրավունքը և սեփական անձի մեղքի ապացուցմանը չօգնելու իրավունքը» (պարբ. 44):

***Aleksandr Zaichenko–ն ընդդ. Ռուսաստանի* (վճիռ՝ 18 փետրվար, 2010)**

Գանգատաբերն իր լռություն պահպանելու իրավունքի մասին տեղեկացվել էր միայն սեփական անձի դեմ ցուցմունքը տալուց հետո, թեպետ ոստիկանությունը պարտավոր էր եղել գանգատաբերին տեղեկացնել սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքի և լռություն պահպանելու իրավունքի մասին: Այս գործով դատարանը վճռեց, որ գանգատաբերի կրած վնասը դատական քննության ընթացքում չէր վերացվել, և արձանագրեց 6–րդ հոդվածի 1–ին մասի խախտում (պարբ. 55–60):

Խաբեությամբ և նմանօրինակ այլ եղանակներով ստացված ապացույցների օգտագործումը նույնպես կարող է խնդիրներ առաջացնել հետագայում դատական քննության ժամանակ այդ կերպ ստացված ապացույցների թույլատրելիության կապակցությամբ[77]:

Դատական նախադեպի օրինակ

***Allan–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 5 նոյեմբեր, 2002)**

Գանգատաբերը, ով կասկածվում էր ավազակային հարձակման ընթացքում սպանություն կատարելու մեջ, բողոքում էր, որ 6–րդ հոդվածը խախտվել է, քանի որ իր խցում տեղավորվել էր ոստիկանության իրազեկիչ՝ կոնկրետ նպատակ հետապնդելով իրենից կորզելու կասկածվող հանցագործությունների մեջ իր մեղավորությունը հաստատող ապացույցներ: Արձանագրելով, որ տեղի է ունեցել արդար դատաքննության երաշխիքների խախտում, դատարանը վերահաստատեց, որ լռություն պահպանելու իրավունքի «նպատակն է պաշտպանել կասկածյալի՝

[77] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 82.

սեփական ցանկությամբ խոսելու կամ ոստիկանական հարցաքննության ժամանակ ցանկության դեպքում լռություն պահպանելու ազատությունը»: Այսպիսով՝ «ընտրության այդ ազատությունը փաստացի խաթարվում է, երբ կասկածյալն ընտրած է լինում լռություն պահպանել հարցաքննության ընթացքում, սակայն իշխանությունները խորամանկ հնարքով հետագայում կասկածյալից կորզում են ինքնախոստովանական ցուցմունք կամ նրա մեղքը հաստատող այլ ապացույցներ, որոնք ի վիճակի չեն եղել ստանալու հարցաքննության ժամանակ, և երբ այդ եղանակով ստացված ինքնախոստովանական ցուցմունքը կամ նման տվյալները դատական քննության ժամանակ օգտագործվում են որպես ապացույց»: Այս գործով դատարանը հաշվի առավ հատկապես այն փաստը, որ ոստիկանությունն իրազեկչին մարզել էր և ցուցում տվել՝ «հնարավոր ամեն ճնշում բանեցնել», ուստի իրազեկիչը պետք է ընկալվեր որպես պետության գործակալ, ով փաստացի լիազորված էր եղել հարցաքննելու գանգատաբերին:

Նման հանգամանքներում դատարանը եզրակացրեց, որ իրազեկչի ներգրավմամբ ստացված տեղեկությունները կարող էին համարվել գանգատաբերի կամարտահայտությունն արհամարհելու եղանակով ստացված տվյալներ, որոնց օգտագործումը դատարանում ոտնահարել էր գանգատաբերի լռություն պահպանելու իրավունքը և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը (պարբ. 60–63):

4. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԽԱԹԱՐԵԼ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս բաժնում ամփոփ ներկայացվում են քրեական գործով քննության շրջանակում ապացույցներ հավաքելու այն մեթոդները, որոնք կարող են առաջացնել կասկածյալի՝ 6–րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի խախտում:

Աշխատանք մասնակիցների համար

Մասնակիցները քննարկում են քննության այն հնարքները, որոնք իրենց կարծիքով կարող են ազդել կասկածյալի արդար դատաքննության իրավունքների վրա: Դասընթացավարն ընդգծում է վատ վերաբերմունքի, քննության գաղտնի հնարքների, օրինակ՝ ծպտյալ գործակալների և անանուն իրազեկիչների միջոցով ստացված ապացույցների թույլատրելիության խնդիրը: Նա մասնակիցներին քաջալերում է՝ քննարկելու այդ հնարքների կիրառության ոլորտում իրենց ունեցած փորձը:

Ա. Վատ վերաբերմունքի միջոցով ստացված ապացույցների թույլատրելիությունը

Ինչպես արդեն քննարկել ենք, խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կիրառությունն արգելված է կասկածյալների և մեղադրյալների հարցաքննության ողջ ընթացքում: Եթե ապացույցները ստացվել են խոշտանգման կամ վատ վերաբերմունքի միջոցով (ի խախտումն 3–րդ հոդվածի), ապա դատարանում դրանց հետագա օգտագործումը կհամարվի 6–րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի խախտում[78]: Իսկապես, ՄԻԵԴ–ը համարել է, որ «Կոնվենցիայով երաշխավորված կարևորագույն և բացարձակ իրավունքներից մեկի խախտման արդյունքում ստացված այդպիսի ապացույցի օգտագործումը մշտապես լուրջ խնդիրներ է առաջացնում վարույթի արդարության առումով» (*Gäfgen–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 1 հունիս, 2010), պարբ. 165), անգամ եթե ապացույցը վճռորոշ չի եղել մեղադրական դատավճիռ կայացնելու հարցում *(Jalloh–ն ընդդ. Գերմանիայի* (Մեծ պալատի վճիռ՝ 11 հուլիս, 2006), պարբ. 99 և 105):

Ուստի 3–րդ հոդվածի խախտման արդյունքում ստացված ցուցմունքների օգտագործումը քրեական վարույթում՝ անկախ վերաբերմունքը որպես խոշտանգում, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք

[78] J. Murdoch & R. Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers (2013 Council of Europe Publishing), p. 89.

դասակարգելուց, վարույթն ամբողջության մեջ ինքնաբերաբար դարձնում է անարդար և առաջացնում է 6–րդ հոդվածի խախտում (*El Haski–ն ընդդ. Բելգիայի* (վճիռ՝ 25 սեպտեմբեր, 2012), (*Gäfgen–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 1 հունիս, 2010), պարբ. 166):

Այս սկզբունքը կիրառելի է ոչ միայն այն ժամանակ, երբ 3–րդ հոդվածին հակասող վերաբերմունքից տուժողն անձամբ ամբաստանյալն է, այլ նաև՝ երբ դա վերաբերում է երրորդ անձանց (*El Haski–ն ընդդ. Բելգիայի* (վճիռ՝ 25 սեպտեմբեր, 2012), պարբ. 85): Մասնավորապես դատարանը վճռել է, որ խոշտանգմամբ ստացված ապացույցի օգտագործումը դատաքննության մեջ արդարադատության ակնհայտ ոտնահարում է, անգամ երբ այդ եղանակով կորզված ապացույցը ստացվել է երրորդ անձից (*Othman (Abu Qatada)–ն ընդդ. Միացյալ Թագավորության* (վճիռ՝ 17 հունվար, 2012), պարբ. 263 և 267):

Դատական նախադեպի օրինակներ

***Harutyunyan–ն ընդդ. Հայաստանի* (վճիռ՝ 28 հունիս, 2007)**

Գանգատաբերին և երկու վկաների խոշտանգման և ահաբեկման արդյունքում հարկադրել էին ցուցմունք տալ: Արձանագրելով 6–րդ հոդվածի խախտումը՝ դատարանը նկատեց, որ «մեղադրող ապացույցը, լինի դա խոստովանության կամ իրեղեն ապացույցի տեսքով, որը ձեռք է բերվել բռնությունների գործադրման միջոցով կամ դաժանությունների կամ այլ վերաբերմունքի, որը կարելի է բնութագրել որպես խոշտանգում, երբեք չպետք է դրվի տուժողի մեղքի ապացույցի հիմքում, անկախ նրա ապացուցողական նշանակությունից: Ցանկացած այլ եզրահանգում միայն կծառայի բարոյապես դատապարտելի արարքը անուղղակիորեն արդարացնելու համար, որը Կոնվենցիայի հոդված 3–ի հեղինակները ջանացել են արգելել, այլ կերպ ասած՝ «թույլ կտա դաժանությունների գործադրումն օրենքի քողի տակ» (պարբ. 63):

***Gäfgen–ն ընդդ. Գերմանիայի* (վճիռ՝ 1 հունիս, 2010)**

Ոստիկանությունը գանգատաբերից ապացույցները ստացել էր հարցաքննության այնպիսի մեթոդներով, որոնք 3–րդ հոդվածի իմաստով առաջացրել էին վատ վերաբերմունք: Վատ վերաբերմունքը ոստիկանության կողմից անհրաժեշտ էր համարվել՝ փորձելով փրկել երեխայի

կյանքը, ում գանգատաբերն արդեն սպանել էր, թեպետ այդ ժամանակ ոստիկանությունը չգիտեր դրա մասին: Ավելի ուշ գանգատաբերը խոստովանել էր և ոստիկաններին տարել էր այն վայրը, որտեղ թաքցրել էր տուժողի մարմինը: Հետագայում գանգատաբերը կրկնել էր իր խոստովանությունը դատախազի առջև: ՄԻԵԴ–ում նա փորձեց պնդել, թե տվյալ իրեղեն ապացույցը վճռորոշ էր եղել իր նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելու հարցում, քանի որ իրենից կորզված խոստովանության շրջանակում սեփական մեղքի ապացույցներն անհրաժեշտ նախապայման էին հանդիսացել սպանության համար իրեն մեղավոր ճանաչելում: Այնուհանդերձ, ՄԻԵԴ–ը վճռեց, որ հաշվի առնելով երկրորդ խոստովանությունը՝ վատ վերաբերմունքի միջոցով ստացված ապացույցները ներպետական դատարանների կողմից անթույլատրելի չճանաչելը և վարույթից չբացառելն ազդեցություն չէր ունեցել դատաքննության ընդհանուր արդարության վրա (պարբ. 162–188):

Բ. Քննության քողարկված հնարքները

ՄԻԵԴ–ն ընդունել է, որ իշխանություններին անհրաժեշտ է տրամադրության տակ ունենալ քննության հատուկ մեթոդներ՝ հատկապես կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի գործերի դեպքում: Այս առումով դատարանը վճռել է, որ քննության հատուկ մեթոդների՝ հատկապես քողարկված հնարքների կիրառությունն ինքնին չի խախտում արդար դատաքննության իրավունքը: Այնուհանդերձ, հաշվի առնելով այդ հնարքներից բխող՝ հանցագործություն սադրելու վտանգը՝ դրանց օգտագործումը պետք է տեղի ունենա հստակ սահմաններում (*Ramanauskas v. Lithuania* (Մեծ պալատի վճիռ՝ 5 փետրվար, 2008), պարբ. 51):

Այսպես՝ թեպետ քողարկված գործակալների կիրառությունը կարող է հանդուրժելի լինել, եթե դրա նկատմամբ գործում են հստակ սահմանափակումներ և երաշխիքներ, հանրային շահը չի կարող արդարացնել ոստիկանության կողմից հանցագործության դրդելու արդյունքում ստացված ապացույցների օգտագործումը, քանի որ այդպես վարվելը սկզբից

ևեթ մեղադրյալի համար կառաջացներ արդար դատաքննությունից վերջնականապես զրկվելու վտանգ (*Ramanauskas v. Lithuania* (Մեծ պալատի վճիռ՝ 5 փետրվար, 2008), պարբ. 54): Թեև կազմակերպված հանցավորության աճը անկասկած պահանջում է համապատասխան միջոցների ձեռնարկում, արդարադատության իրականացումը չի կարող զոհաբերվել հանուն նպատակահարմարության (Տեքսեյրա դե Կաստրոն ընդդեմ Պորտուգալիայի, թիվ 44/1997/828/1034, 09.06.1998):

Ուստի քննության հնարքները՝ ներառյալ քողարկված գործակալների կիրառությունը, պետք է սահմանափակվեն հանցավոր գործունեության կատարումը քննելով՝ հանցավոր գործունեության վրա չազդելով այնպես, որպեսզի անձին դրդեն հանցանք գործելու (*Teixeira de Castro v. Portugal* (վճիռ՝ 9 հունիս, 1998), պարբ. 38):

Քողարկված գործակալները պետք է իրենց գործունեությունը սահմանափակեն «հանցավոր գործունեությունն էականորեն պասիվ ձևով քննելով» (*Teixeira de Castro v. Portugal* (վճիռ՝ 9 հունիս, 1998), պարբ. 38):

Իսկապես, քրեական գործով քննության շրջանակում սադրանքը տեղի է ունենում այն դեպքում, երբ օպերատիվ աշխատակիցները «իրենց գործունեությունը չեն սահմանափակում հանցավոր գործունեությունն էականորեն պասիվ ձևով քննելով, այլ սուբյեկտի նկատմամբ գործադրում են այնպիսի ազդեցություն, որ դրդում են հանցանք գործելու, այսինքն՝ ապացույցներ տրամադրել և քրեական հետապնդում հարուցել» (*Ramanauskas v. Lithuania* (Մեծ պալատի վճիռ՝ 5 փետրվար, 2008), պարբ. 54–55):

Դատական նախադեպի օրինակներ

***Teixeira de Castro v. Portugal* (վճիռ՝ 9 հունիս, 1998)**

Քաղաքացիական հագուստ կրող երկու ոստիկաններ, գործելով որպես քողարկված գործակալներ, թմրադեղերի շրջանառության դեմ պայքարի գործողության շրջանակում մոտեցել էին գանգատաբերին և խնդրել իրենց հերոին մատակարարել: Գանգատաբերի անունը տրված էր եղել ոստիկաններին, և գանգատաբերը ձերբակալվել էր թմրադեղերի տոպրակները նրանց փոխանցելու պահին: Հենվելով 6–րդ

հոդվածի վրա՝ նա բողոքում էր, որ իր համար չի ապահովվել արդար դատաքննություն, քանի որ քաղաքացիական հագուստ կրող ոստիկաններն էին իրեն սադրել հանցանք գործելու՝ հանդես գալով սեփական նախաձեռնությամբ և որպես սադրիչ–գործակալներ, առանց դատական հսկողության: ՄԻԵԴ–ը համարեց, որ ոստիկանների վարքագիծը գերազանցել էր քողարկված գործակալների դեպքում ընդունելի չափանիշը, քանի որ «նրանք էին սադրել հանցագործությունը, և որևէ հիմքեր չկան՝ կարծելու համար, որ առանց այդ միջամտության հանցանքը կկատարվեր», և, ուրեմն, «գանգատաբերը սկզբից վերջնականապես զրկված էր եղել արդար դատաքննությունից» (պարբ. 39):

***Ramanauskas v. Lithuania* (Մեծ պալատի վճիռ՝ 5 փետրվար, 2008)**

Պարզելու համար, թե արդյոք քողարկված գործակալները սահմանափակել էին իրենց գործունեությունը «հանցավոր գործունեությունն էականորեն պասիվ ձևով քննելով», դատարանը քննարկեց հետևյալ հանգամանքները.

... Նախ՝ որևէ ապացույց չկա առ այն, որ գանգատաբերը նախկինում կատարել էր որևէ հանցագործություն՝ հատկապես կոռուպցիային առնչվող հանցագործություն: Երկրորդ՝ ինչպես վկայում են հեռախոսազանգերի ձայնագրությունները, գանգատաբերի և AZ–ի միջև բոլոր հանդիպումները տեղի էին ունեցել վերջինիս նախաձեռնությամբ... AZ–ի և VS–ի նախաձեռնությամբ տեղի ունեցած բոլոր շփումների ընթացքում նրանք գանգատաբերին կարծես ակնհայտ կերպով դրդել էին հանցավոր արարքներ կատարելու, թեպետ, ասեկոսեներից բացի, չկային օբյեկտիվ որևէ ապացույցներ առ այն, որ նա մտադիր է եղել կատարելու այդպիսի արարքներ:

Դատարանը համարեց, որ այդ եզրակացությունները բավարար էին՝ համարելու համար, որ տվյալ անձանց գործողությունները գերազանցել են գոյություն ունեցող հանցավոր գործունեությունը պարզապես պասիվ ձևով քննելու սահմանները (պարբ. 67–68).

Վանյանն ընդդեմ Ռուսաստանի (15 դեկտեմբեր, 2005)

«Եթե քողարկված ոստիկանի գործողությունները հանցանք հրահրելու տպավորություն են թողնում, և ոչինչ չի վկայում, որ հանցանքը տեղի կունենար առանց նրա միջամտության, նման գործողությունը դուրս է գալիս

քողարկված ոստիկանի գործողությունների թույլատրելի շրջանակներից և կարող է որակվել որպես հրահրում: Միջամտության նման եղանակը կարող է անդառնալիորեն խաթարել դատավարության արդարությունը» (§ 47):

Գ. Անանուն վկաներ

ՄԻԵԴ–ի նախադեպային պրակտիկան քրեական վարույթի նախնական քննության փուլում չի բացառում անանուն իրազեկիչներից ստացված ապացույցների վրա հենվելը: Քննիչների համար քրեական գործով քննության շրջանակում տեղեկությունների այդօրինակ աղբյուրները կարող են խիստ արժեքավոր լինել: Այնուամենայնիվ, քննիչները պետք է հաշվի առնեն այն սահմանափակումները, որոնք 6–րդ հոդվածի 3–րդ մասի (դ) կետով նախատեսվում են այդ ապացույցների օգտագործման նկատմամբ: Մասնավորապես անանուն իրազեկիչների օգտագործումը թեպետ կարող է իրավաչափ լինել քննության փուլում, այդ ապացույցները չպետք է օգտագործվեն որպես քրեական վարույթի հետագա փուլում մեղադրական դատավճռի հիմքում դրվող միակ կամ վճռորոշ հիմքը: Հետևապես, քննիչները պետք է ձգտեն հաստատող այլ ապացույցներ ձեռք բերելու, այլ ոչ թե փորձեն հիմնվել բացառապես անանուն իրազեկիչների տրամադրած տեղեկությունների վրա:

Այս խնդիրը ծագում է 6–րդ հոդվածի վերաբերյալ կոնվենցիոն մոտեցումից, համաձայն որի՝ սկզբունքորեն բոլոր ապացույցները պետք է ձեռք բերվեն մեղադրյալի ներկայությամբ հրապարակային դատաքննության ընթացքում՝ մրցակցային պայմաններում հակափաստարկելու հնարավորության նկատառումով: Սա չի նշանակում, սակայն, որ որպեսզի վկաների ցուցմունքներն օգտագործվեն որպես ապացույց, դրանք անպայման պետք է տրված լինեն միայն հրապարակային դատաքննության ընթացքում: Նախաքննության ընթացքում տրված նման ցուցմունքներն իբրև ապացույց դիտարկելը ինքնին չի հակասում [Կոնվենցիայի] 6–րդ հոդվածի 1–ին մասին և 3–րդ մասի (դ) կետին, եթե երաշխավորվել են պաշտպանական կողմի իրավունքները: Որպես կանոն՝ այս իրավունքների իրականացումը պահանջում է, որ մեղադրյալին համարժեք և պատշաճ հնարավորություն տրվի վիճարկելու և հար-

ցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկային, ինչպես ցուցմունք տալու պահին, այնպես էլ գործի քննության (*Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի*, գանգատ թիվ 25083/05, կետ 42): Նման իրավակարգավորման պայմաններում վճռորոշ է տվյալ ապացույցի ապացուցողական նշանակությունը. արդյոք այդ ապացույցը միակն է կամ վճռորոշ նշանակություն ունի ապացույցների զանգվածում:

ՀՀ վճռաբեկ դատարանը զարգացրել է ընդարձակ նախադեպային իրավունք վերը նշվածի առումով, որն ընդգրկում է նաև անանուն վկաներին: Մասնավորապես Համայակ Սահակյանի գործով որոշման մեջ (վճիռ՝ 20.10.2011 թ. գործ թիվ ԼԴ/0212/01/10) դատարանը մեկնաբանել է «չբացահայտված բովանդակությամբ ապացույց» և «չստուգված ապացույց» հասկացությունները, որոնք երկուսն էլ բարձրացնում են անանուն վկային դատարանում հարցաքննելու կամ չհարցաքննելու մասին հարցեր: «Չստուգված ապացույց» հասկացության առումով Վճռաբեկ դատարանը սահմանել է.

«Առանց պաշտպանության կողմին ծանոթանալու հնարավորություն տալու, առանց դատաքննության ընթացքում հետազոտվելու՝ որևէ ապացույց չի կարող դրվել մեղադրական դատավճռի հիմքում: Այլ կերպ՝ չբացահայտված բովանդակությամբ ապացույցի հիման վրա անձին դատապարտելու արգելքը բացարձակ բնույթ է կրում՝ անկախ ապացույցների ընդհանուր զանգվածում այդ ապացույցի դերից: Այդ արգելքը խախտելն ինքնին կազմում է քրեադատավարական օրենքի էական խախտում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398–րդ հոդվածի իմաստով» (կետ 16):

Այսինքն՝ դատաքննության ընթացքում պաշտպանական կողմի համար անանուն վկայի նախաքննական ցուցմունքի բովանդակության չբացահայտելը (դատավորին, դատախազին կամ պաշտպանական կողմին), անկախ տվյալ ցուցմունքի ապացուցողական նշանակությունից, դատաքննությունն ամբողջությամբ դարձնում է անարդար:

Ինչ վերաբերում է չստուգված ապացույցին, որը թեև բացահայտված բովանդակությամբ ապացույց է, սակայն պաշտպանական կողմը

հնարավորություն չի ունեցել ստուգելու այդ ապացույցը դատարանում հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) եղանակով, դատարանը սահմանել է հետևյալը.

«Հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հաստատուն նախադեպային իրավունքը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքով չապահովված ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելը քրեադատավարական օրենքի էական խախտում չի կազմի, եթե այդ ապացույցը վճռական կշիռ չունի անձի մեղքը հաստատող ապացույցների զանգվածում: Այլ կերպ՝ առանց հակընդդեմ հարցման՝ ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելու արգելքը բացարձակ բնույթ չի կրում» (կետ 23):

Այսինքն՝ անանուն վկայի նախաքննական ցուցմունքը, եթե հնարավոր չէ դատարանում կազմակերպել նրա հակընդդեմ հարցումը պաշտպանական միջոցների կիրառումով (Քրեական դատավարության օրենսգրքի 12–րդ գլխի կանոններով), պետք է ուղեկցվի այլ ապացույցներով, և դրանց համակցության մեջ նման ցուցումքը չպետք է վճռորոշ ապացուցողական նշանակություն ունենա, հակառակ դեպքում կխախտվի դատավարության արդարությունը Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին մասի հիմքով:

Անանուն վկաներին առնչվող օրինակներ նախադեպային պրակտիկայից

***Kostovski–ն ընդդ. Նիդերլանդների* (վճիռ՝ 20 նոյեմբեր, 1989)**

«Կոնվենցիան քրեական վարույթի քննության փուլում չի բացառում այնպիսի աղբյուրների վրա հենվելը, ինչպիսիք անանուն իրազեկիչներն են: Այնուհանդերձ, անանուն ցուցմունքները հետագայում որպես մեղադրական դատավճիռ կայացնելու համար բավարար ապացույց օգտագործելը սույն գործով այլ խնդիր էր առաջացրել: Այն առաջացրել էր պաշտպանության իրավունքի սահմանափակումներ, որոնք անհամատեղելի էին 6–րդ հոդվածում տեղ գտած երաշխիքների հետ: Կառավա-

ությունը փաստացի ընդունեց, որ գանգատաբերի մեղադրական դատավճռի կայացման հիմքում «վճռորոշ չափով» դրված էին եղել անանուն ցուցմունքները» (պարբ. 44): Ուստի դատարանը եզրակացրեց, որ տեղի է ունեցել 6–րդ հոդվածի 3–րդ մասի (դ) կետի խախտում՝ 6–րդ հոդվածի 1–ին կետի հետ միասին վերցված:

***Doorson–ն ընդդ. Նիդերլանդների* (վճիռ՝ 25 մարտ, 1996)**

ՄԻԵԴ–ը համարեց, որ ՄԻԵԿ–ը քննության նախնական փուլում չի բացառում այնպիսի աղբյուրների վրա հենվելը, ինչպիսիք անանուն իրազեկիչներն են: Այնուհանդերձ, այդ ցուցմունքների հետագա օգտագործումը գործը քննող դատարանի կողմից մեղադրական դատավճռի հիմքում կարող է ՄԻԵԿ–ի շրջանակում խնդիրներ առաջացնել: ՄԻԵԴ–ը վճռեց, որ թեպետ «6–րդ հոդվածն իսկապես ուղղակիորեն չի պահանջում, որպեսզի հաշվի առնվեն ընդհանրապես վկաների շահերը և մասնավորապես ցուցմունք տալու կանչված տուժողների շահերը», այնուհանդերձ, կարող են վտանգված լինել նրանց կյանքը, ազատությունը, անձնական անձեռնմխելիությունը և անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքը (8–րդ հոդված): Հետևապես, արդար դատաքննության սկզբունքներից բխում է նաև համապատասխան դեպքերում պաշտպանության շահերի և վկաների կամ ցուցմունք տալու կանչված տուժողների շահերի միջև հավասարակշռություն գտնելու պահանջը (պարբ. 70):

Սույն գործով Ամստերդամի դատարանը որոշել էր Y.15–ի և Y.16–ի (վկաներ) ինքնությունը չբացահայտել պաշտպանական կողմին՝ նրանց մեղադրյալի կողմից հնարավոր վրեժխնդրությունից պաշտպանելու նպատակով: Այսպիսով՝ թեպետ վկաների անանուն լինելը պաշտպանական կողմի համար առաջացրել էր դժվարություններ, Կոնվենցիայի խախտում չէր կարող արձանագրվել, եթե պարզվեր, որ «պաշտպանության գործունեության համար ծագած սահմանափակումները բավարար չափով հակակշռվել էին դատական իշխանությունների կիրառած ընթացակարգերով» (պարբ. 72): Ուստի 6–րդ հոդվածի խախտում չարձանագրվեց:

ԴԱՍԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկներ և գիտագործնական մեկնաբանություններ

- Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, Հատոր 1, ՀՀ դատավորների միություն, Երևան, 2011, էջեր 109–147:
- Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, Հատոր 2, ՀՀ դատավորների միություն, Երևան, 2013, էջեր 357–377:

Իրավական ակտեր

- ՀՀ Սահմանադրություն
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
- ՄԻԵԿ և կից արձանագրությունները

Դատական ակտեր

- ՀՀ վճռաբեկ դատարանի 22.12.2011 թ. որոշումը Լևիկ Պողոսյանի գործով
- ՀՀ վճռաբեկ դատարանի 18.12.2008 թ. որոշումը Գագիկ Միքայելյանի գործով
- ՀՀ Վճռաբեկ դատարանի 18.12.2009 թ. որոշումը Ս. Նալբանդյանի գործով
- ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թ. որոշումը Արթուր Սերոբյանի գործով
- ՀՀ վճռաբեկ դատարանի 23.07.2013 թ. որոշումը Աշոտ Առաքելյանի գործով
- ՀՀ վճռաբեկ դատարանի 20.10.2011 թ. որոշումը Համայակ Սահակյանի գործով

Եվրոպական դատարանի որոշումներ

- Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 3627/06
- Տեքսեյրա դե Կաստրոն ընդդեմ Պորտուգալիայի, թիվ 44/1997/828/1034
- Վանյանն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 3203/99
- Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 25083/05

Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ–97» ՍՊԸ–ի տպարանում
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+374 10) 23 25 28
էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak